

ՄԻՋԻՓՈՍԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Նվիրվում է Պասկալ Պիային

Միրտ իմ, մի ձգտիր հավերժական կյանքի, վայելիր ա՛յս կյանքի հաճույքները:
ՊԻՆԴԱՐՈՍ, ՊԻԹԻԱԿԱՆ ՆԵՐԲՈՂՆԵՐ, III, 62 63

ԱԲՍՈՒՐԴ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գիրքը մեր դարում այնքան արժարժված աբսուրդ զգացողության և ոչ թե փիլիսոփայության մասին է, որն առայժմ, անկեղծ ասած, ուսումնասիրված չէ: Ուրեմն, տարրական համեստությունը հենց սկզբից ստիպում է խոստովանել, թե ես որքան եմ պարտական որոշ ժամանակակից մտածողների: Ամենևին մտադրություն չունենալով թաքցնել այդ հանգամանքը, իմ գրքում ես պիտի նրանցից անընդհատ մեջբերումներ անեմ ու փորձեմ մեկնաբանել:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ աբսուրդը, որը մինչ այժմ ընկալվում էր որպես մտահանգում, այս էսսեում դիտվում է որպես մեկնակետ: Այդ իմաստով կարելի է ընդունել, որ իմ դատողությունները վերջնական չեն և առայժմ հայտնի էլ չէ, թե ինչ եզրահանգման են հասցնելու: Այստեղ դուք կգտնեք միայն հիվանդ ոգու անաղարտ նկարագրություն՝ առանց որևէ մետաֆիզիկայի ու նախապաշարման: Ահա՛ գրքի սահմաններն ու միակ խնդիրը:

ԱԲՍՈՒՐԴԸ ԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գոյություն ունի միայն մեկ, իսկապես լուրջ փիլիսոփայական խնդիր՝ ինքնասպանության խնդիրը: Վճռել՝ արժե՞, թե չարժե՞ ապրել այս կյանքը, նշանակում է պատասխանել փիլիսոփայության հիմնարար հարցին: Մնացածը՝ թե արդյո՞ք աշխարհը երեք չափում ունի, մտածողությունը ինը կամ տասը դասակարգում, երկրորդական են, լոկ խաղեր, նախ պետք է պատասխանել գլխավոր հարցին: Եվ եթե

Ճիշտ է, որ փիլիսոփան, ինչպես Նիցշեն էր նշում, իր նկատմամբ հարգանք առաջացնելու համար պիտի օրինակ ծառայի, անհրաժեշտ է մինչև գործնական քայլի անցնելը, տալ այդ հարցի պատասխանը: Միտքը շատ ճիշտ զգում է դա, բայց մտքով էլ ընկալելու համար անհրաժեշտ է լուրջ խորհրդածությունների դիմել:

Ես մտորում եմ, թե ո՞ր հարցն է ինձ ավելի կարևոր թվում ու պատասխանում՝ որը որ մղում է վճռական գործողությունների: Անձամբ ես գոյաբանական պատճառով մեռնող մարդ դեռևս չեմ տեսել: Գալիլեյը գիտական կարևոր հայտնագործություն էր կատարել, բայց հենց զգաց կյանքին սպառնացող վտանգը, զարմանալի հեշտությամբ իր գյուտից հրաժարվեց: Ինչ-որ տեղ, իհարկե, նա իրավացի էր: Նման ճշմարտության համար չարժեր ողջակիզվել: Ինչ տարբերություն՝ երկիրն է պտտվում արեգակի շուրջը, թե ընդհակառակը: Ավելի պարզ՝ հարցն ինքնին էական չէ: Այնինչ ես տեսնում եմ, թե որքան շատ մարդ է մեռնում՝ աննպատակ համարելով ապրելը: Կան նաև մարդիկ, որոնք զարմանալիորեն ինքնասպանություն են գործում իրենց կյանքի իմաստը դարձած գաղափարների ու պատրանքների համար (այն, ինչ կյանքի իմաստ է համարվում, կարող է նաև մեռնելու հիմնավոր պատճառ դառնալ): Ահա թե ինչու ես այդքան կարևոր եմ համարում կյանքի իմաստի հարցը: Բայց ի՞նչ պատասխան տալ դրան: Ըստ երևույթին նման էական խնդիրները (ես նկատի ունեմ նրանք, որոնք մահվան պատճառ են դառնում կամ բազմապատկած ապրելու ցանկությունը) արժարժեղու երկու մեթոդ գոյություն ունի՝ Լա Պալիսինը և Դոն Կիխոտինը: Միայն ակնհայտ ճշմարտությունների և զգացմունքների հավասարակշռումը մեզ հնարավորություն կտա հասնելու մտքի ու ապրումների հստակության: Այսքան պարզունակ և միաժամանակ պաթետիկ նյութը քննելիս, դասական դիալեկտիկական մտածողությունը, բնականաբար, իր տեղը պետք է զիջի ավելի հասարակ մտայնությանը, որը հենվում և՛ ողջամտության, և՛ ներքին համակրանքի վրա:

Ինքնասպանությունը միշտ էլ հասարակական երևույթ է համարվել: Մինչդեռ մենք, ընդհակառակը, նախ այն քննում ենք որպես անհատական մտածողության արդյունք, որը հանճարեղ ստեղծագործությունների նման հասունանում է սրտի անմատչելի խորքերում: Հաճախ ինքը՝ տվյալ անձնավորությունն էլ դա չի զգում և մի երեկո կրակում է գանգին կամ նետվում գետը: Ինձ պատմեցին ինքնասպանություն գործած մի բնակկառավարչի մասին, որը հինգ տարի առաջ կորցրել էր դստերը և այդ օրվանից խիստ փոխվել, դժբախտության պատճառով «հյուծվել»: Դժվար է ավելի ճշգրիտ բառ գտնելը: Հենց որ մարդն սկսում է մտածել, միտքը նրան հյուծում է: Սկզբում շրջապատը կարող է դա չնկատել էլ՝ որդն անհատի սրտում պետք է փնտրել:

Ամենակարևորը՝ հասկանալ այն մահացու խաղը, որը գոյության լույսից մղում է դեպի հանդերձյալ խավարը:

Ինքնասպանության շատ պատճառներ կան, ընդ որում ամենահայտնիներն ամենաբնորոշները չեն: Շատ հազվադեպ են մտածելով ինքնասպանություն գործում (չնայած դա ևս բացառված չէ): Նման ճակատագրական քայլը գրեթե երբեք չի ենթարկվում մտքի վերահսկողությանը: Թերթերը հաճախ են գրում «անձնական ողբերգության», «անբուժելի հիվանդության» մասին: Այս բացատրություններն, անշուշտ, ընդունելի են: Բայց դեռ պետք է ճշտել՝ նույն օրս հուսահատվածի բարեկամը հետն անտարբեր չի՞ խոսել, եթե այո, ուրեմն մեղավորը հենց նա է, որովհետև այդ մանրուքն էլ կարող է բավական լինել կուտակված հուսահատության ու հոգնության պոռթկման համար:

Սակայն, եթե դժվար է ճշգրիտ որսալ պահը, երբ միտքը հաշտվում է մահվան հետ, դիմում ճակատագրական քայլի, անհամեմատ հեշտ է փաստը կատարվելուց հետո եզրահանգումներ անելը: Ինքնասպանությունը, ինչ-որ տեղ, ինչպես երաժշտական թատերախաղերում է պատահում, հավասարագոր է խոստովանության: Վերջ տալ սեփական կյանքին, նշանակում է ընդունել, որ ապրելն անտանելի է ու անիմաստ: Միայն թե մեր եզրահանգումներով շատ հեռու չգնանք, վերադառնանք առօրյա բառերին, այսինքն պարզապես նշենք, որ սեփական կյանքին վերջ տալը այլ կերպ կարելի է կոչել «չարժե ապրել»: Իհարկե. ապրելը միշտ էլ դժվար է եղել: Մենք կյանքի պարտադրած պայմաններին ենթարկվում ենք տարբեր պատճառներով, որոնցից առաջնայինը սովորությունն է: Կամավոր մահը թելադրվում է, թեկուզ բնագոյաբար, այդ սովորության ծիծաղելիության, գոյության հիմնավոր պատճառների բացակայության, մեր առօրյա վազվզոցի անհեթեթության և տառապանքի ավելորդության գիտակցումից:

Ո՞րն է ուրեմն այդ անբացատրելի զգացումը, որով միտքը մեզ զարթնեցնում է ապրելու համար այնքան անհրաժեշտ թմբիրից: Աշխարհը, որքան էլ անհեթեթ մեկնաբանությունների թիրախ դառնա, հարազատ է մեզ: Ընդհակառակը, մարդն իրեն օտար է զգում տիեզերքում. երբ անսպասելի զրկվում է պատրանքներից ու իմացության լույսից: Ավելին, տիեզերքը վերածվում է անդարձ աքսորի, քանի որ տվյալ անձնավորությանը զրկում է կորցրած հայրենիքի հիշողություններից ու Ավետյաց երկրի հույսից: Աբսուրդի զգացողությունն ինքնին հենց այդ մարդու և կյանքի, դերասանի ու դեկորի միջև եղած կապի խզումն է:

Բոլոր առողջ մարդիկ երբեք մտածել են ինքնասպանության մասին, այնպես որ առանց լրացուցիչ բացատրությունների ընդունում են, որ ուղղակի կապ գոյություն ունի այդ զգացողության և անգոյության ձգտման միջև:

Այս էսսեի նյութը հենց արտուրդի և ինքնասպանության փոխհարաբերությունն է, պարզաբանումը, թե ինքնասպանությունը որքանով է արտուրդի առաջադրած խնդրի լուծումը: Սկզբունքորեն պետք է ենթադրել, որ ինքնախաբեությամբ չզբաղվող մարդն առաջնորդվում է այն ճշմարտություններով, որոնց հավատում է: Հետևաբար նրան պիտի ղեկավարի գոյության արտուրդի նկատմամբ ունեցած հավատը: Օրինական հետաքրքրասիրությամբ, շատ պարզ, առանց կեղծ պաթոսի կարելի է հարց տալ՝ նման եզրահանգումը նշանակու՞մ է արդյոք, որ այդ անորոշ իրավիճակից հնարավորին չափ արագ պետք է խույս տալ: Հասկանալի է, ես նկատի ունեմ այն մարդկանց, որոնք հաշտ են իրենք իրենց հետ:

Այսքան որոշակի դրված հարցը միաժամանակ կարող է թվալ հեշտ ու անլուծելի: Անշուշտ, սխալ է կարծել, որ պարզ հարցերն ունեն պարզ պատասխան, յուրաքանչյուր մատչելի միտք ծնում է նույնքան մատչելի հաջորդ միտքը: Խնդիրն այլ կերպ քննելով, անկախ այն բանից, մարդիկ ինքնասպանություն գործում են, թե ոչ, վերացականորեն կարելի է ընդունել, որ գոյություն ունի երկու փիլիսոփայական լուծում՝ «այո»-ն ու «ոչ»-ը: Անշուշտ, սա շատ հեշտ ձև է: Բայց չպետք է մոռանալ նաև նրանց, ովքեր հարցը առաջադրում են, բայց չեն կարողանում միանշանակ պատասխան ստանալ: Ես կատակ չեմ անում, խոսքը բացարձակ մեծամասնության մասին է: Կան նաև այնպիսիները, որոնք պատասխանում են «ոչ», բայց այնպես են վարվում, որ թվում է, ասել են «այո»: Իրոք, եթե նիցշեական չափանիշներով մոտենանք, նրանք այս կամ այն չափով ասում են «այո»: Եվ ընդհակառակը, ինքնասպանություն գործողների մեջ քիչ չեն այնպիսիները, որոնք հավատացած են, որ կյանքն իմաստ ունի: Նման հակասություններ հաճախ են հանդիպում: Նույնիսկ կարելի է ասել, որ դրանք տրվում են հենց այն պահին, երբ ողջամտությունն ավելի քան ցանկալի է դառնում: Մովորություն կա փիլիսոփայական տեսությունը համեմատել նրա հետ, ով այն քարոզում է:

Բայց անմիջապես չպետք է ավելացնել, որ կյանքի իմաստը ժխտող փիլիսոփաներից ոչ ոք, բացի գրական հերոս Կիրիլովից, առասպելական Պերեգրինոսից, հիպոթեզային Ժյուլ Լեքիեից, սեփական ցանկությամբ կյանքից չի հրաժարվել: Երբեմն ծիծաղելու համար հիշում են Շոպենհաուերին, որը ձոխ սեղանի շուրջը նստած ներբողներ էր ձոնում ինքնասպանությանը: Բայց այդտեղ ծիծաղելի

ոչինչ չկա: Կարևորը ոչ թե ողբերգականը լուրջ չընդունելն է, այլ ճակատագրական քայլի դիմող մարդու վրա թողած ազդեցությունը:

Այս հակասություններից ու անորոշություններից կարելի^օ է եզրակացնել, որ ոչ մի կապ գոյություն չունի կյանքի մասին տվյալ անձնավորության կարծիքի և այդ կյանքից հեռանալու համար կատարած քայլի մեջ: Չչափազանցենք:

Մարդու կապը կյանքի հետ ավելի գորեղ է, քան աշխարհի բոլոր դժբախտությունները: Մարմնի դատողությունը մտքի դատողության չափ կարևոր է, իսկ մարմինը, ինչպես հայտնի է, միշտ խուսափում է ինքնառնչանքից: Մենք վարժվում ենք ապրելու՝ մտածել սկսելուց շատ առաջ: Իր այս առաջնայնությունը մարմինը պահպանում է մեզ մահվանը մոտեցնող ողջ ժամանակահատվածում: Մի խոսքով, այս հակասության բուն էությունը ես կկոչեի խուսափում, որը և՛ ավելի է, և՛ պակաս զվարճությունից՝ այս բառի պակասության իմաստով: Ճակատագրական խուսափումը, որն իմ էսսեի երրորդ թեման է, հույսն է՝ մի այլ կյանքի հույսը (որին պետք է «արժանանալ») կամ նրանց խաբկանքը, ովքեր ապրում են ոչ թե հանուն կյանքի, այլ հանուն ինչ-որ մեծ գաղափարի (որը փառաբանում է այդ կյանքը, նրան իմաստ հաղորդում ու լքում):

Անշուշտ, այս ամենը խառնում է խաղաթղթերը: Մինչև այստեղ մենք բառախաղով էինք զբաղված, փորձում էինք ապացուցել, որ կյանքը անիմաստ համարելը հավասարագոր է նրան, որ չարժե ապրել: Իրականում այս երկու համակցությունների միջև ոչ մի պարտադիր կապ չկա: Պարզապես պետք չէ շփոթության մատնվել մինչ այժմ արտահայտված անորոշ, հակասական ու անհետևողական մտքերից, անդրադառնալ հարցի բուն էությանը: Մարդիկ անձնասպան են լինում, որովհետև չեն ուզում ապրել՝ սա անկասկած, ճշմարտության է, բայց ստերջ ճշմարտություն, տրուիզմ: Մի^օ թե հենց դրանով կյանքին հասցված վիրավորանքից, կեղծ լինելը բացահայտելուց կարելի է հետևցնել, որ այն իմաստ չունի: Մի^օ թե կյանքի աբսուրդ լինելը մեզ ստիպում է հույսի կամ ինքնասպանության միջոցով խույս տալ նրանից, մնացած ամեն ինչը մի կողմ դնելով սա պետք է քննել, պարզաբանել, բացահայտել: Աբսուրդը հանգեցնում է արդյոք մահվան՝ ահա՛ առաջնային խնդիրը, որը պետք է հետամտել, ուշադրություն չդարձնելով մտածողության մեթոդների ու զանազան մտախաղերի վրա: Տարբերակումները, հակասությունները, հոգեբանական վարժանքները, որ օբյեկտիվ՝ «անկանխակալ» մտածողությունը արժարժում է յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ, չեն կարող դեր խաղալ այս հետազոտության, ջղագրգիռ ուսումնասիրության ընթացքում: Այս դեպքում անհրաժեշտ է ոչ ավանդական, այսինքն տրամաբանական

մտածողություն: Դա հեշտ չէ: Դժվար չէ տրամաբանական լինելը, բայց մինչև վերջ տրամաբանական լինել գրեթե անհնար է: Մարդիկ, որոնք իրենց սեփական կյանքի վրա ձեռք են բարձրացնում, մինչև վերջ հավատարիմ են մնում ներքին զգացողությանը: Խորհրդածելով ինքնասպանության մասին, ես ուզում եմ տալ ինձ հետաքրքրող միակ հարցը՝ տրամաբանությունը մինչև մահ ուղեկցու՞մ է անձնասպանին: Դա ես կարող եմ իմանալ միայն զգացմունքների քառսից ձերբազատված, հստակատեսությամբ դասավորված տրամաբանությամբ, որի հիմքն արդեն ցույց էմ տվել: Հենց սա եմ ես կոչում արքայական տրամաբանություն, որին շատերը հետևում են, բայց չգիտեն, թե ինչ չափով են հավատարիմ մնում:

Երբ Կարլ Յասպերսը, բացահայտելով աշխարհի միասնությունը մտածողությամբ վերստեղծելու անհնարիությունը, գրում է՝ «այդ սահմանափակությունը ինձ վերադարձնում է դեպի իմ եսը, որտեղ այլևս չեմ թաքնվում իմ պատկերացումների ամբողջականությունը ներկայացնող օբյեկտիվ տեսակետի ետևում, որտեղ ոչ ես ինքս, ոչ էլ ուրիշի գոյությունը չեն կարող ինձ համար օբյեկտիվ լինել», իր շատ նախորդների նման հիշեցնում է այն անջուր անապատները, որտեղ միտքը մոտենում է կարողությունների սահմանագծին: Այո՞, նա կրկնում է իր այն նախորդներին, որոնք (բոլորն էլ) ձգտել են դուրս պրծնել սահմանափակումներից: Այդ վերջին շրջադարձին, ուր միտքը անվստահ տատանվում է, շատերն են հասնում, նույնիսկ ամենանհնազանդները: Այստեղ նրանք հրաժարվում են այն ամենից, ինչը չափազանց թանկ է եղել, անգամ սեփական կյանքից: ուրիշները՝ մտքի իշխանները, նույնպես հրաժարվում են, բայց հանգում մտավոր ինքնասպանության, բացահայտորեն ընդվզում մտքի դեմ: Այնինչ, ընդհակառակը, տեղանքի տարօրինակ բուսականությունը մոտիկից ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ջանք ներդնել, մտքի պարզությունը որքան հնարավոր է երկար պահպանել: Այս անմարդկային բեմախաղի հանդիսատեսները, որի ընթացքում ռեպլիկներ են փոխանակում արքայադր, հույսը և մահը, համառությունն ու խորաթափանցությունն են: Ա՛յդ դեպքում է միայն միտքն ի վիճակի վերլուծել նման պարզ, միաժամանակ նրբաճաշակ պարի շարժումները, մինչև որ ինքն էլ դրանց կենդանություն տա իր սեփական կյանքով:

ԱԲՍՈՒՐԴ ՊԱՏԵՐ

Խոր զգացումները, հանճարեղ ստեղծագործությունների նման, միշտ շատ ավելի մեծ իմաստ ունեն, քան հավակնում է արտահայտել միտքը: Անօրյա գործողություններում ու մտածողության մեջ ի հայտ են գալիս հոգու համակրանքներն ու համակրանքները, որոնք այնուհետև հասցնում են այնպիսի

հետևանքների, որ ինքը՝ հոգին անգամ չի զգում: Խոր զգացումներն իրենց մեջ մի ողջ տիեզերք են պարփակում, որը կարող է լինել վեհաշուք կամ խղճուկ: Այդ տիեզերքն իր տեսակի մեջ միակն է, ուր հախուռն զգացումները ի վիճակի են հարմար միջավայր գտնել: Կան խանդի, փառասիրության, անձնապաշտության, մեծահոգության տիեզերքներ: Տիեզերք, որն իր յուրահատուկ կառուցվածքն ու մետաֆիզիկական համակարգն ունի: Այն, ինչ ճշմարիտ է առանձին զգացումների համար, առավել քան ճշմարիտ կլինի դրանց սկզբնաղբյուրը հանդիսացող անորոշ, անբացատրելի, բայց ակնհայտ ապրումների համար, որոնք նույն չափով թե՛ «այստեղ» են, թե՛ ինչ-որ տեղ հեռուներում: Նույնը վերաբերում է այն ապրումներին, որոնք մեզ գեղեցիկը ընկալելու հնարավորություն են տալիս կամ աբսուրդի զգացողություն ծնում:

Աբսուրդի զգացողությունը կարող է առաջանալ ցանկացած մարդու հոգում, ցանկացած պահի, չնայած ինքնին իր տխուր մերկության, աղոտ լուսավորվածության պատճառով, գրեթե անորսալի է: Սակայն հենց այդ անորսալիությունը մտածելու տեղիք է տալիս: Ըստ երևույթին ճիշտ է, որ յուրաքանչյուր մարդ էլ ինչ-որ տեղ անձանոթ է մնում, ունենում է այնպիսի հատկանիշ, որին մեր միտքը չի՛ հասնում, որը չի՛ ընկալում: Սակայն գործնականում ես ճանաչում եմ մարդկանց, ճանաչում եմ իրենց վարվելակերպով, արարքների հանրագումարով ու հետևանքներով, որ նրանց այս կամ այն քայլը կարող է առաջացնել: Ճիշտ այդպես վերլուծության չենթարկվող բոլոր իռացիոնալ զգացումները գործնականում կարող են որոշակիացվել, գործնականում արժեվորվել, ընկալման հաջորդականությամբ հայտարարի բերվել: Նույնքան հնարավոր է զանազանել ու տարբերակել նրանց դրսևորումները, որոշակիացնել տիեզերքի սահմանագծերը: Անշուշտ, հարյուր անգամ բեմի վրա տեսնելուց հետո ես չեմ կարող պնդել, թե տվյալ դերասանին ավելի լավ եմ ճանաչում: Սակայն, երբ հարյուր անգամ խաղացած նրա դերերը հանրագումարի բերելուց հետո համենայնդեպս ասում եմ, որ նրան ավելի լավ եմ ճանաչում, շատ չեմ հեռանում ճշմարտությունից: Սա տարիմաստություն է, նաև առակ, որ հետևյալ բարոյախոսությունն ունի. մարդն իր խեղկատակություններով բացահայտվում է նույնքան, որքան զգացումների անկեղծ պոռթկումներով: Նույնը վերաբերում է մարդկային ապրումներին, որոնց խորքերը հնարավոր չէ թափանցել, բայց պատկերացում, գեթ մասամբ, կարելի է կազմել այդ ապրումների դրսևորումը հանդիսացող արարքներով ու արտահայտված մտքերով:

Այսպիսով, ես ինչ-որ մեթոդ եմ առաջադրում, որը, սակայն, ոչ թե ճանաչողական, այլ վերլուծական է: Ճանաչողական մեթոդն ունի իր մետաֆիզիկան,

ուզած-չուզած բացահայտում է այն եզրահանգումները, որոնց մասին, թվում էր, նախօրոք գաղափար էլ չունեիր: Այդպես մեզ գրքի առաջին էջերից հայտնի է դառնում, թե ինչ է լինելու վերջը: Նման փոխկապն անխուսափելի է պարզապես: Իսկ դա նշանակում է, որ իմ ներկայացրած մեթոդը անսքող բացահայտում է ճշմարիտ ճանաչողության անհնարինությունը և հնարավորություն տալիս միայն ընկալելու արտաքին երևույթները, ընդհանուր հոգեվիճակը:

Այդ դեպքում հնարավոր է, որ մենք կարողանանք բացահայտել աբսուրդի անորսալի զգացումն իր տարբեր, բայց համենայնդեպս նմանատիպ դրսևորումներում. ինչպիսիք են, օրինակ, մտավոր գործունեությունը, ապրելու արվեստը կամ արվեստն ընդհանրապես: Աբսուրդի տարրերն այնտեղ ակնհայտ են ի սկզբանե, ու ի վերջո մենք ճիշտ է, աստիճանաբար, բայց հասնում ենք աբսուրդի տիեզերքին, այն մտահանգմանը, որն այս աշխարհում լուսավորում է իր հայտնագործած սիրելի ու դաժան դեմքերը:

Բոլոր մեծ նախաձեռնություններն ու մտքերը աննշան սկիզբ ունեն: Հանձարեղ ստեղծագործությունները հաճախ ծնվում են փողոցի անկյունադարձում կամ ռեստորանի մուտքի մոտ: Աբսուրդն էլ է այդպես: Աբսուրդի աշխարհը, ավելի քան որևէ այլ բան, իր վեհությունների հիմքում խղճուկ սկզբնավորում ունի: Երբ մեզ ուղղված՝ ի՞նչ էս մտածում հարցին պատասխանում ենք «Ոչ մի բան», մասամբ թերևս ձևացնում ենք: Միրահարվածներին դա լավ հայտնի է: Մակայն, եթե պատասխանն անկեղծ է, եթե ներկայացնում է այն բացառիկ հոգեվիճակը, ուր դատարկությունը դառնում է պերճախոս, գործողությունների առօրյա շղթան կտրվում է, և սիրտը զուր կապող օղակ է փնտրում, այդ պատասխանը կարող է աբսուրդի առաջին արտահայտությունը լինել:

Պատահում է, որ ծանոթ բեկորները փլվում են: Արթնանալ, տրամվայ, չորս ժամ գրասենյակ կամ գործարան, ճաշ, տրամվայ, չորս ժամ աշխատանք, ընթրիք, քուն, և այսպես՝ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, նույն ուրբաթ, անընդհատ, ահա՛ այն ուղին, որով շատ հեշտ է ընթանալը: Բայց հանկարծ ծնվում է «ինչու՞» հարցը: Ամեն ինչ սկսվում է անորոշ տաղտուկի զգացողությունից: «Մկսելը» կարևոր է: Տաղտուկը մեքենայական կյանքի ավարտն է, միաժամանակ գիտակցության շարժիչը: Տաղտուկը գիտակցությանը թմբիրից հանելով կամ կարող է անզգայաբար վերադարձնել իր նախնական վիճակին, կամ վերջնականապես սթափեցնել, որի հետևանքը լինում է ինքնասպանությունը, երբեմն էլ հակումը դեպի բնականոն կյանք: Ինքնին տաղտուկն ինչ-որ արգահատելի բան ունի, մեր դեպքում, սակայն, պետք է խոստովանեմ, որ բարերար դեր է խաղում: Չէ՞

որ ամեն ինչ սկսվում է գիտակցությունից, արժեքավորվում նրանով: Այս նկատառումներն ինքնին յուրահատուկ չեն, բայց բավականաչափ հստակ են, որն առայժմ անհրաժեշտ է արտուրդի արմատների ընդհանուր բացահայտման համար: Մեր ուսումնասիրման հիմքը պարզ «մտահոգությունն» է:

Այդպես, ուրեմն, ժամանակը մեզ իր հետ տանում է մեր առօրյա, միօրինակ կյանքի հունով: Բայց վաղ թե ուշ հասնում է մի պահ, երբ հարկ է լինում սեփական ուսերին առնել ժամանակի բեռը: Մենք ապրում ենք ապագայով՝ «վաղը», «ավելի ուշ», «երբ հնարավորություն ունենաս», «տարիներ անց կհասկանաս» և այլն: Այս անհետևողականությունը հիանալի է, չէ՞ որ ի վերջո վրա է հասնում մահը: Սակայն մի օր մարդը նկատում է, որ ինքն արդեն երեսուն տարեկան է: Նա իրեն հավատացնում է, որ դեռ երիտասարդ է, բայց միաժամանակ հարաբերության մեջ է մտնում ժամանակի հետ, ժամանակի մեջ գրավում իր տեղը: Իր իսկ խոստովանությամբ գտնվում է ժամանակի կորագծի որոշակի կետի վրա: Մարդը գիտակցում է, որ ինքը պատկանում է ժամանակին և այդ մտքից սարսափած՝ ժամանակը համարում իր վատթարագույն թշնամին: Նա ամբողջ կյանքում երազել էր վաղվա օրը, մինչդեռ այժմ հասկանում է, որ պետք է փախուստ տա դրանից: Մարմնի հենց այս ըմբոստացումն է արտուրդը:

Մենք մի աստիճան էլ ենք ցած իջնում և հայտնվում անձանոթ աշխարհում, նկատում, որ այն «տափակ» է, քարերը մեզ օտար են, և ինչպիսի համառությամբ են բնությունը, ամենասովորական բնանկարները մեզ ժխտում: Ամեն գեղեցկություն իր խորքում անմարդկային ինչ-որ բան ունի, և հենց որ մենք գիտակցում ենք դա, շրջապատում ամեն ինչ՝ բլուրները, երկնքի քնքշությունը, ծառերի ուրվագծերը կորցնում են մեր հաղորդած պատրանքային իմաստը և մեզնից ավելի են հեռանում, քան կորուսյալ դրախտը: Աշխարհի նախնական ատելությունը միլիոնավոր տարիներ անցնում, գալիս գտնում է մեզ: Մի ակնթարթում մենք դադարում ենք հասկանալ աշխարհը, քանի որ դարեր շարունակ այն ընկալել ենք նախապես մեր իսկ ստեղծած կերպարներով ու կերպարանքներով. նման կեղծիքի ուժ, սակայն, այլևս չունենք: Աշխարհը խույս է տալիս մեզնից, քանի որ գտնում է ինքն իրեն: Մեր սովորությամբ գունազարդված դեկորներն ստանում են իրենց նախկին տեսքը: Նրանք հեռանում են մեզնից: Ճիշտ այդպես, հանդիպելով ծանոթ կնոջ, որին սիրել ենք ամիսներ, անգամ տարիներ, հանկարծ նկատում ենք, թե որքան օտար է դեմքը, և այդ հայտնագործությունն անսպասելիորեն դուր է գալիս մեզ, որովհետև ավելի է խորացնում մեր միայնակության զգացումը: Այս դեպքում, սակայն, դրա ժամը դեռ չի

հնչել, առայժմ աշխարհի տափակության և օտարության մեջ մենք տեսնում ենք միայն արքայությունը:

Մարդիկ նույնպես անմարդկային ինչ-որ բան ունեն իրենց մեջ: Հասակատեսության որոշ ժամերի նրանց մեքենայական շարժումները, անհեթեթ մնջախաղը ակներև են դարձնում գոյության անիմաստությունը: Մարդը հեռախոսով խոսում է ապակեպատ խցիկում: Մենք նրան չենք լսում, բայց տեսնում ենք անհասկանալի դիմախաղն ու ինքներս մեզ հարցնում, թե ինչու՞ է ապրում: Մարդու մեջ ի հայտ եկած այս անմարդկայնության հանդեպ ծնվող խորշանքը, անդունդը, որի մեջ գլորվում ենք՝ գիտակցելով, թե ով ենք մենք, մի խոսքով «սրտխառնուքը»՝ ինչպես դիպուկ կոչել է ժամանակակից մի հեղինակ, ինքնին արքայություն է: Այդպես արքայություն է հայելու միջոց կամ սեփական լուսանկարներից մեջ նայող ծանոթ անծանոթի դեմքը:

Վերջապես ես հասնում եմ մահվանն ու ապրումներին, որ այն առաջացնում է: Մահվան մասին ամեն ինչ կարծես ասված է, պաթետիկ ոճերի դիմելն էլ պատշաճ չէ: Այնուամենայնիվ զարմանալի է, որ յուրաքանչյուրն ապրում է այնպես, ասես մահվան մասին «ոչ լսել է, ոչ իմացել»: Անշուշտ, մահվան փորձառություն ոչ ոք չունի: Չէ՞ որ փորձառություն, այս բառի լիարժեք իմաստով, կոչվում է միայն այն, ինչը մենք ապրում ենք, ընկալում: Այնինչ, մահվան մասին խոսելիս մենք նկատի ենք ունենում միայն ուրիշի փորձը: Բայց դա ինքնին փորձի փոխարինում է, մտասնեռում, որը երբեք լիովին չի կարող համոզիչ լինել: Ապրումի պայմանականությունը առավել ևս վստահություն չի ներշնչում: Իրականում, սարսափ առաջացնում է մահվան իրողության մաթեմատիկական ճշգրտությունը: Ժամանակի ընթացքը մեզ վախեցնում է հենց նրանով, որ խնդրի առաջադրմանը հաջորդում է անխուսափելի լուծումը: Հոգու մասին բոլոր գեղեցիկ դատողություններն այս դեպքում, գոնե որոշ ժամանակ, բոլորովին այլ, հակառակ փաստարկների են բախվում: Այսինքն՝ անշարժ արմնի մեջ, որը ապակին անգամ չի արձագանքում, հոգի չի կարող լինել: Այս փաստի պարզությունն ու որոշակիությունն է հենց արքայության զգացողության բովանդակությունը: Ճակատագրի մահացու լույսի տակ ի հայտ է գալիս թափված ջանքերի անօգտակարությունը: Մարդկային ճակատագիրը տնօրինող այս դասը մաթեմատիկայի առջև ոչ մի բարոյականություն, ոչ մի ջանք արդարացում չունեն:

Նորից եմ կրկնում՝ այս ամենն ասված է, ասված է շատ անգամ: Ես սահմանափակվում եմ լոկ հապճեպ թվարկումով, ուշադրություն հրավիրելով հանրահայտ թեմաների վրա, որոնք առկա են բոլոր գրականությունների ու փիլիսոփայությունների, անգամ առօրյա զրույցների մեջ: Այնպես որ այդ ամենը նորից հայտնագործելու հարկ չկա: ուղղակի պետք է նման ճշմարտությունները մեր

համոզմունքը դառնան, որպեսզի տանք առաջնահերթ կարևորության հետևյալ հարցերը: Նորից շեշտեմ՝ ինձ հետաքրքրում է ոչ այնքան արտուրդի բնույթը, որքան հետևանքները: ուրեմն, եթե փաստերը համոզիչ են, ի՞նչ հետևություններ պիտի անել, ոչինչ աչքաթող չանելու համար մինչև ու՞ր պիտի հասնել: Պե՞տք է կամովին հաշտվել մահվան հետ, թե անկախ ամեն ինչից հուսալ:

Նախ պատասխանը որոնեք մտավոր ոլորտներում:

Տրամաբանության առաջնահերթ խնդիրը ճշմարիտը կեղծից զանազանելն է: Բայց հենց որ միտքը խորասուզվում է ինքն իր մեջ, հակասություններ են առաջանում, չնայած դա անհնար է ապացուցել: Դարեր ի վեր ոչ ոք չի կարողացել Արիստոտելի նման պարզ ու համոզիչ փաստարկել. «Ի վերջո բոլոր նման տեսակետների հետ անխուսափելիորեն կատարվում է այն, ինչը հայտնի է բոլորին՝ իրենք իրենց հակասում են: Իրոք, նա, ով պնդում է, թե ամեն ինչ ճշմարիտ է, ճշմարիտ է հռչակում նաև իրենին հակասող տեսակետը, այսինքն ժխտում իր պնդածը (չէ՞ որ հակառակ տեսակետը իրենի ժխտումն էր): Իսկ նա, ով պնդում է, որ ամեն ինչ կեղծ է, նշանակում է կեղծ է հռչակում նաև իր պնդածը: Իսկ եթե նրանք փորձեն բացատրություններ անել առաջին դեպքում հակառակ պնդման համար, հայտարարելով, որ գոյություն ունեն չափազանց մեծ թվով ճշմարիտ և կեղծ պնդումներ, քանի որ այն բանի պնդումը, թե ճշմարտության ճշմարտացի պնդումն է ճշմարտությունը՝ մեզ կարող է տանել անվերջություն»:

Այս արատավոր շրջանը իր տեսակների մեջ առաջինն է միայն, ուր միտքը սուզվելիս կորչում է գլխապտույտ պարույրների լաբիրինթոսում: Հենց իրենց պարզության պատճառով այդ պարադոքսները դառնում են անժխտելի: Ինչպիսի բառախաղի, մտավոր սադրանքների էլ դիմենք, չենք կարող չընդունել, որ հասկանալ ամենից առաջ նշանակում է միավորել: Նույնիսկ իր ամենաբարձր ոլորտները հասած միտքը ձգտելով պարզության, ջանում է միաձուլվել չըմբռնվող զգացման հետ: Աշխարհը ընկալելու համար մարդը պետք է այն մարդկային դարձնի, դրոշմի իր կնիքով: Կատվի և մրջյունների տիեզերքները տարբերվում են իրարից՝ «Ամեն միտք մարդկային է» տրուիզմն այլ իմաստ չունի: Այդպես էլ իրականությունն ընկալել ձգտող միտքը գոհունակություն կզգա միայն այն դեպքում, երբ իրականությունը կարողանա մոտեցնել սեփական հասկացություններին: Եթե մարդն իմանար, որ տիեզերքը նույնպես ի վիճակի է սիրել ու տառապել, կհաշտվեր իր ճակատագրի հետ: Եթե միտքը երևույթների փոփոխվող հայելու մեջ կարողանար հայտնաբերել հավերժական կապեր, որոնք մի սկզբունքով միավորեին այդ ամենն ու իրենք իրենց, կարելի կլիներ խոսել մի երջանկության մասին, որի համեմատությամբ դրախտի

արքայության առասպելը խղճուկ նմանակում կթվար: Մարդկային դրամայի էությունը հենց այդ միասնության կարոտն է, Բացարձակի ձգտումը: Սակայն, ընդունելով հանդերձ կարոտի առկայությունը, չենք ուզում ասել, որ նրան իսկույն պետք է հագուրդ տրվի: Որովհետև բավական է, որ մենք հաղթահարենք ցանկությունը ձեռք բերածից բաժանող խորխորատն ու Պարմենիդեսի հետ ընդունենք իրականության Միակությանը (ինչպիսին էլ այն լինի), կրնկնենք ծիծաղելի հակասության մեջ, քանի որ երբ միտքը հաստատում է իրականության բացարձակ միակությունը, հենց դրանով ցույց է տալիս իրենց տարբերությունն ու իրականության բազմազանությունը, որ ինքը հավակնում էր հաղթահարել: Այսպես առաջանում է երկրորդ արատավոր շրջանը, ու մարում են մեր հույսերը:

Այս ամենն, անշուշտ, ավելի քան ակնհայտ է: Նորից եմ կրկնում, ինքնին ոչ թե դրանք են հետաքրքիր, այլ դրանցից բխող հետևությունները:

Ես գիտեմ ես մեկ ակնհայտ ճշմարտություն՝ մարդը մահկանացու է: Սակայն մատների վրա կարելի և հաշվել այն մտածողներին, ովքեր դրանից արել են բոլոր, անգամ ծայրահեղ եզրահանգումները: Այս էսսեի ելակետը մշտական տարբերությունն է մեր իրական և թվացյալ իմացությունների, գործնական համաձայնության և ձևական անգիտության միջև, որի հետևանքով էլ շարունակում ենք ապրել գաղափարներով, որոնք եթե խորապես կարողանայինք ընկալել, հիմնովին կվերափոխվեր մեր ողջ կյանքը: Մտածողության այս անելանելի հակասությունը լիովին բացահայտում է այն անջրպետը, որ գոյություն ունի մեր և մեր սեփական գործունեության միջև: Մինչ միտքը հույսերի անշարժ աշխարհը սուզված լքում է, ամեն ինչ կարգավորվում և կանոնավորվում է իր երազած միասնականությամբ: Բայց մտքի առաջին իսկ շարժման դեպքում այդ աշխարհը ճեղքվում է, փլուզվում: Գիտակցությունը հայտնվում է անթիվ-անհամար փայլփլուն բեկորների դիմաց: Իհարկե, մեր սրտերը հանգստացնող նախնական միասնականությունը վերականգնելու համար բեկորները մեկ-մեկ նորից ի մի բերելիս կարելի է հուսահատվել:

Երկար դարերի համառ ուսումնասիրությունների, փիլիսոփաների աներևակայելի ջանքերի շնորհիվ մենք հասկանում ենք, որ մտածողության նման հուսահատությունը անհիմն չէ: Բացի իսկական ռացիոնալիստներից, մնացած բոլորն այսօր արդեն գիտակցում են ճշմարիտ իմացության անմատչելիությունը: Եթե հարկ լիներ գրել մարդկային մտքի ուսուցողական պատմությունը, այն կդառնար միմյանց հաջորդող գղջման ու սեփական անգործության գիտակցության անվերջանալի շղթա:

Իրոք, ինչի մասին, ինչ առիթով կարող եմ ասել. «Ես դա գիտեմ»: Իմ սրտի^օ, որի խփոցն զգում եմ կրծքիս տակ, հետևաբար և հավաստում, որ այն գոյություն ունի: Ինձ շրջապատող աշխարհի^օ, որը կարող եմ շոշափել ու պնդել, որ նույնպես գոյություն ունի: Հենց այսքանով էլ ավարտվում են իմ գիտելիքները, մնացածը մտասուեռում է: Բավական է այդ «ես»-ը բռնելու փորձ անել, որի գոյությանը վստահ եմ, որոշակիացնելու ամփոփ դարձնել, որպեսզի մատների արանքից հոսող ջրի նման չքվի: Ես կարող եմ մեկ առ մեկ նկարել այն կերպարանքները, որոնցով նա հանդես է գալիս, ավելացնել այն ամենը, ինչ ուրիշներն են տվել՝ դաստիարակություն, ծագում, դյուրաբորբոքություն և համակերպվածություն, ազնվականություն և ստորաբարձություն: Սակայն այս տարբեր կերպարները չեն համատեղվում: Նույնիսկ ինձ պատկանող սիրտը չի ենթարկվում որևէ բնորոշման: Իմ գոյության փաստի և այն իմաստի միջև, որ ես ջանում եմ հաղորդել, այնպիսի խորխորատ գոյություն ունի, որն անհնար է լցնել: Ես ինքս ինձ միշտ օտար կմնամ: Հոգեբանության, ինչպես նաև տրամաբանության մեջ ճշմարտություններ կան, բայց ոչ երբեք ճշմարտություն: Սոկրատյան «Օանիր զքեզ»-ը նույնքան արժեք ունի, որքան մեր խոստովանահայրերի «Բարիք գործիր»-ը: Երկուսն էլ արտահայտում են մեր՝ իմացության կարոտն ու անգիտությունը: Այս ամենը լուրջ նյութերի հետ կատարվող անլուրջ խաղեր են և արդարացի են այն չափով, որ չափով որ մոտավոր են մեր պատկերացումները նրանց մասին:

Ահա, օրինակ, ծառը. ես գիտեմ, որ անհարթ է բունը, ահա ջուրը, ինձ հայտնի է առանձնահատուկ համը: Խոտերի և աստղերի բույր, գիշերներն ու երեկոներ՝ երբ սիրտը խոկում է, կարո՞ղ եմ ժխտել այս աշխարհի գոյությունը, որի ուժն ու հզորությունը այդքան լավ եմ զգում: Մինչդեռ երկրային ողջ գիտությունը չի կարող ինձ համոզել, որ այդ աշխարհն իմն է: Դուք ինձ մանրամասն նկարագրում եք այն, սովորեցնում համակարգել, դուք ինձ թվարկում եք օրենքները, և ես, որ ծարավի եմ գիտելիքների, ընդունում եմ՝ բոլորն էլ ճիշտ են: Դուք մասնատում եք նրա կառուցվածքը, և իմ հույսն աճում է: Վերջ ի վերջո հայտնում եք, որ այդ չնաշխարհիկ, գունագեղ տիեզերքը կարելի է տրոհել ատոմի, սա էլ իր հերթին էլեկտրոնի: Այս ամենը լավ է, ես շարունակությանն եմ սպասում: Եվ դուք ինձ հետ խոսում եք անտեսանելի միջնոլորակային համակարգերի մասին, որտեղ նույնպես էլեկտրոնը պտտվում է իր միջուկի շուրջը: Դուք ուզում եք աշխարհն ինձ ներկայացնել մեն մի հատիկ պատկերի օրինակով, և նոր միայն ես գլխի եմ ընկնում, որ այդ ամենը հանգում է ինձ անմատչելի պոեզիայի: Ժամանակը չէ՞ արդյոք վրդովվելու: Չէ՞ որ դուք մի տեսությանը փոխարինել եք մի ուրիշով: Այսպիսով, գիտությունը, որ ինձ բան պիտի սովորեցնեք, սահմանափակվեց հիպոթեզով, խոստացված պարզությունը՝

փոխաբերությամբ, անորոշությունը որոշակիացվեց արվեստի ստեղծագործությամբ: Այդ դեպքում ինչու՞ էի ես այդքան ջանք թափում: Բլուրների նուրբ ուրվագծերը, իմ բաբախող սրտի վրա դրված երեկոյի ձեռքն ինձ անհամեմատ շատ բան են սովորեցնում: Եվ ես վերադառնում եմ այնտեղ, որտեղից սկսել էի: Ես հասկանում եմ, որ գիտության օգնությամբ կարող եմ ճանաչել, թվարկել երևույթները, բայց աշխարհը չընկալել: Եթե անգամ ինձ հաջողվի շոշափել ցանկացած մակերևույթի բոլոր ելևէջները, իմ գիտելիքները չեն ավելանա: Իսկ դուք ինձ առաջարկում եք ընտրություն կատարել ոչինչ չսովորեցնող, բայց հավաստի նկարագրության ու հիպոթեզի միջև, որը հավակնում է սովորեցնել, բայց հավաստի չէ: Օտարացած ինքս ինձնից ու աշխարհից, օժտված մի մտածողությամբ, որն ինչ-որ բան հաստատելուն պես ժխտում է, ինքս էլ եմ զարմանում իմ ճակատագրի վրա: Քանի որ իմ իմացության ծարավն անընդհատ բախվում է ամեն գրոհի դիմադրող խուլ պատերի, ինձ վիճակված է անդորր գտնել միայն իմացությունից ու կյանքից հրաժարվելու դեպքում: Ցանկանալ նշանակում է պարադոքսներ ստեղծել: Ամեն ինչ արված է, որ ստեղծվի թունավոր մի խաղաղություն, որն առաջացնում է անհոգություն, հոգեկան թմբիր, վտանգավոր մերժումներ:

Նշանակում է, իմ բանականությունն ինձ յուրովի է հուշում, որ աշխարհը արքուրդ է: Դրան հակառակ կույր տրամաբանությունը ջանում է հավաստել, որ ամեն ինչ պարզ է: Իգո՛ւր, ես փաստեր եմ ուզում և ուզում եմ, որ համոզիչ լինեն: Բայց, չնայած հավակնոտ դարերին այդքան շատ, պերճախոս մարդկանց գոյությանը, որոնք ի վիճակի են համոզել ցանկացած գրուցակցի, ես գիտեմ, որ բոլոր ապացույցները սխալ են: ու քանի որ ճշմարտությունը չեմ կարողանում իմանալ, այս առումով գոնե, երջանիկ չեմ: Ազնիվ մարդու համար ծիծաղելի է նման համընդհանուր իմացությունը՝ գործնական կամ բարոյական դետերմինիզմը, ամեն ինչ բացատրել փորձող դասակարգումները, որոնք ընդհանուր ոչինչ չունեն մտածողության հետ և մինչև անգամ ժխտում են նրա գլխավոր ճշմարտությունը հանդիսացող շրթայված լինելը: Այսուհետև միայն այս անմեկնելի, ի՛ր շրջանակների մեջ պարփակված տիեզերքում մարդու ճակատագիրը իմաստ կստանա: Իռացիոնալ իրերի սովերենները շրջապատում են նրան ու մինչև կյանքի վերջը չեն բաժանվում: Բայց շնորհի վերագտած, հակասություններից ձերբագատված հստակատեսության, արքուրդի զգացողությունը պարզվում է, որոշակիանում:

Ես գուցե շտապեցի փոքրինչ, երբ ասացի, որ աշխարհն արքուրդ է: Այս աշխարհի մասին թերևս կարելի է ասել միայն, որ տրամաբանական չէ: Արքուրդն է հենց իռացիոնալի և հստակատեսության հուսահատ ձգտումը, որի արձագանքները

հնչում են մարդկային հոգու հեռավոր խորքերում: Աբսուրդը նույն չափով կախված է թե՛ մարդուց, թե՛ աշխարհից: Տվյալ պահին այն երկուսին կապող միակ կապն է: Աբսուրդը նրանց միավորում է այնպես, ինչպես ատելությունը կարող է միավորել մարդկանց: Ահա այն ամենն, ինչ ես կարող եմ նկատել անպարփակելի տիեզերքում, ուր ինձ բախտ է վիճակված իմ կյանքն ապրել: ուշադրություն դարձնենք այս հանգամանքի վրա: Եթե ես ճշմարտություն եմ համարում աբսուրդը, որը կանոնավորում է իմ հարաբերությունները կյանքի հետ, որոշակի զգացումներով եմ համակվում շրջապատող իրականության հանդեպ և պահպանում եմ գիտական որոնումների ինձ հաղորդած մտքի պարզությունը, ուրեմն պետք է ամեն ինչ գոհեմ հանուն այս արժանահավատության ու ձգտեմ չկորցնել: Այդպես կանոնավորեմ իմ գործունեությունն ու հնարավորին չափ հավատարիմ լինեմ: Այստեղ ես խոսում եմ ազնվության մասին, Բայց նախ կուզեի ճշտել, թե արդյո՞ք միտքը կարող է ապրել այդ ստերջ անապատում:

Արդեն գիտեմ, որ միտքը հասել է այնտեղ, իր համար սնունդ գտել, խոստովանել նույնիսկ, որ մինչ այդ սնվել էր լոկ պատրանքներով, և այս հանգամանքը առաջադրել է մի քանի հրատապ թեմաներ:

Այն պահից, որ աբսուրդն ընդունելի է դառնում, վերածվում է տանջալից զգացողության: Հարց է ծագում՝ հնարավո՞ր է ապրել նման տվայտանքներով, ընդունելի համարել հիմնարար օրենքը, որի համաձայն սիրտը մոխրի է վերածվում նույն պահին, երբ բորբոքվում են այդ կրքերը: Առայժմ զբաղվենք մի հարցով, որը գտնվում է մեր փորձի կենտրոնում, որն արժարժելու հնարավորություն կունենանք: Նախ, սակայն, անդրադառնանք անապատում ծնված թեմաներին ու ներքին պոռթկումներին: Բավական է անգամ թվարկելը, բոլորին արդեն հայտնի են: Բայց միշտ էլ եղել են մարդիկ, ովքեր պաշտպանել են իռացիոնալի սկզբունքները: Մտածողության ավանդույթը, որը կարելի էր հլու-հնազանդ կոչել, երբեք չի խախտվել: Ռացիոնալիզմն այնքան է քննադատվել, որ թվում է, դժվար է նոր բան ավելացնելը: Սակայն մեր օրերում մենք ականատես ենք լինում փիլիսոփայության հակասական համակարգերի վերածննդին, որոնք մարդկային միտքը ցնցելու համար այնպիսի հնարքների են դիմում, որ կարծես իրոք, տրամաբանությունը միշտ առաջնային է եղել: Բայց դա ոչ այնքան մտածողության արդյունավետության, որքան նրա սնած հույսերի կենսունակության արդյունքն է: Պատմական առումով այս երկու դրույթները վկայում են, որ մարդու ձգտումները երկփեղկվում են՝ մի կողմից նա հավակնում է միասնականության, մյուս կողմից շատ պարզ տեսնում է իրեն արգելակող պատնեշները:

Հավանաբար երբեք բանականության վրա կատարվող գրոհները այնքան բուռն չեն եղել, որքան մեր ժամանակներում: Զրադաշտի բարձրագույն աղադակին՝ «Ստացվել է այնպես, որ բանականությունը դարձել է աշխարհի հնագույն առավելությունը, ես այն վերադարձրել եմ իրերին, երբ ասել եմ, որ նրա նկատմամբ ոչ մի հավերժական ուժ գոյություն չունի», Կիերկեգորի մահացու հիվանդությանը, «հիվանդություն, որին հետևեց մահը և մահն ամեն ինչի վերջն էր», հաջորդել են ուրիշ, արտուրդ մտածողության բացահայտ ու տանջալից թեմաներ: Կամ առնվազն, ի միջի այլոց այս հանգամանքը շատ կարևոր է իռացիոնալ և կրոնական թեմաներ: Յասպերսից մինչև Հայդեգեր, Կիերկեգորից Շեստով, ֆենոմենոլոգներից Շելլեր, ձգտումներով հարազատ, մեթոդներով ու նպատակներով հակադիր տրամաբանության ու բարոյական բնագավառների մտածողների մի ողջ ընտանիք համառորեն փակում էր բանականության արքայական ուղին ու ջանում էր ամեն կերպ գտնել ճշմարտության իսկական ճանապարհը: Ես նկատի եմ ունենում այն հանգամանքը, որ նրանց բոլորի մտքերը հայտնի ու յուրացված են: Ինչի էլ որ ձգտեն այդ մտածողները, երեկ կամ այսօր, նրանց համար ելակետային է բառային նկարագրության չենթարկվող տիեզերքը, ուր իշխում են հակասությունները, անօրինությունը, տագնապն ու անգորությունը: Մտածողների համար ընդհանուր են թվարկված թեմաները: Ամենակարևորն այն է, որ նրանք կարողացել են համապատասխան հետևություններ անել իրենց հայտնագործած ճշմարտություններից: Դա այնքան է կարևոր, որ առանձին քննելու անհրաժեշտություն է առաջանում: Խոսքն առայժմ միայն նրանց բացահայտումների, մեկնակետային փորձառության մասին է: Մենք քննում ենք այն դեպքերը, երբ բոլորն էլ համաձայն են իրար հետ: Անշուշտ, շատ հավակնոտ կլինեն փիլիսոփայական ուսմունքները վերլուծելը, սակայն, ընդհանուր մթնոլորտը ներկայացնելը հնարավոր է ու բավարար:

Հայդեգերը սառնասրտորեն քննում է մարդկային ճակատագիրն ու հայտարարում՝ գոյությանը նվաստացուցիչ է, կեցության բոլոր աստիճանների միակ որոշակիությունը «հոգսն» է: Այս աշխարհի վայելքներով տարված մարդու համար հոգսը դառնում է ակնթարթային, խուսանավող վախ: ու հենց որ այն հասնում է մարդու գիտակցությանը, վերածվում է տագնապի, ողջամիտ մարդու մշտական իրավիճակի, «ուր գոյը գտնում է իրեն»: Փիլիսոփայության այս պրոֆեսորը անվարան, աշխարհի ամենավերացական լեզվով գրում է. «Մարդկային գոյության վախճանականությունն ու սահմանափակությունը նախորդում են մարդուն»: Նա հետաքրքրվում է Կանտով լոկ այն բանի համար, որ ցույց տա «գուտ բանականության» սահմանափակ բնույթը է իր վերլուծություններով հետևյալ

եզրահանգումը կատարի. «Վախի գերիշխանության ներքո գտնվող մարդուն աշխարհը ոչինչ չի կարող առաջարկել»:

Նրան թվում է, թե հոգսը գերազանցում է մտածողության բոլոր դասակարգումներին, միայն այդ մասին է մտածում ու խոսում: Փիլիսոփան թվարկում է հոգսի տարբեր տարատեսակները՝ ձանձրույթը, որից սովորական մարդն ամեն կերպ ուզում է դուրս պրծնել, որևէ ձևով ազատվել, սարսափը, երբ բանականությունը մտասնեղվում է մահվան վրա: Հայդեգերն էլ գիտակցությունը արտուրդից չի տարբաժանում: Մահվան գիտակցումը հոգսի ճիչն է, երբ «գոյը գիտակցության միջոցով այդ ճիչն ուղղում է իրեն»: Դա հենց սարսափի ձայնն է, որը գոյին կոչ է անում «անանուն անհայտության մեջ կորսվելուց հետո վերադառնալ դեպի սեփական եսը»: Հայդեգերը նույնպես գտնում է, որ պետք չէ սուզվել թմբիրի գիրկը, պետք է մինչև վերջ սթափ մնալ: Նա այս աշխարհում արտուրդից է կառչում, մեղադրում աշխարհը ունայնության մեջ և նրա ավերակներից դուրս գալու ելք փնտրում:

Յասպերսը հրաժարվում է ամեն տեսակ գոյաբանական ուսմունքներից, ցանկանում է, որ մենք հաղթահարենք մեր «միամտությունը»: Նախօրոք գիտի, որ չենք կարող շրջանցել երևույթների մահացու խաղը: Նա գիտի նաև, որ վերջիվերջո գիտակցությունը պարտվելու է և երկար քննում է պատմության ապրած մտավոր արկածները, որպեսզի դաժանորեն ցույց տա ցանկացած համակարգի, փրկարար պատրանքի, ուսմունքի սնանկությունը: Այդ ունայն աշխարհում, ուր իմացության անգորությունն արդեն ապացուցված է, ուր անգոյությունը միակ շոշափելի իրականությունն է, իսկ անելանելի հուսահատությունը՝ միակ հնարավոր կեցվածքը, նա փորձում է գտնել աստվածային գաղտնիքներն առաջնորդող Արիադնեի կծիկը :

Շեստովն իր հերթին, իր զարմանալի միապաղաղ երկերում բազմիցս անդրադառնալով միննույն ճշմարտություններին, անընդհատ ապացուցում է, որ ամենականոնավոր ուսմունքը՝ համընդհանուր ռացիոնալիզմն անգամ ի վերջո հանգում է մարդկային մտածողության իռացիոնալիզմին: Նրա ուշադրությունից չի վրիպում տրամաբանությունն արժեզրկող, ծիծաղ հարուցող ամենաաննկատ վրիպումն ու հակասությունն անգամ: Մարդկային մտավոր ու հոգեկան կյանքի պատմության մեջ փիլիսոփային հետաքրքրում են միայն բացառությունները: Դոստոևսկու՝ մահապարտի փորձառության, Նիցշեի մտավոր հուսահատ որոնումների, Համլետի նգովքների, Իբսենի դառը ազնվականության միջոցով նա բացահայտում է, պարզաբանում, փառաբանում մարդկային ընդվզումը անխուսափելիության դեմ: Նա մեկընդմիջտ հրաժարվում է բանականությունից և քիչ

թե շատ իրեն վստահ զգում միայն այն անգույն անապատում, ուր բոլոր արժանապատվությունները քարացած են:

Այս բոլոր մտածողներից ամենաառինքնողը՝ Կիերկեգորը, գոնե իր կյանքի որոշակի հատվածում ոչ միայն բացահայտում է աբսուրդը, այլև ապրում նրանով: Այն մարդը, որ գրում էր, թե «Իսկական համրությունը ոչ թե լռելն է, այլ՝ խոսելը», հենց սկզբից համոզվում է, որ ոչ մի ճշմարտություն բացարձակ չէ և չի կարող ինքնին տառապալից գոյությանը տանելի դարձնել: Իմացության այդ Դոն Ժուանը բազմացնում էր կեղծանուններն ու հակասությունները, միաժամանակ գրում «ուսուցողական զրույցներն» ու ցինիկ սպիրիտուալիզմի դասագիրքը՝ «Գայթակղողի օրագիրը»: Կիերկեգորը ժխտում է մխիթարությունը, բարոյականությունը, անդորրի սկզբունքները: Նա հեռու է սրտի սեպը հանելով ցավը մեղմելու հակումից: Ընդհակառակը, մտածողը ստորացնում է այդ ցավը և իր արածից գոհ, խաչվածի հուսահատ երջանկությամբ՝ հստակ մտածողությունից, հակադրությունից, կեղծաբարոյությունից անցնում դիվային վիճակի: Այժմ նրա դեմքը նուրբ է ու ծիծաղելի՝ հոգու խորքից պոռթկացող ճիչով ուղեկցվող այդ կտրուկ փոփոխությունները ավելի գորեղ իրականության հետ պայքարի բոված աբսուրդի էության արտահայտություններն են: Հոգեկան արկածախնդրությունը, որը Կիերկեգորին հասցնում է իր այնքան սիրած առօրյա օրինախախտումներին, նույնպես առաջանում էր նախաստեղծ անկապությամբ գոյացած, պաճուճանքներից զերծ փորձառության քառսից:

Բոլորովին այլ՝ մեթոդի պլանով, հավատարիմ մնալով այդ պլանի բոլոր ծայրահեղություններին, Հուսեռը և ֆենոմենոլոգները ողջ բազմազանությամբ վերստեղծում են աշխարհն ու ժխտում բանականության գերազանցող ուժը: Դրա շնորհիվ ոգու աշխարհը շատ է հարստանում: Վարդի թերթիկը, ճանապարհասյունը կամ մարդկային ձեռքը նույնքան կարևոր են դառնում, որքան սերը, փափազը կամ ձգողականության օրենքը: Մտածել այլևս չի նշանակում երևոյթներն ինչ-որ ընդհանուր չափանիշով միավորել, լոկ արտաքին տվյալների ծանոթանալ: Մտածել նշանակում է լավ տեսնել, սովորել, լինել զգոն, ուղղություն տալ սեփական գիտակցությանն ու Պրուստի նման յուրաքանչյուր գաղափարի, կերպարի համար առանձնահատուկ պայմաններ ապահովել: Տարօրինակ կերպով այս աշխարհում ամեն ինչ է առանձնահատուկ վիճակում գտնվում: Յուրաքանչյուր միտք արդարանում է վերին գիտակցականությամբ: Կիերկեգորի, Շեստովի համեմատությամբ ավելի դրական լինելով հանդերձ, հուսեռյան մեթոդը հենց սկզբից մերժում է դասական ռացիոնալիզմը, ամեն տեսակ հույսի, ինտուիցիայի ու սրտի

համար ճամփա է բացում դեպի երևույթների աճող բազմազանությունը, որոնց առատության մեջ անմարդկային ինչ-որ բան կա: Սա ամեն մի, միաժամանակ ոչ մի գիտություն չտանող ուղի է: Այլ կերպ ասած, այս դեպքում միջոցը նպատակից առաջնային է դառնում: Հասկանալի է, խոսքը «ճանաչողական դրույթի» և ոչ թե սփոփանքի մասին է: Նորից կրկնենք, գոնե սկզբնական շրջանում:

Անհնարին է չզգալ այս բոլոր մտածողների հողեհարազատությունը, չնկատել, որ նրանք գտնվում են այն առանձնահատուկ, տխուր կետում, ուր հույսի համար տեղ չի մնացել: Ես ուզում եմ, որ ինձ բացատրեն ամեն ինչ կամ ոչինչ, բայց գիտակցությանը անգոր է սրտի ճիչի հանդեպ:

Նման կանչով սթափված մտքի որոնումները հակասություններից ու տարակարծություններից բացի, ոչնչի չեն հանգեցնում: Այն, ինչ ես չեմ հասկանում, անտրամաբանական է: Աշխարհը լցված է այսպիսի իռացիոնալիստներով, հենց ինքն այսպիսի մի իռացիոնալություն է, քանի որ ինձ նույնքան անհասկանալի է նրա իմաստը: Եթե գեթ մի անգամ գոնե հնարավոր լիներ ասել՝ «Այո՞, պարզ է», ամեն ինչ իր տեղը կընկներ, մինչդեռ վերոհիշյալ մտածողները զարմանալի համառությամբ հայտարարում են, որ ոչինչ պարզ չէ, ամեն ինչ քառս է, որ մարդն իրեն շրջապատող պատերից բացի ոչինչ ի վիճակի չէ տեսնել, զգալ ու հասկանալ:

Փորձերի տարբեր տեսակներն այստեղ համընկնում ու խաչաձևվում են: Իր հնարավորությունների սահմանագծին հասնելուց հետո միտքը պետք է հետևություններ ու եզրահանգումներ անի: Արդյունքը լինում է ինքնասպանությունն ու ապա այդ քայլի հերքումը: Բայց ես ուզում եմ շրջել ուսումնասիրության հաջորդականությունն ու սկսելով մտավոր աղետից՝ գալ հասնել սովորական առօրյային: Այստեղ թվարկված բոլոր փորձերը կատարվել են անապատում, որը պետք չէ լքել: Առնվազն պետք է իմանալ, թե փորձերը մեզ մինչև ուր կհասցնեն: Ահա այդ սահմանագծում է մարդը բախվում իռացիոնալ իրականությանը: Նա ուզում է լինել երջանիկ և գտնել կյանքի իմաստը: Աբսուրդը ծնվում է մարդկային հարցապնդման ու աշխարհի անտրամաբանական լռության բախումից: Սա չպետք է մոռանալ: Սրանից պետք է կառչենք, որպեսզի, թերևս, ավերելու վճռականություն ձեռք բերենք: Իռացիոնալությունը, մարդկային ձգտումը և նրանց հանդիպումից առաջացած աբսուրդը այն դրամայի երեք գործող անձերն են, որին պետք է հետևել ծայրից ծայր և որն անխուսափելիորեն ավարտվելու է գոյի հղացած բարձրագույն տրամաբանության պարտությամբ:

ՓԻԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբսուրդի զգացողությունը հավասարազոր չէ աբսուրդի հասկացությանը: Առաջինը երկրորդի հիմքն է, ոչ ավելի: Զգացողությունը անհամատեղելի է հասկացության հետ, եթե նկատի չունենանք այն ակնթարթը, երբ աշխարհի մասին եզրահանգում է կատարվում: Դրանից հետո իրավունք չունի կանգ առնելու, կամ պիտի ապրի ի՞ր կյանքով՝ այսինքն վաղ թե ուշ մահանա, կամ էլ ծավալվի: Նույնը վերաբերում է թեմաներին, որ մենք այստեղ մեկտեղել ենք: Բայց այս դեպքում էլ ինձ հետաքրքրում են ոչ թե մտածողներն ու երկերը, որոնց քննության համար ուրիշ տեղ ու ձև է անհրաժեշտ, այլ այն ընդհանուրի բացահայտումը, որ առկա է նրանց վերջնական եզրահանգումներում: Չնայած մտածողները երբեք այսքան տարբեր չեն եղել, բայց այնուամենայնիվ ակնհայտ է, որ նրանք գրգիռ են ստանում միևնույն հոգեկան տարածքից: Եվ որքան էլ տարբեր լինեն նրանց ուսումնասիրությունները, նույն կերպ է հնչում ճիշդ, որ յուրաքանչյուրն արձակում է իր անցած ճանապարհի վերջում: Ակնհայտ է՝ վերոհիշյալ մտածողները ընդհանուր մտավոր մթնոլորտ ունեն: Չափազանցություն չի լինի եթե ասենք, որ այն մահացու է: Այդ հեղձուկ մթնոլորտի ճնշումը ստիպում է կամ փախուստի դիմել, կամ այլ ելք որոնել: Մնում է պարզել միայն, թե առաջին դեպքում ինչպես փախչել, երկրորդ դեպքում՝ որ ուղղությամբ շարունակել որոնումները: Այսպիսով ես առաջ եմ քաշում ինքնասպանության խնդիրը և այն հետաքրքրության բնույթը, որ այս առումով կարող են առաջացնել էկզիստենցիալիստական փիլիսոփայության եզրահանգումները:

Սակայն, նախ ուզում եմ մի փոքր շեղվել ուղիղ ճանապարհից: Մինչ այժմ աբսուրդը արտաքուստ ենք նկարագրել: Մինչդեռ կարող ենք ճշտել նաև, թե որքանով է պարզ այդ հասկացությունն ու կոնկրետ վերլուծությամբ սահմանել մի կողմից՝ նշանակությունը, մյուս կողմից՝ հետևանքները:

Եթե ես անմեղ մարդու դատապարտեմ սահմոկեցուցիչ ոճրագործության, ապաքինի մարդուն՝ հարազատ քրոջը գայթակղելու համար, ինձ կասեն, որ դա աբսուրդ է: Այդ ընդվզումը, չնայած իր ծիծաղաշարժ կողմն էլ ունի, բայց խորապես հիմնավորված է: Անմեղ մարդը նման պատասխանով բացահայտում է այն հակասությունը, որ գոյություն ունի վերագրվող ոճիրի և իր բարոյական սկզբունքների միջև: «Դա աբսուրդ է» նշանակում է «դա անհնարին է», ինչպես նաև «հակաբանական է»: Եթե ես տեսնեմ, որ որևէ մեկը սառը զենքով հարձակվում է հրանոթաձիգների ջոկատի վրա, աբսուրդ կհամարեմ, ելնելով իրականության և ցանկության անհամապատասխանությունից, առկա ուժի և նպատակի տարբերությունից: Ճիշտ այդպես, մենք աբսուրդ ենք համարում այն վճիռը, որը մեր կարծիքով չի բխում իրական փաստերից:

Աբսուրդությունը բացահայտվում է նաև տվյալ դատողության հետևանքի և այն իրականության համեմատությամբ, որի տրամաբանական լինելը մենք ցանկանում ենք պնդել: Այս բոլոր՝ պարզագույնից ամենաբարդ դեպքերում, որքան իմ համեմատության օբյեկտների միջև տարբերությանը մեծ լինի, այնքան աբսուրդությունը ակնհայտ կդառնա: Լինում են աբսուրդ ամուսնություններ, կոչեր, լռություններ, վիրավորանքներ, պատերազմներ ու անգամ հաշտություններ: Ամեն դեպքում էլ աբսուրդությունը բխում է համեմատությունից: Հետևաբար ես կարող եմ ասել, որ աբսուրդի զգացողությունը առաջանում է ոչ թե առանձին փաստերի ու տպավորությունների սովորական քննությունից, այլ իրերի փաստացի վիճակի ու որոշակի իրականության ներգործության և այդ ներգործության ոլորտից դուրս գտնվող աշխարհների համադրումներից: Ըստ էության աբսուրդը պառակտում է, գոյություն չունի համեմատվող տարրերից և ոչ մեկի մեջ: Այն առաջանում է նրանց բախումից:

Հետևաբար, հասնելով մտավոր ոլորտին, ես կարող եմ պնդել, որ աբսուրդը ո՛չ մարդու մեջ է գտնվում (եթե, իհարկե, նման այլաբանությունը իմաստ ունի), ո՛չ էլ աշխարհում, այլ նրանց համադրման մեջ: Առայժմ դա նրանց կապող միակ կապն է: Իրատեսությունն ինձ ստիպում է ասել, որ գիտեմ, թե ինչ է ուզում մարդը, ինչ է առաջարկում աշխարհը և ավելացնել՝ ինձ հայտնի է ինչն և նրանց կապում: Հարցի մեջ ավելի խորանալու կարիք չկա: Հետազոտողին մեկ հավաստի փաստն էլ է բավական համապատասխան հետևություններ անելու համար:

Անմիջական քննությունը նաև մեթոդի օրենքն է, ընդ որում այս երրորդության բացահայտմանը չպետք է նայել որպես նոր Ամերիկայի հայտնագործություն: Այն միաժամանակ չափազանց պարզ ու չափազանց բարդ է՝ ահա՛ միակ ընդհանրությունը, որ ունի փորձի տվյալների հետ: Այս իմաստով էլ նրան բնորոշող առաջին հատկանիշը չտրոհվելն է՝ ոչնչացնել երրորդության տարրերից մեկը, նշանակում է լիովին ոչնչացնել: Աբսուրդը չի կարող մարդկային գիտակցությունից դուրս գոյություն ունենալ: Հետևաբար, ինչպես ամեն ինչ աշխարհում՝ ենթակա է մահվան:

Բայց աբսուրդն աշխարհից դուրս էլ չի կարող գոյություն ունենալ: Այս տարրական հատկանիշից ելնելով ուզում եմ եզրակացնել, որ աբսուրդի հասկացությունը սկզբունքորեն կարևոր է և կարող է դառնալ իմ հիմնական ճշմարտություններից մեկը: Վերը հիշված մեթոդի օրենքը ձևակերպվում է այսպես՝ եթե ինչ-որ բան ճշմարիտ եմ համարում, պետք է պահպանեմ: Եթե ես ձգտում եմ խնդիր լուծել, ապա ջանում չանտեսել տվյալներից ոչ մեկը: Իմ ունեցած միակ տվյալը

աբսուրդն է: Խնդիրը պահանջում է իմանալ, թե ինչպես պետք է այն հաղթահարեմ, որպեսզի չհանգեմ ինքնասպանության անհրաժեշտությանը: ուսումնասիրության առաջին և ըստ էության միակ պայմանը այն բանի պահպանումն է, որն սպառնում է ինձ: Հետևաբար անհրաժեշտ է պահպանել նաև այդ սպառնալիքի հիմքը՝ աբսուրդի բուն էությունը: Հենց նոր ես դա բնորոշեցի որպես հակամարտություն և անվերջանալի պայքար:

Մինչև վերջ հասցնելով աբսուրդ տրամաբանությունը, պետք է խոստովանեմ, որ այդ պայքարը ենթադրում է մշտական անհուսություն (որը հուսահատության հետ չպետք է շփոթել), մերժում (չշփոթել ժխտման հետ), գիտակցված անբավարարվածություն (չնույնացնել պատանեկան տազնապի հետ): Այն ամենը, որ վերացնում է, շրջանցում կամ ի չիք դարձնում այս պահանջները, այլ կերպ ասած՝ համաձայնողականությունը, որն առաջինն է ոչնչացնում երկպառակտումը, խարխլում է աբսուրդն ու արժեզրկում առաջարկվող մտածողության եղանակը: Աբսուրդն այն չափով կարող է միայն իմաստ ունենալ, ինչ չափով անընդունելի է համարվում:

Գոյություն ունի խիստ բարոյական թվացող մի ակնհայտ երևույթ՝ մարդը միշտ իր քարոզած ճշմարտությունների գերին է: Այդ ճշմարտություններն ընդունելուց հետո, նա այլևս չի կարողանում ձերբազատվել: Ամեն ինչի համար ինչ-որ ձևով պետք է վարձահատույց լինել: Աբսուրդը ընկալած մարդը մեկընդմիջտ կապվում է նրան: Նման՝ գիտակցող և հույսը կորցնող մարդը այլևս չի պատկանում ապագային: Սա օրինաչափ է: Բայց նույնքան օրինաչափ է այն, որ նա ձգտում է փախչել իր մտասնեռած աշխարհից: Վերն ասվածները իմաստ կունենան միայն այս պարադոքսն ընդունելուց հետո: Ահա թե ինչու ոչինչ ավելի ուսուցողական չի կարող լինել, քան այն հետևանքների քննությունը, որի և ռացիոնալիզմի քննադատությունից ելնելով հանգել են աբսուրդի կենսոլորտն զգացած մարդիկ:

Էկզիստենցիալիստների փիլիսոփայությունն ուսումնասիրելիս, օրինակ, չի կարելի չնկատել, որ բոլոր ներկայացուցիչներն, առանց բացառության, թելադրում են փախչել իրականությունից: Ելնելով բանականության ավերակների վրա թագավորող աբսուրդից, գտնվելով մարդկային ինքնամփոփ, սահմանափակ աշխարհում, նրանք իրենց տարօրինակ տրամաբանությամբ աստվածացնում են այն, ինչն իրենց կործանում է, հույս են փնտրում այնտեղ, որտեղ հուսահատության են մատնվում: Ըստ էության յուրաքանչյուրին պարտադրված այս հույսը կրոնական բնույթ ունի, որին հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել:

Օրինակի համար ես կփորձեմ վերլուծել Շեստովին, Կիերկեգորին բնորոշ մի քանի թեմաներ: Ծաղրանկարի հասցված յասպերսյան մոդելի իմաստը հետագայում կբացատրեմ: Ակնհայտ է, որ Յասպերսը չի կարողանում հաղթահարել իմացության անմատչելիությունը, ի վիճակի չէ փորձի էության մեջ ներթափանցել և շատ լավ գիտակցում է, որ այս աշխարհում ամեն ինչ դատապարտված է ձախողման: Դա հասկանալուց հետո, սակայն, շարունակու՞մ է առաջ գնալ, թե ձախողումից համապատասխան եզրահանգումներ է կատարում: Համենայնդեպս նոր ոչինչ չի ասում: Իր փորձով նա հայտնաբերել է միայն սեփական անգորությունը, քիչ թե շատ տանելի հենակետ ստեղծելու չնչին հնարավորություն անգամ չի գտել: Յասպերսը չունենալով ոչ մի փաստարկ (ինքն էլ է ընդունում), մի շնչով հաստատում է կեցության փորձի գերազանցությունն ու կյանքի գերմարդկային իմաստը, երբ գրում է. «Այս ձախողումը, անկախ ամեն բացատրությունից և հնարավոր մեկնաբանություններից չի՞ վկայում հենց կեցության գերազանցությունը»:

Անսպասելիորեն, մարդկային կույր հավատով նման կեցությունն ամեն ինչ բացատրում է այն աշխարհում, որը Յասպերսը բնորոշում է որպես «ընդհանուրի և մասնավորի անհասանելի միասնություն»: Այսպես արտուրդը (բառի ամենալայն իմաստով) դառնում է Աստված, իսկ ընկալելու անկարողությունը՝ կեցությունը պարզաբանելու միջոց: Այս բացարձակապես անտրամաբանական եզրահանգումը կարելի է ցատկ կոչել: Որքան էլ հակասական թվա, այժմ կարելի է հասկանալ այն համառությունն ու անսահման համբերությունը, որով Յասպերսը պնդում էր գերազանցությանն առնչվող փորձերի անիրականալիությունը: Բնականաբար, որքան նա հեռանում է փորձից, այնքան ապարդյուն են դառնում ձևակերպման ձգտումները և շոշափելի է թվում գերազանցությունը՝ չէ՞ որ գերազանցությունը հաստատելու ջանքերը ուղիղ համեմատական են նրա հնարավոր մեկնաբանմանն ու աշխարհի, փորձի իռացիոնալության միջև գոյություն ունեցող խորխորատին: Թվում է նույնիսկ, որ Յասպերսը որքան արմատական է բացատրում աշխարհը, այնքան հախուռն է հարձակվում մտածողության նախապաշարումների վրա: Ճնշված մտքի այս առաքյալը ծայրահեղ ընկճվածության մեջ անգամ կեցությունն իր ողջ խորությամբ վերածնելու ելք է գտնում:

Միստիկ մտածողությունից մեզ ծանոթ են նման մոտեցումներ, որոնք նույնքան օրինաչափ են, որքան բանականության ցանկացած այլ դրսևորում: Առայժմ ես ձևացնում եմ, որ լուրջ եմ ընդունում այս կամ այն խնդիրը: Չքննելով նման մոտեցման արժեքն ու ուսուցողական նշանակությունը, ուզում եմ իմանալ պարզապես, թե որքան է համընկնում իմ առաջադրած պայմաններին, համագո՞ր է ինձ զբաղեցնող հակամարտությանը: Ես նորից վերադառնում եմ Շեստովին: Մի մեկնաբան մեջ է

բերել նրա ուշագրավ մտքերից մեկը: «Միակ իրական ելքը, ասել է մտածողը, գտնվում է այնտեղ, որտեղ մարդկային միտքը ելք չի գտնում: Հակառակ դեպքում ո՞վ Աստծո պահանջ կզգար: Մենք Աստծուն դիմում ենք անհնարինը ձեռք բերելու համար, հնարավորը մարդն էլ կարող է ձեռք բերել»: Եթե գոյություն ունի շեստովյան փիլիսոփայություն, ապա լիովին արտահայտվում է այս կարճ դարձվածքով: Երբ մտածողն իր համար վերլուծումներից հետո բացահայտում է գոյություն ունեցող ամեն ինչի աբսուրդ սկզբնավորումը, չի ասում՝ «Ահա՛ աբսուրդը», այլ՝ «Ահա՛ աստված, պետք է դիմել նրան, եթե անգամ չի համապատասխանում մեր ռացիոնալիստական դասակարգումներից և ոչ մեկին»: Եվ որպեսզի տարակարծություն չառաջանա, ռուս փիլիսոփան ավելացնում է, որ այդ աստվածը կարող է լինել ատելի ու ատելությամբ լի, անհասկանալի ու հակասական: Բայց որքան ատելի է նրա դեմքը, այնքան հաստատուն է ամենագործությունը: Աստվածային մեծությունն անհետևողականության մեջ է: Պարզվում է, որ անմարդկայնությունն է նրա գոյության վկայությունը, պետք է նետվել Աստծո գիրկը և այդ ցատկով ազատվել ռացիոնալ պատրանքներից: Ահա թե ինչու Շեստովի դեպքում ժամանակի առումով աբսուրդի ընդունումն ու աբսուրդը համընկնում են: Ըստ Շեստովի, աբսուրդի գոյությանը հաստատել, նշանակում է ընդունել՝ ահա թե ինչու նրա տրամաբանական ջանքերն ուղղված են աբսուրդը բացահայտելուն, հետևաբար, անսահման հույսի ճամփան գտնելուն: Մի անգամ էլ կրկնենք՝ նման մոտեցումը ընդունելի է: Բայց ես հետևողականորեն պիտի անդրադառնամ միայն մեկ խնդրի, դրանից բխող բոլոր հետևանքներով: Հանուն վերամբարձ մտածողության կամ հավատի թափված ջանքերի հետազոտությունն իմ խնդիրը չէ: Ես կարող եմ դրան նվիրել իմ հետագա կյանքը: Գիտեմ, շեստովյան մոտեցումը նյարդայնացնում է ռացիոնալիստներին, բայց զգում եմ նաև, որ այդ վիճաբանության մեջ իրավացին Շեստովն է: Ինձ ուրիշ բան է հետաքրքրում՝ որքանո՞վ է նա հավատարիմ աբսուրդի պատվիրաններին:

Եվ այսպես, սահմանելով հանդերձ աբսուրդի և հույսի հակադրությունը, չի կարելի չնկատել, որ էկզիստենցիալիստական մտածողությունն ըստ Շեստովի ընդունում է աբսուրդը, բայց լոկ այն բանի համար, որ տեղնուտեղը ժխտի: Մտածողության նման ճկունությունը ձեռնածուի ապշեցուցիչ աճաբարություն է հիշեցնում: Մյուս կողմից, երբ Շեստովը աբսուրդը հակադրում է կենցաղային բարոյականությանն ու տրամաբանությանը, կոչում է ճշմարտություն և մեղքերի քավություն: Հետևաբար, աբսուրդի նման բնորոշման հիմքում առկա է Շեստովի հավանությունը: Եթե ընդունենք, որ աբսուրդի հասկացության ներգործուն ուժը հիմնվում է մեր միամիտ հույսերի բախման վրա, եթե զգանք, որ աբսուրդի գոյության նախապայմանն անհամաձայնությունն է, ապա պարզ կդառնա, որ տվյալ դեպքում

նա կորցրել է իր իսկական դեմքը, մարդկայնությունն ու հարաբերականությունը, որպեսզի միաձուլվի անհասանելի, միաժամանակ հանգիստ պարզևող հավերժությանը: Եթե արտուրդը գոյություն անի, ապա միայն և միայն մարդու տիեզերքում: Այն պահից, երբ տվյալ հասկացությունը դեպի հավերժություն ցատկելու թռիչքահարթակի է վերածվում, մարդկային պարզ մտածողության հետ ամեն կապ չքանում է: Արտուրդը դադարում է այն հավաստիությունը դառնալուց, որը մարդն առանց համաձայն լինելու ընդունել էր: Պայքարը դադարեցված է: Մարդը գիտակցաբար միավորվում է արտուրդին, և այդ համաձուլման մեջ վերջինս կորցնում է իր հիմնական հատկանիշները՝ հակադրությունը, պատակտումն ու անջատումը: Նման ցատկը խաբկանք է: Շեստովը հաճույքով մեջ է բերում Համլետի բառերը՝ «The time is out of joint», ու ասես աներկբա հավատում, որ դրանք հատուկ իր համար են արտասանված: Այնինչ Համլետն ասել ու Շեքսպիրը գրել է բոլորովին այլ կապակցությամբ: Իռացիոնալ արբածությունն ու հոգեկան հիացմունքների հակումը արտուրդը զրկում են հստակատեսությունից: Շեստովի կարծիքով, տրամաբանությունն ամուլ է, բայց նրանից վեր ինչ-որ բան կա: Արտուրդ մարդու կարծիքով, տրամաբանությունն ամուլ է և նրանից վեր ոչինչ չկա:

Հիշատակված ցատկն, այնուամենայնիվ, օգնում է ավելի լավ հասկանալ արտուրդի բուն էությունը: Մեզ հայտնի է, որ արտուրդն առանց հավասարակշռության չի կարող գոյություն ունենալ, այն ոչ թե համեմատվող անդամներից մեկն է, այլ բուն համեմատությունը: Այնինչ Շեստովը շեշտը դնում է անդամներից մեկի վրա ու խախտում հավասարակշռությունը:

Մեր իմացության ծարավը, բացարձակի ձգտումը բացատրելի են լոկ այն չափով, ինչ չափով որ ընդունակ են հասկանալ ու մեկնաբանել, իրերի բազմազանությունը: Անիմաստ է մեկընդմիջտ տրամաբանությունը ժխտելը: Կան երևույթներ, որոնց շրջանակում այն խիստ գործուն է: Խոսքն առաջին հերթին վերաբերում է մարդկային փորձառությանը: Ահա թե ինչու մենք ձգտում ենք ամեն ինչ պարզաբանել և քանի որ չենք կարողանում, ի հայտ է գալիս արտուրդը: Դա տեղի է ունենում գործուն, բայց սահմանափակ տրամաբանության և անվերջ վերարձարժվող իռացիոնալության հանդիպման ժամանակ:

Երբ Շեստովը վրդովվում է Հեգելի «Արեգակնային համակարգի շարժումը կատարվում է միայն ու միայն անփոփոխ օրենքների համաձայն, որոնք և հանդիսանում են համակարգի տրամաբանությունը» բնույթի դատողություններից ու ողջ ջանքերը ներդնում է, որպեսզի քարոքանդ ունի Սպինոզայի ռացիոնալիզմը, հանգում է տրամաբանության ունայնության գաղափարին: Այստեղից էլ բնական,

բայց չհիմնավորված շրջադարձը դեպի իռացիոնալության գերակայության հաստատումը՝ Սակայն այդ անցումը ակնհայտ չէ, քանի որ ի հայտ են գալիս սահմանի և պլանի հասկացությունները: Իրոք, բնության օրենքները կարող են գործել մինչև որոշակի սահմանը, որից հետո հակադրվում են իրենք իրենց և հանգում արտուրդի: Կամ էլ այդ օրենքները օրինաչափ կարող են լինել նկարագրական պլանով, չնայած նույն պատճառաբանությամբ բացատրական պլանով հնարավոր է, որ ճշմարտացի չլինեն: Երբ ամեն ինչ զոհաբերվում է իռացիոնալությանը, պարզության պահանջը աննկատ նահանջում է, արտուրդը վերանում է համեմատության անդամներից մեկի հետ: Արտուրդ մարդն, ընդհակառակը, նման նահանջի չի դիմում: Նա ընդունում է պայքարը, լիովին չի արհամարհում տրամաբանությանն ու չի ժխտում իռացիոնալությունը: Նա իր ուշադրության կենտրոնում է պահում փորձի բոլոր տվյալները, և առանց իմանալու ուղղությանը, չի ձգտում ցատկի: Նա որոշակի գիտի միայն; որ սթափ գիտակցության մեջ հույսն այլևս տեղ չունի:

Այն, ինչ հազիվ և միայն նկատվում է Լև Շեստովի գրքերում, Կիերկեգորի երկերում ավելի քան զգալի է: Անշուշտ, նման դյուրախույս հեղինակի գրվածքներում դժվար է հստակ դատողություններ գտնելը: Եվ չնայած նրա ստեղծագործություններն ամենայն հավանականությամբ հակասում են իրար, չնայած բազմաթիվ կեղծանուններին, բառախաղերին ու քմծիծաղին, կա մի ճշմարտության (միաժամանակ վախի) կանխագագում, որն ի վերջո բարձր հնչում է վերջին երկերում: Կիերկեգորն էլ է ցատկ կատարում: Քրիստոնեությունը, որից նա այնպես ահաբեկված էր մանկության տարիներին, կրկին վերադառնում է իր ամենախիստ տեսքով: Կիերկեգորի համար նույնպես անտիճումիան և պարադոքսը դառնում են կրոնական չափանիշներ:

Այն, ինչ մի ժամանակ հուսահատության էր մղում նրան, աստիճանաբար դառնում է ճշմարտության և հստակատեսության աղբյուր: Քրիստոնեությունը խայտառակություն է, Կիերկեգորը պահանջում է (ոչ ավել, ոչ պակաս) Իգնատիոս Լոյոլայի բանադրության երրորդ զոհաբերությունը, ըստ որի Աստված ամենից հաճույքով ընդունում է «Բանականության զոհողությունը»՝ Սա ցատկի բավական տարօրինակ հետևանք է, բայց մեզ չպետք է զարմացնի: Կիերկեգորը արտուրդը դարձնում է այլ, հանդերձյալ աշխարհի չափանիշ, մինչդեռ այն ա՛յս աշխարհի փորձառության արդյունք է: «Իր պարտությամբ,— ասում է փիլիսոփան,— հավատացյալը համոզվում է, որ հաղթել է»:

Չեմ ուզում հարցնել, թե ինչ մոգական մարգարեություններից էր բխում նման մտայնությունը: Բավական է իմանալ միայն՝ արքայադուրի բնույթն ու էությունը նման մտայնության առիթ տալի՞ս են: Գիտեմ, որ ոչ: Եթե նորից անդրադառնանք արքայադուրին, մեզ ավելի պարզ կդառնա Կիերկեգորին ոգևորած մեթոդը: Նա չի կարողանում աշխարհի իռացիոնալության և արքայադուրի ընդվզող ձգտման միջև հավասարակշռություն պահպանել: Չի պահպանվում նաև այն հարաբերությունը, առանց որի անհնար է լիարժեք խոսել արքայադուրի զգացման մասին: Համոզվելով, որ իռացիոնալությունն անխուսափելի է, Կիերկեգորը ձգտում է գոնե խույս տալ իրեն ամուլ և անհասկանալի թվացող հուսահատ թախծից: Այս առումով նրա զգացողությունները թերևս հիմնավոր են, բայց արքայադուրը ժխտելու առիթ չեն տալիս: Ընդվզման ճիշդ փոխարինելով հախուռն հաշտվողականությամբ, նա անխուսափելիորեն հանգում է արքայադուրի ժխտմանը, որն առաջնորդել էր նրան մինչ այդ պահը, և աստվածացնում է իր միակ հավատամքը՝ իռացիոնալությունը: «Կարևորը, — ասում էր Գալյանին տիկին ղ'էպինեին, — ոչ այնքան բուժվելն է, որքան հիվանդություններով ապրել սովորելը»: Կիերկեգորն ուզում է բուժվել, դա նրա բուն ցանկությունն է, դրանով է հագեցած օրագիրը: Ուղեղի ողջ լարվածությամբ մտածողը ձգտում է խույս տալ մարդկային ճակատագրի երկվությունից: Այդ ջանքերն առավել քան հուսահատական են, քանի որ մերթնդները զգացվում է ապարդյուն լինելն, օրինակ, երբ հեղինակը պատմում է, թե ինչպես ո՛չ Աստծո վախը, ո՛չ էլ բարեպաշտությունն իրեն հոգեկան հանգստություն չեն պատճառել: Դրա համար էլ թիմում է տառապալից հնարքների՝ իռացիոնալությանը տալիս որոշակի կերպարանք, իսկ Աստծուն օժտում արքայադուրի տարրերով: Աստված անարդարացի է, անհետևողական, անհասանելի: Միտքը միայնակ է փորձում մարել մարդկային սրտի հախուռն բռնկումները: Քանի որ ոչինչ ապացուցված չէ, կարելի է ամեն ինչ էլ ապացուցել:

Կիերկեգորն ինքն է մեզ ցույց տալիս իր անցած ճանապարհը: Ես չեմ ուզում ենթադրություններ անել, բայց նրա երկերում հնարավոր է արքայադուրը ընդունելուն զուգահեռ չնկատել հոգեկան գրեթե կամավոր խեղումները: Սա հենց Կիերկեգորի «Օրագրի» լեյտմոտիվն է: «Ինձ պակասում է կենդանական սկիզբը, որը մարդկային ճակատագրի բաղկացուցիչ մասն է... վերջիվերջո մարմին տվեք ինձ»: Այնուհետև. «Պատանեկության տարիներին մանավանդ ինչ ասես չէի տա գոնե վեց ամիս ինձ իսկական տղամարդ զգալու համար: ... Ըստ էության ես միշտ մարմնի ու ֆիզիկական գոյության պայմանների պահանջ եմ զգացել»: Այնուամենայնիվ, Կիերկեգորը որսում է դարերի խորքից եկող հույսի փառահեղ ճիշդ, որը բացի արքայադուր մարդուց, այնքան սրտեր էր խանդավառել: «Քրիստոսի համար մահն ամեննին էլ վերջ չէ և իր մեջ

անհամեմատ շատ հույսեր է պարունակում, քան առողջությամբ ու ուժով լի կյանքը»: Նույնիսկ ամոթալի հաշտվողականությունը հաշտվողականություն է, որովհետև հնարավորություն է տալիս հույս գտնել հենց հույսի հակադրության՝ մահվան մեջ և եթե մինչև անգամ նման կեցվածքը համակրանք է առաջացնում, չափազանցությունը ոչինչ չի պարզում: Կարող են առարկել՝ քանի որ մարդկային չափանիշները խախտվում են, նշանակում է գերմարդկային չափերով պիտի առաջնորդվել: «Նշանակում է»-ն այստեղ ավելորդ է, քանի որ չկա տրամաբանական ապացույց: Նույնիսկ փորձառական հավանականություն: Ես միայն ի վիճակի եմ ասել, որ իմ չափումնային պատկերացումներն անգամ խախտված են: Եվ եթե այս ամենից բացասական հետևություն անեմ, անհասանելիությունը չեմ կարող հիմք ընդունել: Ես ուզում եմ իմանալ՝ կարո՞ղ եմ ապրել այն ամենով, ինչը հասանելի է ինձ: Միայն այդպես: Ինձ ասեն թերևս, որ ինտելեկտը պետք է գոհի իր հպարտությունը, բանականությունը՝ զիջի: Բայց եթե ես ենթադրում եմ, որ բանականությունը սահմաններ ունի, հենց դրանով ոչ թե ժխտում, այլ ընդունում եմ նրա հնարավորությունների հարաբերականությունը: Ինձ համար նախընտրելի է այն միջին ուղին, ուր միտքը հստակ է գործում: Եվ եթե դա է նրա հպարտությունը, ես հրաժարվելու բավարար պատճառներ չեմ տեսնում: Ոչինչ այնքան խոր չէ, որքան Կիերկեգորի տեսակետը, որի համաձայն հուսահատությունը ոչ թե իրադրություն է, այլ վիճակ՝ մեղավորության վիճակ: Չէ՞ որ հենց մեղքն է մեզ հեռացնում Աստծուց: Աբսուրդը՝ մտածող մարդու մետաֆիզիկական վիճակը, Աստծո՞ւ կողմը չի տանում: Թերևս այս միտքն ավելի պարզ դառնա, եթե ես համարձակվեմ հետևյալ չափազանցությունը կատարել՝ աբսուրդը մեղքն է առանց Աստծո:

Նման ձևակերպմամբ կարելի է ապրել: Ես գիտեմ, որ այն հիմնված է միմյանց նեցուկ դարձած, բայց միավորվելու անկարող խելքի ու աշխարհի վրա: Այս պայմաններում եմ ես հետաքրքրվում կեցության կանոններով, բայց այն, ինչ առաջարկում են ինձ, չի ընդունում նրա հիմքը, ժխտում է ցավատանջ դիմադրության անդամներից մեկին, ինձ հորդորում է հանձնվել: Ես հարցնում եմ՝ որո՞նք են այն ճակատագրի հետևանքները, որ ինքս իմն եմ համարում: Գիտեմ, իմ վիճակը ենթադրում է անգիտություն ու խավար, բայց ինձ հավատացնում են, որ այդ անգիտությունը բացատրում է ամեն ինչ, իսկ գիշերային մութն իմ լույսն է: Բայց դա հարցի պատասխանը չէ, բառային հախուռն զեղումները չեն կարող սքողել պարադոքսը: Ուրեմն այլ կողմ պետք է նայել: Կիերկեգորը որքան ուզում է թող գոռա, նախազգուշացնի. «Եթե մարդը չունենար հավերժության գիտակցությունը, եթե բոլոր իրերի ընդերքում, անբացատ-րելի ոլորապտույտով այդ նույն՝ մեծից փոքր իրերն ստեղծող վայրի, մոլեգին ուժից բացի ոչինչ չլիներ, եթե իրերի ետևում չտարածվեր

ոչնչով չլցվող անհատակ պարապուրթունք, ինչի՞ կվերածվեր կյանքը, եթե ոչ՝ հուսահատության»: Այս ողբը չի կարող կանգնեցնել աբսուրդ մարդուն: Որոնել ճշմարիտը, չի նշանակում որոնել ցանկալին: Եթե «Ինչի՞ կվերածվեր կյանքը» տազնապահարույց հարցից խուսափելու համար պետք է ավանակի նման սնվել պատրանքի վարդերով, աբսուրդ մարդու միտքը խաբեության հետ հաշտվելու փոխարեն, անհողողող ընդունում է Կիերկեգորի պատասխանը. «Հուսահատության»: Վճռականությամբ լի հոգին, ամեն ինչ կշռադատելուց հետո, կարող է դրանով գոհանալ:

Ես համարձակվում եմ էկզիստենցիալիստական այս դիրքորոշումը կոչել փիլիսոփայական ինքնասպանություն: Բայց սա ինքնին վերջնական բնորոշում չէ, այլ հարմար ձև նշագծելու համար մտքի շարժումը, որի օգնությամբ ինքն իրեն ժխտում է ու ձգտում իրեն հաղթահարել ժխտման օգնությամբ: Ժխտումը հենց էկզիստենցիալիստների աստվածն է: Ավելի ճիշտ՝ Աստծո գոյության նախապայմանը մարդկային բանականության ժխտումն է: Բայց ամեն մարդ ինչպես ինքնասպանության իր ձևը, այնպես էլ Աստվածն ունի: Ցատկի շատ տեսակներ կան, կարևորը բուն ցատկն է: Այդ թողության տվող ժխտումները, եզրահանգումային հակասությունները, որոնք մերժում են դեռևս չհաղթահարված արգելքներն անգամ, նույն հաջողությամբ (սույն դատողությունը հենց այդ պարադոքսին է հանգում) թե՛ որոշակի կրոնական ներշնչանքի և թե՛ ռացիոնալ մտայնության արդյունք կարող են լինել: Ու բոլորն էլ ձգտում են հավերժության, այսինքն ցատկը հենց դրա համար է տեղի ունենալ:

Նորից նկատենք, որ այս էսսեում արծարծվող դատողությունները ոչ մի առնչություն չունեն մեր լուսավորյալ դարում չափազանց շատ տարածված դիրքորոշման հետ, ըստ որի ցանկացած էություն տրամաբանական է և նպատակ ունի բացատրել աշխարհը: Իհարկե, եթե մենք ընդունում ենք, որ աշխարհը հնարավոր է բացատրել, ինքնին դա անելը դժվար չէ: Նման մտայնությունը թերևս օրինաչափ է, բայց առնչություն չունի այս դատողությունների հետ: Իրոք, մեր խնդիրը այն տրամաբանության ընթացքը բացատրելն է, որը ելման կետ ունենալով աշխարհը անիմաստ հռչակած փիլիսոփայությանը, վերջիվերջո այդ նույն աշխարհում և՛ իմաստ է գտնում, և՛ խորություն: Այս դեպքում կրոնական մտայնությունն ամենավերամբարձն է. զուր չէ, Որ իռացիոնալ թեմաներին բացահայտ նախապատվություն է տրվում: Բայց, բոլոր դեպքերում, ամենաարտառոցն ու նշանակալիցն աշխարհի ստեղծմանը տրամաբանական իմաստ հաղորդելն է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ սկզբում ամեն ինչ տարերային էր թվում: Նախ

քան մեզ հետաքրքրող հետևանքներին անդրադառնալը, չենք կարող չհիշատակել ձգտման այդ նոր յուրահատկության մասին:

Ես կքննեմ միայն «Գիտավորություն» հասկացությունը, որը շրջանառության մեջ դրին Հուսեյնի ու ֆենոմենոլոգները: Այդ մասին արդեն ակնարկվել է: Եթե ուղղակի ասենք՝ հուսեյնի մեթոդը ժխտում է դասական ռացիոնալության մեթոդները: Նորից կրկնենք՝ մտածել, չի նշանակում մեկ չափանիշով հայտարարի բերել ամեն ինչ, մեկ, ընդհանուր սկզբունքով բացատրել երևույթները: Մտածելը նախ և առաջ նորից տեսնել սովորելն է, միտքը իրերին ուղղելը, յուրաքանչյուր երևույթի համար առանձնահատուկ պայմաններ ստեղծելը:

Այլ կերպ ասած, ֆենոմենոլոգիան հրաժարվում է աշխարհը բացատրելուց, բավարարվում միայն ապրածի նկարագրությամբ: Այն միանում է աբսուրդ մտածողության՝ երկուսի համար էլ ելակետային պնդմանը՝ ճշմարտություն չկա, կան ճշմարտություններ: Երեկոյի զեփյուռից մինչև ուսիս դրված ձեռքն իրենց ճշմարտություններն ունեն: Գիտակցությունը հենց նրանց վրա էլ ուղղում է ուշադրությունն ու պարզաբանում: Գիտակցությունը ուսումնասիրման օբյեկտ չի ստեղծում, պարզապես ուշադրությանը սևեռում է ինչ-որ բանի, իրենից ներկայացնում է ուշադրության գործողություն և Բերգսոնի արտահայտությամբ՝ նման է ճառագայթները հանկարծակի որևէ առարկայի ուղղած պրոյեկտող լապտերի: Տարբերությունն այն է, որ կապակցված սցենար գոյություն չունի, այլ լոկ միմյանց հաջորդող անկապ կադրեր: Այդ կախարդական լապտերի համար բոլոր օբյեկտները հավասարազոր արժեք ունեն: Գիտակցությունը փորձնական նպատակով ուշադրությանն արժանացրած առարկաներին ստիպում է անշարժանալ կախյալ վիճակում և իր մտասևեռման ուժով մեկուսացնում: Նման դիրքերում նրանք որևէ դատողության հետ առնչություն չունեն: Հենց սա է գիտակցությունը բնորոշող «դիտավորությունը», միայն թե բառն այս դեպքում արտահայտում է ոչ թե նպատակաուղղվածության, այլ «սևեռման» իմաստ և լոկ տեղագրական նշանակություն ունի:

Առաջին հայացքից, թվում է, ոչինչ չի հակասում աբսուրդ մտածողությանը: Հենց աբսուրդ մոտեցմանն է բնորոշ (գոնե առաջին հայացքից) մտքի բացահայտ գսավածությունը, որը հրաժարվելով բացատրել, սահմանափակվում է լոկ նկարագրությամբ: Կամավոր կարգապահությունը որքան էլ արտառոց թվա, շատ է հարստացնում փորձն ու իր ողջ գունագեղությամբ վերստեղծում աշխարհը: Չէ՞ որ մտածողության մեթոդները, ինչպես այս, այնպես էլ մնացած բոլոր դեպքերում, երկու կողմ ունեն՝ հոգեբանական ու մետաֆիզիկական: Իսկ սա նշանակում է, որ

յուրաքանչյուր մեթոդ երկու ճշմարտություն է պարունակում: Եթե միտումնավորության հասկացությունը հավակնում է ներկայացնել միայն հոգեբանական կողմնորոշումը, ըստ որի իրականությունը կարելի է սպառել, բայց չբացատրել, ապա լիովին համընկնում է աբսուրդ մտածողությանն ու կողմնորոշմանը: Նման մտածողությունը ձգտում է հաշվարկել այն, ինչը չի կարողանում գերազանցել, և հաստատում է, որ միասնականության սկզբունքի բացակայության դեպքում միտքը կտրոդ է իր ուրախությունը գտնել վարձի յուրաքանչյուր օբյեկտը նկարագրելու ու հասկանալու մեջ: Այս դեպքում օբյեկտների ճշմարտությանը հոգեբանական բնույթ ունի և վկայում է լուկ այն «հետաքրքրության» մասին, որ ունակ է առաջացնել իրականությունը: Այսպես միայն կարելի է արթնացնել քնած աշխարհն ու մտքի համար կենդանի պահել: Բայց եթե ճշմարտության այս հասկացությունը վարձում ենք տարածել իր շրջանակներից դուրս և ցանկանալով բացահայտել յուրաքանչյուր ուսումնասիրվող օբյեկտի «էությունը»՝ ռացիոնալ հիմք ենք փնտրում, փորձի ընթացքում ի հայտ է գալիս ինչ-որ խորխորատ, որն անմատչելի է աբսուրդ մտածողության համար: Վերջինս հրաշալի լուսաբանում են հենց միտումնավորության «պայմաններում», համեստության ու ինքնավստահության միջև տատանումների ժամանակ ի հայտ եկող ֆենոմենոլոգիական մտածողության առկայծումները:

Երբ Հուսեռլը խոսում է «ժամանակից դուրս գտնվող էությունների» մասին, թվում է, թե Պլատոնին ենք լսում: Ամեն ինչ բացատրվում է ոչ թե մի բանով, այլ ամեն ինչը՝ ամեն ինչով: Այստեղ ես տարբերություն չեմ տեսնում: Իհարկե, ոչ ոք չի ուզում, որ յուրաքանչյուր նկարագրության վերջում գիտակցության «բացահայտած» գաղափարներն ու էությունները համարվեն կատարյալ մոդելներ: Ոմանք պնդում են, որ իբր այդ մոդելները առկա են ընկալման ամեն մի փուլում: Չկա այլևս այնպիսի մեն-միակ գաղափարը, որ ամեն ինչ բացատրի, կան անթիվ-անհամար հասկացություններ, որոնք իմաստ են հաղորդում անթիվ-անհամար առարկաների: Այսպիսով, աշխարհը քարանում, բայց լուսաբանվում է: Ինտուիտիվ դառնալով հանդերձ, պլատոնյան ռեալիզմը մնում է ռեալիզմ: Կիերկեգորն ապավինում է իր Աստծուն, Պարմենիդեսը գլորվում է Միակության գաղափարի անդունդը, ուր և բխվում է վերացական բազմաստվածությանը: Ավելին, զգայախաբություններն ու հնարքները դառնում են «ժամանակից դուրս գտնվող տարբեր»: Գաղափարների նոր աշխարհում «կենտավրոսի» կատեգորիան կողք-կողքի է դրվում անհամեմատ համեստ «մետրոպոլիտենի» հետ:

Աբսուրդ մարդու՝ աշխարհի բոլոր դեմքերը առանձնաշնորհյալ համարելու զուտ հոգեբանական մոտեցման մեջ և՛ ճշմարտություն կա, և՛ դառնություն: Եթե առանձնաշնորհյալ են, ուրեմն նաև համարժեք: Սակայն այս ճշմարտության մետաֆիզիկական բնույթն այն հեռուներն է տանում, ուր բնագրական կանխագգացմամբ ակամա նկատում ես Պլատոնի մոտիկությունը: Իրոք, մենք հանգում ենք այն մտքին, որ յուրաքանչյուր կերպար պետք է ունենա առանձնաշնորհյալ բնույթ: Այս իդեալական, առանց ստորակարգ ման աշխարհի բանակը կազմված է միայն գորավարներից: Այո, գերազանցության մասին խոսք այլևս չի կտրող լինել: Բայց մտածողության նման կտրուկ շրջադարձը վերականգնում է տիեզերքի խորությունները չափող հատվածային ներունակությունը:

Արդյո՞ք տվյալ հասկացությունը մեկնաբանելիս ես շատ հեռուները չեմ գնում, մանավանդ որ առաջադրողներն անգամ չափազանց զգույշ են եղել: Պարզապես ուզում եմ մեջբերել Հուսեռլի հետևյալ պնդումը, որը չնայած արտաքուստ արտառոց է թվում, բայց, եթե վերը ասվածը հիշենք, չենք կարող չզգալ կուռ տրամաբանությունը. «Այն, ինչ ճշմարիտ է, ճշմարիտ է ինքնին, բացարձակապես, ճշմարտությունը մեկն է, նման իրեն ու նույնական, անկախ այն բանից՝ ընդունողը մա՞րդ է, հրե՞շ, հրեշտա՞կ, թե՛ աստված»: Չեմ կարող ժխտել, բանականությունը հաղթանակում է և այդ մասին շեփորում ողջ ուժով: Բայց աբսուրդ աշխարհում նման ինքնահաստատումն ի՞նչ կարող է նշանակել: Հրեշտակներին կամ Աստծուն հատուկ ընկալումներն ինձ համար բացարձակապես իմաստ չունեն: Ես երբեք չեմ հասնի այն երկրաչափական տարածքին, ուր աստվածային բանականությունը կարդարացներ իմ դատողությունները: Մենք այստեղ կրկին գործ ունենք ցատկի հետ, որը չնայած վերացական է, ինձ չի մղում մոռանալ այն, ինչ ինքս չեմ ուզում մոռանալ: Երբ քիչ անց Հուսեռլը բացականչում է՝ «Նույնիսկ եթե ձգողականության օրենքին ենթակա բոլոր մարմիններն անհետանային, օրենքը չէր վերանա, պարզապես չէր ունենա կիրառման հնարավորություն», ես հասկանում եմ, որ գործ ունեմ մետաֆիզիկական սփոփանքի հետ: Եվ եթե ուզում եմ այն շրջադարձը տեսնել, ուր մտածողությունը հեռանում է ակներևության ուղուց, բավարարվում եմ Հուսեռլի հարակից դատողությանը ծանոթանալով, որ նա կատարում է մտավոր գործունեության վերաբերյալ. «Եթե մենք կարողանայինք ակնդետ հետևել հոգեկան երևույթների ճշգրիտ օրենքներին, նրանք մեզ բնական գիտությունների հիմնարար օրենքների նման հավերժական ու անփոփոխ կթվային: Հետևաբար այդ օրենքներն իրենց ուժը չէին կորցնի անգամ հոգեկան երևույթների չգոյության դեպքում»: Նշանակում է, եթե հոգեկան գործունեությունը վերանար, օրենքները կմնային: Հիմա արդեն ինձ հասկանալի է դառնում, որ Հուսեռլը հոգեբանական ճշմարտությունները վարձում է վերածել

ռացիոնալ կանոնների. այսպիսով նա ժխտում է մարդկային բանականության միավորող ուժը, կողմնակի ճանապարհով նետվում հավերժական բանականության գիրկը:

«Կոնկրետ աշխարհի» հուսեռյան թեման ինձ չի կարող զարմացնել: Ասել, թե բոլոր էությունները ձևական չեն, նյութականներ էլ կան, որ առաջինները տրամաբանության, երրորդները կոնկրետ գիտության օբյեկտ են, ինձ համար լոկ սահմանման խնդիր է: Վերացականը, հավատացնում են ինձ, պարզապես որոշակի ընդհանրության անորոշ մասն է: Բայց հենց այս տատանումներն ինձ օգնում են պարզելու հասկացությունների խճճվածությունը: Այսպես, ասվածը կարող է նշանակել, որ իմ ուշադրության որոշակի օբյեկտը՝ երկինքը, վերարկուիս վրա ցայտած ջրի կաթիլները պահպանում են այս իրականության որոշակիությունը, որի վրա սևեռվել է իմ հետաքրքրությունը: Ես դա չեմ կարող ժխտել: Բայց ասվածը կարող է նշանակել նաև, որ ինքնին վերարկուն ընդհանրական է, ունի իր յուրահատուկ ու ինքնաբավ էությունը, պատկանում է ձևերի աշխարհին: Այս դեպքում արդեն ինձ պարզ է դառնում, որ փոխվել է միայն ուսումնասիրման հաջորդականությանը: Այս աշխարհը դադարում է գերագույն տիեզերքի արտացոլումը լինելուց, բայց երկնային ձևերը տպավորվում են անթիվ անհամար երկրային կերպարների վրա: Այսինքն, ըստ էության ինձ համար ոչինչ չի փոխվում: Այս ամենի մեջ ես տեսնում եմ ոչ թե որոշակիության ձգտում, մարդկային ճակատագրի իմաստի որոնում, այլ ինտելեկտուալություն, որը ակնհայտորեն հակված է մասնավորը վերածելու ընդհանրականի:

Նման ակնհայտ հակասության մեջ, պարզվում է, զարմանալի ոչինչ չկա՝ միտքը ինքնաժխտման կարող է հասնել երկու հակադիր ճանապարհներով՝ բանականության պարտությամբ կամ հաղթանակով: Հուսեռի վերացական Աստվածն այնքան էլ հեռու չէ Կիերկեգորի շենշող Աստծուց: Բանականությունն ու իռացիոնալությունը նույն եզրահանգմանն են տանում: Կարևորը ճանապարհը չէ, այլ նպատակին հասնելու ցանկությունը: Վերացական և կրոնական փիլիսոփաները ծնունդ են առնում նույն մտավոր շփոթից և տառապում նույն տագնապներով: Գլխավորը բացատրելն է, որովհետև թախիծը իմացությունից գորեղ է: Նշանակալից է, որ ժամանակակից մտածողությունը ամենից շատ է հագեցած աշխարհի անիմաստության փիլիսոփայությամբ ու տարանջատված իր եզրահանգումներով: Մտածողությունն անընդհատ տատանվում է իրականությունը ռացիոնալացված մոդելների տրոհող ծայրահեղ ռացիոնալության և նույնքան ծայրահեղ իռացիոնալ իրականության միջև, որը ձգտում է աստվածացնել նույն այդ իրականությունը: Բայց

այս տարբերությունը թվացյալ է: Երկու դեպքում էլ խոսքը կեցության հետ հաշտվելու մասին է, իսկ դրա համար հարկավոր է միայն ցատկ կատարել: Միշտ էլ սխալմամբ կարծել են, թե «Բանականություն» հասկացությունը մի իմաստ ունի: Իրականում, որքան էլ արտաքուստ որոշակի թվա, այն բոլոր մյուս հասկացությունների նման փոփոխական է: Բանականությունը մարդկային բնույթ ունի, բայց կարող է շրջվել դեպի աստվածայինը: Պլուտինից սկսած, որն առաջինը կարողացավ բանականությունը հաշտեցնել հավերժության գաղափարի հետ, բանականությունը սկսել է շեղվել իր ամենաթանկ՝ հակասության սկզբունքից, առաջնորդվելու համար տարօրինակ, մոգական հարմարվողականության^Թ սկզբունքով: Բանականությունը ոչ թե բուն միտքն է, այլ միջոցը: Մարդկային մտածողությանը թախիծ է ամենից առաջ:

Բանականությունը կարողացավ մեղմել Պլուտինի թախիծը, այժմ էլ հավերժության ծանոթ դեկորացիաներով մեղմում է ժամանակակից տազնապր: Աբսուրդ մտածողության բնույթը բոլորովին այլ է: Աշխարհը նրա համար ոչ այնքան ռացիոնալ, ոչ էլ իռացիոնալ՝ պարզապես անտրամաբանական է: Վերջիվերջո հուսեռյան տրամաբանությունը խախտում է բոլոր սահմանները, իսկ աբսուրդն ընդհակառակը, իր համար սահմանափակումներ է ստեղծում, որովհետև ուժ չունի հաղթահարելու տազնապր:

Մյուս կողմից Կիերկեգորը պնդում է, որ բանականությունը ժխտելու համար մեն-միակ սահմանափակումը բավական է: Աբսուրդն այդքան հեռու չի դնում, նրա համար սահմանափակումները լոկ բանականության հավակնոտությունները չափավորելու միջոց են: Ըստ էկզիստենցիալիստների՝ իռացիոնալությունը այն բանականությունն է, որը կորցնում է հողն ու հասնում ինքնաժխտման: Աբսուրդը հստակ բանականություն է, որը գիտի սեփական սահմանները:

Իր դժվարին ճանապարհի վերջում աբսուրդ մարդը բացահայտում է սեփական մղումները: Ներքին անկեղծ պահանջները համեմատելով մինչ այդ առաջադրվածի հետ, նա անսպասելիորեն զգում է, որ իր պահանջներն աղավաղել են: Հուսեռլի տիեզերքում աշխարհն այնքան է որոշակիանում, որ անիմաստ և դառնում մարդուն բնորոշ այն ընկալելու ձգտումը: Սեփական գոհունակության համար լոկ Կիերկեգորն իր հայտնություններում այդ ձգտումը հասցնում է ինքնատրացման: Հանցանքը ոչ թե իմացությունն է (այդ իմաստով բոլորն էլ անմեղ են), որքան իմացության ձգտումը: Ահա միակ զանցառությունը, որի հանդեպ աբսուրդ մարդը ունի միաժամանակ և՛ անմեղության, մեղավորության զգացում: Նրան՝ նախկին բոլոր հակասությունների այնպիսի մի լուծում է առաջարկվում, որի շնորհիվ այդ նույն հակասությունները

դառնում են վիճաբանական խաղեր: Բայց ներքին զգացողությունը բոլորովին այլ բան է թելադրում, հակասությունները մնում են՝ սա մի ճշմարտության է, որը չի կարելի անտեսել: Աբսուրդ մարդը քարոզչության կարիք չի զգում:

Իմ դատողությունները ձգտում են հավատարիմ մնալ այն հավաստիություններին, որոնցով կյանքի են կոչվել: Դրանցից է աբսուրդը, այսինքն պառակտումը մտքի ձգտումների ու աշխարհի խաբուսիկության, իմ՝ միասնության կարոտի ու մասնատվող տիեզերքի միջև, պառակտում, որ նաև համախմբում է: Կիերկեգորը վերացնում է իմ ձգտումը, Հուսեռը միավորում է աշխարհը: Ես դա չէի ուզում: Խոսքը, չնայած այդքան տառապանքներին, ապրելու ու մտածելու մասին էր, տառապելու կամ չտառապելու խնդիրը լուծելը:

Ոչ մեկի մտքով չի անցնում հավաստիությունը քողարկելը, աբսուրդը վերացնելով հավասարման անդամներից մեկը կրճատելը: Կարևորը իմանալն էր՝ կարելի՞ է աբսուրդ իրավիճակում ապրել, թե տրամաբանությունը հանգում է մահվան: Ինձ հետաքրքրում է ոչ թե փիլիսոփայական, այլ ինքնասպանությունն ինքնին: Ես ուզում եմ այդ քայլն ազատել զգացմունքային բովանդակությունից, ճշտել տրամաբանությունն ու անկեղծությունը: Աբսուրդ մտքի համար ցանկացած այլ դիրքորոշում նշանակում է խաբեության, նահանջ այն ամենից, ինչ ինքը ճշգրտել էր: Հուսեռը խոսում էր «գոյության մի քանի մեզ լավ ծանոթ ու հարմար, արմատացած սովորությամբ ապրելու ու մտածելու» պայմաններից խույս տալու անհրաժեշտության մասին, բայց վերջնական ցատկն իր բոլոր տարրերով վերադարձրեց հավերժությունը: Այդ ցատկն, ինչպես Կիերկեգորին է թվում, ամենևին վտանգավոր չէր: Ընդհակառակը, վտանգավորը ցատկին նախորդող անորսալի պահն էր: Ազնվությունը նման գլխապտույտ հեղեղի ժամանակ ալիքների վրա մնալ կարողանալն է, մնացածը խաբկանք է: Ես գիտեմ նաև, որ ոչ ոք Կիերկեգորի նման անգորությունից հուզիչ ներշնչումներ չի ունեցել: Հուսահատության հանդիպում ենք նաև պատմության անտարբեր էջերում, բայց այն մեր այսօրվա կենսական դատողություններում տեղ չունի:

ԱԲՍՈՒՐԴ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Գլխավորն արդեն արված է: Այժմ ես ունեմ մի քանի ճշմարտության, որոնցից չեմ կարող հրաժարվել: Ես ընդունում եմ միայն այն, ինչ գիտեմ, ինչին հավատում եմ և ի վիճակի չեմ ժխտել, անտեսել: Իմ՝ անորոշ թախիժով ապրող էությունից կարելի է հեռացնել ամեն ինչ, բացի միասնականության ցանկությունից, վճռականության ձր տումից, պարզության ու կապակցվածության պահանջից: Ինձ շրջապատող,

նվաստացնող ու հիացմունք պատճառով աշխարհում ես ի վիճակի եմ մերժել ինչ ուզեմ՝ բացի քառսից, գերիշխող պատահականություններից ու անիշխանականությունից առաջացած աստվածային հավասարակշռությունից: Չգիտեմ, աշխարհն ունի՞ արդյոք իրեն գե-րազանցող իմաստ, բայց վստահ եմ, որ ինձ հայտնի չէ այդ իմաստը և հնարավոր էլ չէ իմանալ: Բայց ի՞նչ արժեք ունի այն ինձ համար, եթե իմ ընկալման շրջանակից դուրս է: Ես ունակ եմ ընկալելու միայն մարդկային հասկացությունները՝ ինչին ձեռք եմ տալիս, ինչը դիմադրում է ինձ: Ինձ հայտնի է նաև, որ ի վիճակի չեմ հաշտեցնելու երկու հավաստիությունները՝ բացարձակի, միասնականության իմ ձգտումը և այս աշխարհի համատեղելիությունը ռացիոնալ ու տրամաբանական սկզբունքներին: Ուրիշ և ի՞նչ ճշմարտության կարելի է ընդունել առանց հույսի միջամտության, որը ես չունեմ և որն ավելորդ է իմ իմացության շրջանակներում:

Եթե ես անտառում ծառ, կենդանիների մեջ կատու լինեի, կյանքը կունենար իմաստ, ավելի ճիշտ՝ նման հարց չէր ծագի, քանի որ աշխարհի մասնիկը կլինեի: Ես կլինեի այս աշխարհը, որին այժմ իմ ողջ իմացությամբ ու հարազատանալու պահանջով ներփակ եմ: Իմ չնչին բանականությունն ինձ հակադրում է արարված ամեն ինչի, և ես չեմ կարող գրչի մի հարվածով այն ժխտել: Հետևաբար, պարտավոր եմ պահպանել ինչն իրավացի եմ համարում, ինչը նույնիսկ կամքիս հակառակ ինձ ճշմարիտ է թվում: Ի վերջո ի՞նչ է ընկած այդ հակամարտության հիմքում, աշխարհի և իմ գիտակցության խզման կետում, եթե ոչ իմ իմացությունը: Ուրեմն, հակամարտությունը պահպանելու համար ես պետք է միշտ, անընդհատ զգոն դարձնեմ, միշտ, անընդհատ լարեմ գիտակցություն: Տվյալ պահին, ահա, ա՛յս չպետք է մոռանալ: Տվյալ պահին աբսուրդը, որն այնքան ակնհայտ ու անմատչելի է, ներխուժում է մարդկային կյանքի մեջ, իր համար հարազատ միջավայր ստեղծում: Դարձյալ այդ նույն պահին միտքը կարող է շեղվել ճշգրիտ դատողության ստերջ, անբովանդակ ուղուց, վերադառնալ առօրյա կյանքի անդիմությանը, իր ըմբոստությամբ ու հստակատեսությամբ ապրել անանուն, անհայտ աշխարհում: Մարդը դադարում է հուսալ: Վերջիվերջո ներկայի թագավորությունը դառնում է իր դժոխքը, բոլոր հիմնահարցերը սրությամբ ի հայտ են գալիս: Վերացական հավաստիությունը նահանջում է ձևերի ու գույների քնարականության առաջ, հոգեկան հակամարտությունները կրկին մարմին են առնում, թշվառ ու հոյակապ ապաստան գտնում մարդկային սրտում:

Ոչ մի հակամարտություն չի վերանում, բայց բոլորը ձևափոխվում են: Մեռնե՞լ, մի ցատկով խույս տա՞լ նրանցից, թե յուրովի վերակառուցել գաղափարների շենքը:

Կամ էլ ընդհակառակը, աբսուրդի հետ տանջալից ու հրապուրիչ գրա՞գ գալ: Մի վերջին ճիգ էլ գործադրենք ու կատարենք մեր բոլոր եզրահանգումները: Այդ ժամանակ մարմինը, քնքշանքը, ստեղծագործությունը, գործունեությունը, մարդկային ազնվականությունը տեղ կգրավեն այս անիմաստ աշխարհում: Մարդը վերջապես կորոճա իր մեծությունը սնող աբսուրդի գինին ու անտարբերության հացը:

Սկզբունքորեն ընդունենք այս մեթոդը, որի բնույթը հետևողականորեն իրենը պնդելն է: Իր ճանապարհի որոշակի մասում աբսուրդ մարդը փորձության է ենթարկվում: Պատմության մեջ շատ կան կրոններ և նույնիսկ անաստված քարոզիչներ, այն ինչ աբսուրդ մարդուն առաջարկում են ցատկ կատարել: Նա կարող է պատասխանել միայն, որ պահանջն այնքան լավ չի հասկանում, անհրաժեշտություն էլ չի զգում: Ինքը կուզեր անել լոկ այն, ինչ լավ է ըմբռնում: Նրան հավատացնում են, որ դա իր հպարտության մեղքով է, բայց ինքը չգիտի էլ մեղքի բնույթը, բացատրում են, որ վերջիվերջո կարող է դժոխք ընկնել, բայց այնքան երևակայություն չունի, որպեսզի պատկերացնի նման տարօրինակ ապագան: Նույնիսկ հավերժական կյանքի իրավունքը կորցնելը նրան աննշան բան է թվում: Աբսուրդ մարդուն կուզեին գիտակցել տալ իր մեղքը, բայց ինքն իրեն անմեղ է համարում: Ճիշտն ասած, նա միայն դա է զգում՝ իր անշիջանելի անմեղությունը: Հենց այդ զգացողությունն է նրան ամեն ինչ թույլատրում և որպես արդյունք ինքն իրեն ստիպում է ապրել բացառապես իմացածով, այնպիսին, ինչպիսին կա, և անորոշ ոչնչի չհաղորդակցվել: Նրան պատասխանում են, որ հավաստի ոչինչ չկա, բայց սա արդեն ինքնին հավաստիություն է: Ինքն ուզում է հենց դրա հետ էլ գործ ունենալ և իմանալ՝ հնարավո՞ր է արդյոք ապրել առանց վերին միջամտության:

Հիմա արդեն ես կարող եմ ուղղակի անդրադառնալ ինքնասպանության հասկացությանը: Մենք ուրեմն զգացինք, թե ինչպես կարելի է լուծել խնդիրը, որին, սակայն, այժմ հակառակ տեսանկյունից պետք է մոտենալ: Քիչ առաջ խոսվում էր այն մասին, թե կյանքն ապրելու համար պե՞տք է իմաստ ունենա: Այժմ ընդհակառակը, պարզվում է, որ որքան անիմաստ լինի, այնքան լավ կարելի է ապրել: Հարթել ճակատագրի փորձությունները նշանակում է համակերպվել: Որովհետև նման ճակատագրի հետ կարելի է հաշտվել միայն այն դեպքում, երբ գիտակցությունը բացահայտում, որոշակի է դարձնում աբսուրդ լինելը: Եթե մենք տնտեսում ենք մեր կյանքի հակասություններից մեկն ու մեկը, նշանակում է փորձում ենք խույս տալ: Գիտակցության ընդլուծումից հրաժարվելը հավասարագոր է խնդիրը շրջանցելուն: Այս ձևով է անընդհատ հեղափոխության թեման փոխադրվում անձնական փորձառության ոլորտը:

Ապրել, ուրեմն, նշանակում է կյանքի կոչել արտուրդը, իսկ արտուրդը կյանքի կոչել նշանակում է կարողանալ ուղիղ նրա աչքերին նայել: Ի հակադրություն էվրիդիկեի, արտուրդը մեռնում է այն ժամանակ, երբ նրանից աչք ենք թեքում:

Ահա թե ինչու փիլիսոփայական սկզբունքային դիրքորոշումներից մեկը ընդվզումն է, որը մարդու և սեփական անգիտության մշտական առճակատման արդյունքն է: Այն ձգտում է ծայրահեղ պարզության և ամեն ակնթարթ հարց ականի տակ դնում ողջ աշխարհը: Այնպես, ինչպես վտանգը մարդուն ընդվզման բնույթն զգալու անփոխարինելի հնարավորություն է ընձեռնում, այդպես էլ մետաֆիզիկական ընդվզումը իմաստ է հաղորդում փորձառությանը: Ընդվզմամբ մարդն անընդհատ հավաստում է իր գոյությունը, չնայած գրկված է ներշնչանքից ու հույսից: Ընդվզումը ճակատագրի բռնի ուժի ընդունումն է, բացառությամբ այն համակերպության, որով պիտի ուղեկցվի:

Այժմ մենք տեսնում ենք, թե արտուրդի փորձառությանը որքան հեռու է ինքնասպանությունից: Կարող էր թվալ նույնիսկ, որ ընդվզմանը հաջորդում է ինքնասպանությունը, բայց դա այդպես չէ, մեկը մյուսի տրամաբանական ավարտը չի հանդիսանում: Ավելին, ինքնասպանությունը ընդվզման բացարձակ հակադրությունն է, որովհետև ենթադրում է համակերպություն: Ինքնասպանությունը ցատկի նման իր ճակատագիրն ընդունելն է: Ամեն ինչ ավարտված է, մարդը հանձնվում է իրեն բաժին ընկած պատմությանը: Նա արդեն տեսնում է իր բացառիկ ու ողբերգական ապագան, ընդառաջ նետվում: Ինքնասպանությունը յուրովի է լուծում արտուրդը՝ դատապարտելով նույնպիսի վախճանի: Բայց ես գիտեմ, որ արտուրդի գոյության նախապայմանը անլուծելիությունն է: Արտուրդը խույս է տալիս ինքնասպանությունից այն չափով, ինչ չափավոր միաժամանակ հանդիսանում է մահվան գիտակցումն ու մերժումը: Այսպիսով, արտուրդը նման է կոշիկի քողին, որը մահապարտը ի հեճուկս ամեն ինչի, որպես վերջին, ծայրահեղ միտք իր ճակատագրական անկմանը չհասած՝ նկատում է մի քանի մետրի վրա: Անձնասպանի ճիշտ հակապատկերը մահապարտն է:

Նման ընդվզումը կյանքին իմաստ է տալիս, իր ողջ տևողությամբ գոյությանը կշիռ հաղորդում: Ակնակապերից զերծ մարդու համար ավելի առինքնող տեսարան չի կարող լինել, քան բանականության պայքարն իրենից վեր գտնվող իրականության դեմ: Մարդկային հպարտության այդ տեսարանն, իրոք, ոչնչի հետ հնարավոր չէ համեմատել: Անիմաստ են նվաստացման բոլոր փորձերը: Ինչ-որ հզոր ու ինքնատիպ բան կա մտածողության՝ ինքն իրեն թելադրած կանոնակարգի, ամեն առումով թրծված կամքի ու դեմ առ դեմ տեղի ունեցող մենամարտի մեջ՝ իր

անմարդկայնությամբ մարդու մեծությունը սնող իրականությունն աղքատացնել, նշանակում է սնանկացնել հենց իրեն: Ես հիմա եմ հսականում, թե ինչու ուսմունքները, որոնք վարձում են բացատրել ամեն ինչ, միաժամանակ ինձ անգոր են դարձնում: Նրանք բեռնաթափում են ինձնից իմ կյանքի ծանրությունը, որ պետք է մենակ կրելի: Այս դեպքում ես չեմ կարող հանդուրժել, որ սկեպտիկական մետաֆիզիկական եզրեր գտնի ժխտման բարոյականության հետ:

Իրականությանը չընդունելու երկու ձևերը՝ բանականությունն ու ընդվզումը, ժխտման հակադրությունն են: Ի հեճուկս կյանքի, նրանց ոգեշնչում է այն համառությունն ու անհնազանդությունը, որ կա մարդկային սրտում: Խոսքը ոչ թե սեփական ցանկությամբ, այլ անհաշտ մեռնելու մասին է: Ինքնասպանությունն անբացատրելի է՝ արտուրդ մարդը կարող է միայն սպառվել, սպառվել: Արտուրդը այն ծայրահեղ լարումն է, որ նա միշտ պահպանում է մեն-մենակ, սեփական ուժերով, գիտի՝ գիտակցությունն ու ամենօրյա ընդվզումը վկայում են իր միակ ճշմարտությունը՝ կոչը: Սա առաջին հետևությունն է:

Եթե ես շարունակում եմ իմ ընդունած հասկացություններից բխող հետևություններ (միայն հետևություններ) կատարել, բախվում եմ երկրորդ հակասությանը: Քանի որ ինքս իմ մեթոդին հավատարիմ եմ մնում, մետաֆիզիկական ազատության խնդրին անդրադառնալու կարիք չի առաջանում: Ինձ չի հետաքրքրում մարդու ազատ լինել-չլինելը, ինձ մատչելի է միայն իմ սեփական ազատության փորձը: Չնայած այս մասին էլ ես ոչ թե ընդհանուր պատկերացում, այլ մի քանի որոշակի խորհրդածություններ կարող եմ ունենալ: «Ներքին ազատության» խնդիրն անիմաստ է, որովհետև յուրովի առնչվում է Աստծո խնդրին:

Որոշելու համար, թե ազա՞տ է մարդը, նախօրոք պետք է պարզել՝ գլխին տեր ունի՞: Խնդրի բացառիկ արտուրդության պատճառն այն է, որ ազատության գաղափարն արտահայտող հասկացությունը միաժամանակ զրկում է այն ամեն իմաստից: Աստծո համար դա ոչ այնքան ազատության, որքան չարի խնդիրն է: Երկրնտրանքն ակնհայտ է՝ կամ մենք ազատ չենք, և ամենագոր Աստվածն է պատասխանատու չարի համար, կամ մենք ազատ ենք և պատասխանատու, բայց Աստված ամենագոր չէ: Փիլիսոփայական դպրոցներն իրենց տարբեր ուղղություններով չեն կարողանում հարթել այս մտայնության սրությունը:

Ահա թե ինչու ես ինձ թույլ չեմ տալիս գնահատել կամ պարզապես որոշակիացնել այն հասկացությունը, որն իմ անձնական փորձառության

շրջանակներից դուրս գալուն պես խույս է տալիս ինձնից, իմաստագրկվում: Ինքս ի վիճակի չեմ հասկանալու ի վերուստ ինձ տրված ազատությունը, գերապատվության զգացումը կորցրել եմ: Ես կարող եմ ընկալել միայն կալանավորի, ժամանակակից որևէ պետության հպատակի ազատությունը: Ինձ հայտնի միակ ազատությունը մտքի և գործունեության ազատությունն է, քանի որ արտուրդը, ինձ զրկելով հանդերձ հավերժական ազատության բոլոր հնարավորություններից, ոչ միայն վերա դարձնում, այլև հրահրում է իմ գործելու ազատությունը: Հույսի և ապագայի նման կորուստը ավելացնում է անհատի ներքին ուժերը:

Նախքան արտուրդի հետ առնչվելը առօրյա մարդն ապրում էր իր նպատակներով, գալիք հոգսերով կամ արդարացումներով (կարևոր չէ, թե ում կամ ինչի առջև): Նա ծանրութեթկ է անում իր հնարավորությունները, մտածում ապագայի՝ թռչակի կամ տղաների աշխատանքի մասին ու դեռ հավատում, որ կյանքում ինչ-որ բան կարելի է կառավարել: Ըստ էության այնպես է պահում իրեն, կարծես ազատ է, չնայած բոլոր փաստերը հակառակն են հավաստում: Արտուրդն է միայն վերացնում այդ համոզվածությունը: «Ես կամ»-ի գաղափարը, իմ ապրելակերպը, ըստ որի ամեն ինչ կարծես իմաստավորված է (եթե նույնիսկ պատեհ-անպատեհ առիթով հակառակն եմ ասում)՝ հիմնովին ժխտվում է հնարավոր մահվան արտուրդությամբ: Ապագայի մասին մտածելը, նպատակ, նախասիրություններ ունենալը ենթադրում են հավատ այդ ապագայի նկատմամբ նույնիսկ այն դեպքում, երթ պնդում են հակառակը: Բայց արտուրդը հայտնաբերելու պահից ես գիտեմ, որ գերագույն ազատություն՝ լինելու ազատություն, միակը, որ կարող էր ճշմարտության հիմք ծառայել, գոյություն չունի: Բացարձակ իրականությունը՝ մահը մոտ է, շատ մոտ, որով և ամեն բան ավարտվում է: Առավել ես ևս ազատ չեմ իմ ձգտումների մեջ, ես ստրուկ եմ, ընդ որում առանց անընդհատ հեղափոխության, անգամ արհամարհանքի հնարավորության: Առանց հեղափոխության ու արհամարհանքի կարելի՞ է ստրուկ լինել: Առանց հավերժական կյանքի հավատի, այս բառի լիարժեք իմաստով, հնարավոր է ազատության մասին խոսել:

Բայց արտուրդ մարդը միաժամանակ հասկանում է, որ մինչ այդ պահը ազատության կանխադրությին կապված է եղել պատրանքներով, որոնցով և ապրել է: Ինչ-որ տեղ դա կաշկանդել է նրան: Այն չափով, ինչ չափով որ ինքը կյանքի նպատակ է ունեցել, նպատակին հասնելու միջոցների դիմել, դարձել է իր ազատության ստրուկը: Այդպես ես կարող եմ, եթե, իհարկե, ուզում եմ, լինել միմիայն ընտանիքի հայր (կամ ճարտարագետ, ժողովրդի առաջնորդ, նամակատան արտահաստիքային աշխատակից): Ես հավատում եմ, որ սեփական ընտրությամբ կարող եմ դառնալ մեկը

կամ մյուսը, բայց անգիտակցորեն եմ հավատում: Միաժամանակ իմ կանխադրույթները Ես համեմատում եմ ինձ շրջապատողների հավատի, իմ միջավայրի նախապաշարումների հետ (ոմանք չափազանց վստահ են, որ ազատ են և այդ միամտությունն այնքան վարակիչ է): Որքան էլ մենք մեզ հեռու պահենք բարոյական ու հասարակական նախապաշարումներից, մասամբ գոնե կրում ենք նրանց ազդեցությունները, իսկ լավագույնները (կան լավ ու վատ նախապաշարումներ) նույնիսկ որոշիչ են դառնում մեր կյանքում: Այսպես՝ աբսուրդ մարդը հասկանում է, որ ինքն իրականում ազատ չէ: Ավելի պարզ՝ այն չափով, որ ես հույս եմ տածում, մտահոգվում եմ այս կամ այն ձևով ապրելու ու գործելու իմ ճշմարտությամբ, այն չափով վերջապես, որ կարգավորում եմ իմ կյանքն ու հենց դրանով ընդունում նրա իմաստ ունենալը, ինքս ինձ դնում եմ իմ պատրաստած արգելափակոցների մեջ: Այլ կերպ ասած, ես նմանվում եմ մտքի և զգացմունքի այն կամակատարներին, որոնք հակակրանք են միայն առաջացնում և որոնք, ես դա տեսնում եմ այժմ, լրջորեն հավատում են մարդու ազատությանը:

Աբսուրդը ցրում է իմ պատրանքները՝ ապագա գոյություն չունի: Ահա՛, ըստ էության իմ ներքին ազատության պատճառը: Ուզում եմ երկու համեմատության անել: Միստիկները նախ փնտրում-գտնում են այն ազատությանը, որին և այնուհետև տրվում են: Խորասուզվելով իրենց Աստծո էության մեջ, ենթարկվելով նրա կանոններին, իրենք էլ իրենց հերթին ազատ են դառնում, իրենց ներքին անկախությունը գտնում են կամավոր ստրկության մեջ: Բայց ի՞նչ արժեք ունի նման ազատությունը: Ավելի շուտ նրանք իրենք իրենց նկատմամբ են ազատ զգում և ոչ այնքան ազատ, որքան՝ ազատագրված: Այդպես էլ մահվան (այս դեպքում ամենաակնհայտ աբսուրդության) դեմ հանդիման գտնվող աբսուրդ մարդն իրեն ազատագրված է զգում ամեն ինչից, բացի այն սևեռուն ուշադրությունից, որ բյուրեղանում է իր հոգում: Նա ի հեճուկս հասարակական կանոնների, վայելում է իր ազատությունը: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում էկզիստենցիալիստական փիլիսոփայության ելակետային դրույթները պահպանում են իրենց բուն արժեքը: Հստակ մտածողության վերականգնումը, փախուստն առօրյա թմբիրից աբսուրդ ազատության անդրանիկ նախադրյալներն են: Նախադրյալներ՝ էկզիստենցիալիստական քարոզի, միաժամանակ ըստ էության չգիտակցված հոգեկ ու և ցատկի համար: Ճիշտ նույն ձևով (սա իմ երկրորդ համեմատությունն է) անտիկ դարաշրջանի ստրուկներն իրենց չէին պատկանում: Նրանց ծանոթ էր միայն այն ազատությունը, որը ոչնչի համար պատասխանատու չէժ: Մահը նույնպես պատրիկյան ձեռքեր ունի, որոնք ճնշում, բայց նաև ազատագրում են:

Սուզվել այս անհատակ ճշմարտության խորքերը և սեփական կյանքում ինքն իրեն բավականաչափ օտար դառնալ՝ առանց սիրահարի հավկուրության նրա սահմանները որոշակիացնելու և մի հայացքով ընդգրկելու համար, նշանակում է հայտնաբերել ազատագրության կարևորագույն սկզբունքը: Ինչպես ամեն գործուն ազատություն, այս նոր անկախությունը իր ժամանակավոր սահմաններն ունի: Այն զրկված է հավերժության երաշխիքից, բայց փոխարինում է մահվան պահին չքացող ազատության պատրանքներին: Մահապարտի աստվածային ինքնամփոփումը, որի առջև մի վաղ առավոտ բացվում են բանտի դարպասները, կյանքի անեղծ կրակից բացի ամեն ինչի նկատմամբ նրա անհավատալի անտարբերությունը, մահը և արքուրդը դարձնում են, դա շատ լավ զգացվում է այստեղ, տրամաբանական ազատության միակ սկզբունքները: Այն ազատության, որ միայն մարդկային սիրտը կարող է զգալ ու ապրել: Սա երկրորդ հետևությունն է:

Այսպիսով, արքուրդ մարդու հայացքի առջև տարածվում է շիկացած ու սառած, թափանցիկ ու սահմանափակ մի տիեզերք, ուր ամեն ինչ տրված է, բայց ոչինչ անել հնարավոր չէ և որից այն կողմ կործանում է ու անէություն: Նա կարող է արդեն նման տիեզերքում ապրելու որոշում կայացնել, այնտեղ գտնելով, ամեն հույս մերժելու և առանց մխիթարության ապրելու վճռականության:

Բայց ի՞նչ է նշանակում ապրել նման տիեզերքում: Ապագայի նկատմամբ անտարբերությունից, արված ամեն ինչ սպառելու անհագ ցանկությունից բացի՝ ոչինչ: Կյանքի իմաստի հավատը ենթադրում է արժեքների աստիճանացույց, ընտրություն ու նախապատվություն: Այն ինչ արքուրդի հավատը, ինչպես մենք սահմանեցինք, հակառակն է ուսուցանում: Սա անհրաժեշտ է քննարկման նյութ դարձնել:

Ինձ հետաքրքրում է միայն մի բան՝ կարելի՞ է ապրել առանց տրտնջալու: Ես չեմ ուզում լքել այս կյանքը, ուզում եմ իմանալ՝ կկարողանա՞մ պայմաններին հարմարվել: Արքուրդի հավատը որպես իմ այս մասնավոր մտահոգության պատասխան, փորձառության որակը փոխարինում է քանակով: Եթե ես համոզված եմ, որ կյանքն արքուրդից բացի այլ էություն չունի, զգում եմ, որ նրա հավասարակշռությունը կախված է իմ գիտակցված ընդվզման և այն խավարի մշտական հակամարտությունից, որտեղ խարխափում է. եթե հաշտվում եմ այն մտքին, որ իմ ազատությունն իմաստ ունի ճակատագրի սահմանած շրջանակներում, պետք է ընդունեմ, որ կարևորը ոչ թե լավ, այլ շատ ապրելն է: Հարկ էլ չկա անհանգստանալու, թե նման մտահանգումը գռեհի՞կ է, զգվելի՞ հիանալի՞ է, խղճահարու՞յց: Արժեքի նման դատողությունները մեկընդմիջտ իրենց տեղը զիջում են փաստերի դատողություններին: Ինձ մնում է հետևություններ անել միայն իմ

տեսածից և չտարվել ենթադրություններով: Նման կյանքը, թերևս, բարոյական չի համարվում, բայց չէ՞ որ բուն բարոյականությունն է ինձ մղում անբարոյականության:

Լայն իմաստով շատ ապրելու կյանքի օրենքն անիմաստ է, ճշտման կարիք ունի: Նախ թվում է, թե այն բավարար չափով ուսումնասիրված չէ, մինչդեռ կարող էր մարդկային որոշակի փորձառության մասին գաղափար տալ: Մարդու բարոյականությունը, այդ բարոյականության աստիճանացույցը իմաստավորվում են լոկ կուտակված փորձի քանակով ու բազմազանությամբ: Ժամանակակից կյանքի պայմաններն այնպիսին են, որ մարդկանց մեծամասնությունը կուտակում է նույն սկզբնաղբյուրն ունեցող նույն քանակի փորձառություն: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև անհատի տարերային ներդրումը՝ այն, ինչ «տրված» է իրեն: Բնական է, այդ մասին ես չեմ կարող դատել, որովհետև իմ որդեգրած սկզբունքը, հիշեցնեմ նորից, ինձ թելադրում է հետևություններ անել միայն իմ տեսածից:

Ահա թե ինչու ես հետևցնում եմ, որ հանրային բարոյականությունը ոչ այնքան կապված է իրեն սնող սկզբունքների իդեալական նշանակության, որքան փորձով քննված չափանիշների հետ: Մի փոքր սրամտելով կարելի է ասել, որ հին հույներն ունեին իրենց վայելքների բարոյականությունը, ինչպես մենք ունենք մեր ութժամյա աշխատանքային օրվանը: Բայց շատ մարդ արդեն, որոնց թվում և խիստ ողբերգական ճակատագիր ունեցողները, մեզ զգալ են տալիս, որ կուտակված փորձը փոփոխություն է մտցնում անգամ արժեքների աստիճանացույցի մեջ: Պատկերացրեք մի սովորական արկածախնդրի, որը լոկ իր փորձառության քանակով գերազանցում է բոլոր մրցանիշները (ես դիտմամբ եմ մարտական արտահայտություն օգտագործում) և շահում է սեփական արոյականությունը՝ Մ: Մի կողմ թողնենք, սակայն, ռոմանտիկան է ինքներս մեզ հարցնենք, թե ինչ իմաստ կունենա նման մտայնությունը մի մարդու համար, որը որոշել է չհրաժարվել իր գրագից և խստորեն պահպանել այն, ինչ ինքը խաղի կանոն է կարծում:

Բոլոր մրցանիշները գերազանցել նա՛խ և առաջ, միա՛յն նշանակում է հնարավորին չափ հաճախ հակադրվել այս աշխարհին: Իսկ նման բան առանց հակասությունների ու բառախաղի հնարավոր է: Մի կողմից աբսուրդը սովորեցնում է, որ փորձը կարևոր չէ, մյուս կողմից դրդում հնարավորին չափ շատ փորձ կուտակել: Ինչպես, ուրեմն, չնմանվել վերևում հիշատակված բոլոր անձանց, այսինքն հնարավորին չափ շատ փորձված կացութաձև չընտրել և հենց դրանով չվերականգնել արժեքների աստիճանացույցը, որից փորձում էինք հրաժարվել:

Բայց այս դեպքում էլ արքայությունը ու իր հակասական գոյությունը մեզ կրկին դաս են տալիս: Չէ՞ որ սխալ է կարծել, թե փորձի քանակը մեր կյանքի պայմաններից է կախված, երբ հայտնի է, որ կախված է միայն մեզնից: Այստեղ մտածողության պարզություն է անհրաժեշտ: Հավասար ապրած երկու հոգու կյանքը հավասար քանակությամբ փորձ ձեռք բերելու կարելիություն է տալիս: Դրանում մենք համոզված ենք: Հնարավորին չափ լիարժեք զգալ սեփական կյանքը, ընդվզումը, ազատությանը՝ նշանակում է հնարավորին չափ շատ ապրել:

Այնտեղ, որտեղ հստակություն կա, արժեքների աստիճանացույցն ավելորդ է: Ավելի պարզ մտածենք, ընդունենք, որ միակ խոչընդոտը, «տանուլ» տալու պատճառը կանխահաս մահն է: Մեր ներկայացրած տիեզերքը գոյություն ունի շնորհիվ այն բանի, որ հակադրության մեջ է մահվան՝ նման մշտական բացառության հետ: Ահա թե ինչու ոչ մի խորունկ միտք, զգացմունք, կիրք ու զոհողություն արքայող մարդու աչքում չեն կարող հավասարեցնել (եթե անգամ ինքը ցանկանա) քառասուն տարվա իմաստավորված կյանքն ու վաթսուն տարի ձգվող մտքի պարզությունը՝ Երա կարծիքով, անուղղելի են միայն իսկազարությունն ու մահը: Մարդն ընտրություն չի կարող կատարել, արքայություն ու կյանք ներմուծած նրա հավելումները կախված չեն իր կամքից, այլ կյանքի հակադրությունից՝ մահից՝ Լրջորեն կշռադատելով բառերը, հետևյալները, որ պատահականությունն է որոշիչը: Սրա հետ պետք է հաշտվել: Քսան տարվա կյանքին ու փորձառությանը ոչինչ չի կարող փոխհատուցել:

Հին հույների նման կենսափորձ ունեցող ժողովուրդը տարօրինակ անհետևողականությամբ կարծում էր, որ երիտասարդ մեռած մարդիկ պիտի սիրելի լինեն աստվածներին: Սա ճիշտ է միայն այն դեպքում, եթե մենք ընդունենք, որ աստվածների խաբուսիկ աշխարհը մտնել նշանակում է մեկընդմիջտ կորցնել ամենամաքուր զգացումները, որոնք ունենում ենք և ունենում ենք միայն ա՛յս հողի վրա: Արքայող մարդու իդեալը ներկան է ու նրա միշտ սթափ հոգու առջևից անցնող ներկա պահերի անվերջանալի շարանը, չնայած «իդեալ» բառն այստեղ կեղծ հնչերանգ անի: Այն ոչ այնքան արքայող մարդու բնույթն է, որքան իր մասին արված դատողություններից բխող երրորդ հետևությունը: Արքայողի խորհրդածությունները սկիզբ առնելով թախծոտ վախով ներթափանցված աշխարհի անմարդկայնության գիտակցումից, ի վերջո հանգում են մարդկային ընդվզման հախուռն բոցերի կիզակետին՝ Դ:

Այսպիսով, արքայողից ես կատարում եմ երեք հետևություն՝ իմ ընդվզումը, ազատությունն ու ձգտումը: Գիտակցության թեթև խաղով ես կյանքի օրենք եմ դարձնում այն, ինչը մահվան հրավեր էր՝ ժխտում եմ ինքնասպանությունը: Բիարկե,

կանխազգամ եմ, թե ինչ խուլ արձագանքներ եմ լսելու իմ բուրք հետագա օրերին: Ավելացնել կարող եմ միայն մի բան՝ դա անխուսափելի է: Երբ Նիցշեն գրում է՝ «Պարզ է դառնում, որ երկնքում և երկրում կարևորը երկար ժամանակ նույն նպատակաուղղվածությանը ենթարկվելն է, որի արդյունքը ի վերջո դառնում է ինչ-որ բան, որի համար արժե՛ ապրել այս աշխարհում, օրինակ՝ առաքինությունը, արվեստը, երաժշտությունը, պարը, բանականությունը, ոգին՝ ինչ-որ վերափոխող, բացառիկ, իենթ ու աստվածային բան», բացահայտում է ամենավեհ բարոյականության կանոնը: Բայց ցույց է տալիս նաև արքայի մարդու ուղին: Կրակի բոցերին հնազանդվելուց հեշտ ու դժվար ոչինչ չկա: Համենայնդեպս լավ է, երթ մարդ նախքան իր մասին դատելը ուժերը չափում է դժվարության մեջ: միակ կենդանի էակը, որ կարող է դա անել:

«Աղոթքը, ասում է Ալենը, նման է մտքի վրա տարածվող գիշերվա»: «Բայց պետք է, որ միտքն ու գիշերը հանդիպեն իրար», պատասխանում են միստիկներն ու էկզիստենցիալիստները: Այո՛, իհարկե, բայց ոչ այն գիշերվան, որ մարդու սեփական ցանկությամբ ծնվում է փակ կոպերի ետևում, այլ խավար ու մութ, որն ստեղծում է միտ-քը՝ այնտեղ կորչելու համար: Եթե միտքը պիտի հանդիպի գիշերվա հետ, ավելի լավ է թող դա լինի պայծառ հուսահատության, բևեռային գիշեր, որը կաթափեցնի ուղեղը և սա իր հերթին դառնալով ճերմակ, անաղարտ փայլատակման աղբյուր, բանականության լույսով կներկայացնի յուրաքանչյուր առարկա: Այս փուլում է խորապես ընկալվում համընդհանուր հավասարակշռությունը: էկզիստենցիալիստական ցատկի մասին այլևս խոսք էլ չի կարող լինել, այն մարդկային մտածողության կառուցվածքի բազմադարյա որմնանկարի վրա գրավում է իր տեղը: Հստակ բանականությամբ օժտված դիտորդի համար նման ցատկը նույնպես արքայի է: Այն չափով, որ իրեն թվում է, թե կարողացել է լուծել հակասությունը, նույն չափով էլ ամբողջության մեջ վերարձարծում է մասնավորը: Այս առումով, իհարկե, իր վիճակը հուզիչ է: Ամեն ինչ գրավում է նախկին տեղը, ու արքայի աշխարհը վերածնվում է ողջ փայլով ու բազմազանությամբ:

Բայց սխալ կլինեք այստեղ կանգ առնելը, դժվար է միայն մի տեսանկյունից դիտելով գոհանալը, ինքն իրեն հակասություններից՝ հոգեկան ինքնարտահայտման թերևս ամենանոր միջոցից զրկելը: Այն, ինչ ասվեց, որոշակի է դարձնում միայն մտածողության ձևը: Այժմ խոսենք կյանքի մասին:

ԱԲՍՈՒՐԴ ՄԱՐԴ

«Եթե Ստավրոգիւնը հավատում է՝ չի հավատում, որ հավատում է: Եթե չի հավատում՝ չի հավատում, որ չի հավատում»: «ԴԵՎԵՐ»

«Իմ գործունեության ոլորտը, — ասում է Գյոթեն, — ժամանակն է»: Հիրավի, արքայադուստր արտահայտություն: Վերջիվերջո, ի՞նչ է իրենից ներկայացնում արքայադուստրը: Նա չնայած չի ժխտում, բայց և ոչինչ չի անում հավերժության համար: Ոչ, հավերժության ձգտումը նրան խորթ չէ, բայց նախընտրում է բանականությունն ու ողջամտությունը: Առաջինը նրան սովորեցնում է ապրել անտրտուն, գոհանալ ունեցածով, երկրորդը՝ որոշակիացնում է սահմանները: Համոզվելով, որ իր ազատությունը սահմանափակ է, ընդվզումը հեռանկար չունի, գիտելիքները՝ կատարելություն, նա իրեն տրված ժամանակամիջոցում շարունակում է կյանք կոչվող արկածները: Ահա նրա գործունեության ասպարեզը, որը բացի իր սեփականից՝ ոչ մի դասի ենթակա չէ: Եր ար կյանքը նրա համար այլ կյանք չի նշանակում: Դա անազնվություն կլինէր: Էլ չեմ խոսում այն ծիծաղելի հավերժության մասին, որ կոչվում է սերունդների հիշողություն: Հիկին Ռոլանը²⁹ հույսը գրել էր դրավրա և իր անխոհեմության համար պատժվեց: Սերունդները հաճույքով են մեջբերում նրա խոսքերը, բայց իրենց վերաբերմունքն արտահայտել մոռանում են: Սերունդներն անտարբեր են տիկին Ռոլանի նկատմամբ:

Հարկ չկա նաև դատողություններ անել բարոյականության մասին: Ես տեսել եմ, թե ինչպես բարոյական բարձր չափանիշներ ունեցող մարդիկ վատ արարքներ են թույլ տվել ու համոզվել եմ, որ օրինավորությունը կանոնների կարիք չունի: Արքայադուստր միայն մի բարոյականություն կարող է ընդունել, որն անբաժան է Աստուծոց և թելադրվում է ի վերուստ: Բայց չէ՞ որ նա Աստծուն չի հավատում: Բարոյականության մյուս տեսակները (նկատի ունեմ նաև անբարոյականությունը) արքայադուստր համար լոկ ինքնարգարգացման միջոցներ են, իսկ ինքն արդարանալու ոչ մի պատճառ չունի: Ես էլնում եմ նրա անմեղության սկզբունքից:

Այդ անմեղությունն, անշուշտ, վտանգավոր է: «Ամեն ինչ կարելի է», — ձայնում է Իվան Կարամազովը: Այս միտքն էլ ինքնին արքայադուստր է, եթե, իհարկե, գռեհիկ իմաստով չընկալենք: Նկատեցի՞ք արդյոք, որ այն ոչ թե ազատության ու երջանկության ճիչ է, այլ դառը եզրահանգում: Կյանքին իմաստ հաղորդող Աստծո հավատն անհամեմատ հրապուրիչ է, քան չարագործության անպատժելիության համոզմունքը: Այս երկուսի միջև ընտրություն կատարելը դժվար է: Բայց ցավն այն է, որ ընտրություն չի կարող լինել: Արքայադուստր ոչ թե ազատագրում, կաշկանդում է: Նա ցանկացած քայլը չէ, որ թույլատրում է: «Ամեն ինչ կարելի է»-ն չի նշանակում, որ ոչինչ արգելված չէ: Արքայադուստր մատնացույց է անում միայն գործողությունների

հետևանքների հավասարագորությունը: Իհարկե, միամտություն կլինեք կարծելը, թե նա մղում է ոճրագործության, բայց բացահայտում է խղճի խայթի անօգտակարությունը: Մանավանդ որ, եթե բոլոր փորձառությունները հավասարազոր են, պարտքի գիտակցումը նույնքան օրինաչափ է, որքան մնացածները: Կամակորությունից դրդված էլ կարելի է առաքինի լինել: Բոլոր բարոյականությունները հենվում են այն մտքի վրա, ցանկացած քայլ ունենում է արդարացնող կամ դատա-պարտող հետևանքներ: Աբսուրդ մտածողությունը գտնում է, որ այդ հետևանքների մասին սառնասրտորեն պետք է դատել և պատրաստ է հատուցման: Այլ խոսքով, ըստ նման տեսակետի, կան ոչ թե մեղավորներ, այլ պատասխանատուներ: Ավելին, աբսուրդ մարդը թույլ է տալիս, որ անցյալի փորձերը ապագա քայլերի համար հիմնավորում դառնան: Ժամանակը այլ ժամանակ է ոգեկոչում, մի կյանքը ծառայում է մի ուրիշ կյանքի: Բայց նման սահմանափակ ու անսահման հնարավորություններով օժտված գործունեության ասպարեզում, այն, ինչ դուրս է սեփական հստակատեսությունից, թվում է անկանխատեսելի: Այս անտրամաբանական կացութաձևից ի՞նչ հետևություն կարելի է անել:

Միակ ճշմարտությունը, որ կարող է օգտակար թվալ, մտահայեցողական չէ, ձևավորվում ու բացահայտվում է որոշակի մարդկանց մեջ: Ահա թե ինչու աբսուրդ մտածողությունը ձգտում է, որ իր դատողությունները պսակվեն ոչ թե բարոյական կանոններով, այլ մարդկային կյանքով շնչող կենդանի օրինակներով: Այն մի քանի օրինակները, որոնց մենք կանդրադառնանք, հենց այդպիսին են, աբսուրդ մտածողությանը պիտի հաղորդեն որոշակիություն ու կենդանություն:

Հարկ կա՞ արդյոք նշելու, որ օրինակը միշտ չէ, որ արժանի է նմանակման (այն էլ աբսուրդ աշխարհում) և իմ շարադրանքները մոդելներ չեն: Քավ լիցի: Ընդհանրապես, անկախ նկատառումներից ու արդարացումներից, ծիծաղելի չէ՞, երբ Ռուսո կարդալով որոշում են չորեքթաթ քայլել, կամ Նիցշեից սովորում հարազատ մորը կոպտել: «Ան-հրաժեշտ է,— գրում է ժամանակակից մի հեղինակ, ոչ թե հիմար լինել, այլ՝ աբսուրդ»: Մեր արծարծելիք դրույթներն իմաստ կատանան միայն այն դեպքում, եթե չանտեսենք հակադրությունները: Եթե նամակատան արտահաստիքային ցրիչն ու բռնակալը նույն գաղափարներն ունեն, ուրեմն հավասար են իրար: Այս իմաստով բոլոր փորձառություններն են հավասարազոր, հարցն այն է, թե ինչ չափով են ծառայում մարդուն: Իհարկե, եթե անձնավորությունը հայեցող է, կարող են օգտակար լինել, հակառակ դեպքում արժեք չեն ներկայացնում: Թերությունների համար մենք դատապարտում ենք ոչ թե կյանքի պայմանները, այլ հենց մարդուն:

Ես ընտրել եմ այնպիսի անձանց, որոնք ապրում են մինչև վերջ իրենց սպառելու համար կամ ինքս հավատում եմ, որ կսպառեն: Դրանից այն կողմ չեմ էլ անցնում: Խոսքն առայժմ մի աշխարհի մասին է, ուր գաղափարներն ու կյանքերը զրկված են ապագայից: Մարդուն աշխատանքի, գործունեության մղող ուժը հույսն է, ուստի խաբկանքից զերծ միտքն ամուլ է: Աբսուրդ աշխարհում յուրաքանչյուր հասկացության ու կյանքի արժեք չափվում է իր ամլությամբ:

ԴՈՆԺՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ հեշտ կլիներ ամեն ինչ, եթե հնարավոր լիներ սիրով գոհանալ: Բայց որքան շատ են սիրում, այնքան հաստատում են աբսուրդությունը: Դոն Ժուանը մի կնոջից մյուսը սիրո պակասից չի նետվում: Նույնքան ծիծաղելի կլիներ նրան կատարյալ սեր փնտրող, այդ նպատակին ձգտող մոլագար ինչ-որ մեկին պատկերացնելը: Չէ՞ որ նա յուրաքանչյուր կնոջ սիրում է նույն կրքով, ողջ էությամբ, ամեն անգամ ստիպված է լինում արտահայտել իր խորունկ ապրումներն ու զգացումները: Դրա համար սիրուհիներից յուրաքանչյուրին թվում է, թե նա իրեն տալիս է այն, ինչ երբեք, ոչ ոքի չի տվել: Իհարկե, նրանք բոլորն էլ սխալվում են և կարողանում են հասնել լոկ այն բանին, որ Դոն Ժուանը նորից ու նորից զգա իրենց կարիքը: «Ի վերջո,— բացականչում է այդ կանանցից մեկը,— ես քեզ իմ սե՛րն եմ տվել»: Չարմանալի՞ է, որ Դոն Ժուանը ծիծաղում է: «Ի վերջո՞, ա-ում է նա,— ո՛չ, ևս մի անգամ»:

Մի՞ թե բուն սիրելու համար պետք է հազվադեպ սիրել:

Դոն Ժուանը թախծո՞տ է: Դժվար է ասել: Հարկ էլ չկա թերթելու վարքագրությունը: Բոլորին հայտնի են, հաճելի՝ նրա ծիծաղն ու հաղթողի ինքնագոհությունը, հանդուգն ցատկերն ու թատերային կյանքի հակումը: Յուրաքանչյուր առողջ էություն ձգտում է բազմապատկել իրեն: Ինչպես Դոն Ժուանը: Սովորաբար տխրում են երկու պատճառով՝ անգիտությունից կամ անհուսությունից: Դոն Ժուանը գիտի ամեն ինչ և հույսեր չի փայփայում: Նա հիշեցնում է այն նկարիչներին, որոնք զգում են իրենց օժտվածության սահմանն ու երբեք չեն խախտում, բայց սեփական հնարավորության շրջանակներում ընդունում են վարպետի անկաշկանդ ու ինքնավստահ կեցվածք: Հանճարեղ լինել նշանակում է իր կարողությունները ճշգրիտ իմանալու խելամտությունն ունենալ: Մինչև իր ֆիզիկական վախճանը Դոն Ժուանը չի թախծում: Իսկ այն պահին, երբ հասկանում է,

թե ինչ է սպասում իրեն, ծիծաղում է անկաշկանդ ծիծաղով, ներման արժանանում:
Նա թախծոտ կլիներ, եթե հույսերով ապրեր: Ահա հերթական կնոջ շուրթերից զգում է
բացառիկ իմացության դառը և կենարար համը: Դառը: Մի քիչ: Ճիշտ այնքան, որքան
անհրաժեշտ է երջանկությունը լիովին վայելելու համար:

Անհեթեթություն կլիներ կարծել, թե Դոն ժուանը սնվել է Գիրք ժողովողի ոգով:
Նրա համար ունայնություն է լոկ հանդերձյալ կյանքի հույսը: Դրա վկայությունն է
թեկուզ այն, որ խաղի մեջ է մտնում երկնքի հետ: Նրան խորթ է թույլ մարդկանց
բնորոշ՝ հաճույքների մեջ սպառվելուց հետո մեղանչելու հատկությունը: Մեղանչումը
ավելի հատուկ է Ֆաուստին՝ նա չափազանց շատ էր հավատում Աստծուն, որպեսզի
հոգին սատանաներին ծախեր: Դոն ժուանի համար ամեն ինչ անհամեմատ պարզ է:
Մոլինայ «Գայթակղողը» դժոխքի սպառնալիքներին անընդհատ պատասխանում է.
«Դեռ ինչքան ժամանակ ունեմ»: Այն, ինչ տեղի է ունենալու մահվանից հետո, նրան
ամենևին չի հետաքրքրում, նա ուզում է իմանալ, թե ինչքան է ձգվելու օրերի շարանը,
որ ինքը վայելելու է այս կյանքում: Ֆաուստն անընդհատ հայցում էր այս աշխարհի
բարեկեցությունը՝ քիչ էր մնում մուրացկանի նման ձեռք երկարեր: Չկարողանալ
ապրել վայելքները, ինքնին նշանակում է ծախել հոգին: Դոն ժուանն ընդհակառակը,
հղփացածության է հասնում: Եվ եթե լքում է կնոջը, ամենևին ոչ այն բանի համար, որ
այլևս նրան չի ցանկանում: Գեղեցիկ կինը միշտ ցանկալի է: Պարզապես, արդեն
ցանկանում է ուրիշին, իսկ դա ձայնը չէ:

Նա կյանքից շատ գոհ է, ուրեմն զրկվելուց ծանր ոչինչ չի կարող լինել: Այս
խենթն ըստ էության մեծ իմաստուն է: Բայց հույսով ապրող մարդիկ դժվարությամբ
են հարմարվում մեր կյանքին, ուր բարությունն իր տեղը զիջում է մեծահոգությանը,
քնքշանքը՝ առնական լռությանը, հաղորդակցությունը՝ միայնակության
խիզախությանը: Բոլորն ասում են՝ այսինչը թույլ մարդ է, իդեալիստ ու սուրբ: Պետք է
կարողանալ կուլ տալ նման վիրավորական մեծարանքը:

Որքան վրդովմունք (նաև հիացմունքը թաքցնող քմծիծաղ) են առաջացրել Դոն
ժուանի խոսքերն ու այն մի հատիկ նախադասությունը, որ կրկնում է բոլոր կանանց
հետ խոսելիս: Բայց նա, ով վազում է երջանկության քանակի հետևից, կարևորում է
միայն արդյունքը: Ինչ միտք ունի ծանրացնել այն նախադասությունը, որն առանց այդ
էլ բազմիցս ցույց է տվել իր արդյունավետությունը: Բոլորը՝ կին, տղամարդ, լսում են
ոչ թե բառերը, այլ արտաբերող ձայնը: Խոսքը լոկ ընդունված կարգի,
պայմանականության, քաղաքավարության համար է: Դրանից հետո հարկ է լինում
անցնել ամենակարևորին, որին միշտ Դոն ժուանը պատրաստ է: Իր ինչի՛ն են պետք
բարոյական չափանիշները: Նա նզովքի չի ձգտում Միլոշի Մանյարայի նման

սրբանալու համար: Դոն ժուանի պատկերացմամբ դժոխքը մարտահրավերի կոչ է: Աստծո գայրույթի դեմ նա մարդկային արժանապատվությամբ լցված պատասխան ունի: «Ես ինքնասիրություն ունեմ,— ասում է Կոմանդորին ,— և միշտ կատարում եմ խոստումս, որովհետև ասպետ եմ»: Բայց նույնքան սխալ կլիներ կարծել, որ նա անբարոյական է: Այս իմաստով «նման է բոլորին»՝ բարոյականությանը հիմնվում է ներքին համակրանքի ու հակակրանքի վրա: Դոն ժուանին կարելի է հասկանալ նկատի ունենալուց հետո միայն, որ նա մարմնավորում է սովորական գայթակղողի ու կանացի սեռի երկրպագուի: Այո, ինքը սովորական գայթակղողԺԵ է, այն տարբերությամբ, որ գիտակցում է դա, ուստի և դառնում աբսուրդ մարդ: Բայց երբ գայթակղողը վերագտնում է մտածողության հստակությունը, չի փոխվում: Գայթակղությունը նրա մշտական վիճակն է: Միայն վեպերում են մարդիկ փոխվում, դառնում ավելի լավը: Մեր դեպքում թերևս կարելի է ասել, որ ամեն ինչ նույնն է մնացել ու միաժամանակ վերափոխվել է: Դոն ժուանը գործում է քանակի բարոյակրթությամբ, ի հակադրություն սրբերի, որոնք ձգտում են որակի: Աբսուրդ մարդը սովորաբար չի հավատում երևույթների ներքին խոր իմաստին: Նա փութկոտ հայացք է նետում ջերմ ու խանդավառ դեմքերի վրա, ի մի բերում, որպեսզի հետո այրի: Ժամանակն իր հետ է, ինքն անբաժան ժամանակից: Դոն ժուանը չի ձգտում կանանց «հավաքածու» կազմել: Նա ուղղակի աշխատում է սպառել նրանց քանակը, ուստի և սպառվում են իր հնարավորությունները: Հավաքածու կազմել՝ նշանակում է կարողանալ ապրել անցյալով: Բայց Դոն ժուանը ժխտում է ավստոսանքը, հույսի այդ տարատեսակը: Նա դիմանկարներով տարվելու ժամանակ չունի:

Գուցե եսասե՞ր է: Ինչ-որ տեղ, իհարկե: Բայց նախ պետք է ճշտել, թե մենք ինչ իմաստ ենք գնում բառի մեջ: Կան մարդիկ, որոնք ստեղծված են կյանքի, ուրիշները՝ սիրո համար: Համենայնդեպս այդպես կասեր Դոն ժուանը, և դա շատ յուրօրինակ տեսակետ կլիներ, որովհետև սերը, որի մասին այստեղ խոսվում է, պարուրված է հավերժության պատրանքով: Բոլոր փորձ ունեցողները վկայում են, որ առանց խոչընդոտների հավերժական սեր չի կարող լինել, ոչ էլ առանց պայքարի՝ զգացմունք: Նման սերը ավարտվում է՝ բախվելով իր վերջին խոչընդոտին՝ մահվանը: Կամ պետք է Վերթեր լինել, կամ՝ ոչինչ: Այս դեպքում նույնիսկ ինքնասպանության տարբեր ձևեր կան, որոնցից մեկն անմնացորդ անձնագոհումն է, սեփական անձից վերանալը: Դոն ժուանը բոլորի չափ գիտի, որ նման վիճակը շատ հուզիչ կարող է լինել: Բայց նա այն եզակիներից մեկն է, ով գիտի նաև՝ էականը դա չէ, նրանք, ովքեր իրենց խորունկ սիրո շնորհիվ վերանում են սեփական անձից, թերևս հարստանում են հոգով, բայց հաստատ աղքատացնում են ընտրյալին: Մայրերը, բուռն սիրով սիրող կանայք, սովորաբար չոր սիրտ ունեն, որովհետև վերացած են իրականությունից: Մի

զգացմունքը, մի էակը, մի դեմքը ոչնչացնում է մնացած ամեն ինչ: Դո՞ն Ժուանն ապրում է բոլորովին այլ սիրով, որը և նրան ազատագրում է: Այդ սերն իր մեջ ամփոփում է աշխարհի բոլոր դեմքերը, հուզում անցավորությամբ: Դո՞ն Ժուանը սահմանափակության չի ձգտում: Նրա համար կարևորը պարզ տեսնելն է: Մեր կապվածությունը որոշ անձանց մենք սեր ենք անվանում լոկ այն պատճառով, որ գրքերն ու առասպելները մեզ սովորեցրել են այս կամ այն երևույթի մասին ընդհանրացված տեսակետ ունենալ: Ինձ համար սերը կամ այս կամ այն էակին առնչվող ձգտման, քնքշության և փոխըմբռնողության խառնուրդ է: Ուրիշ էակների հնարավոր է կապված լինել զգացմունքների այլ խառնուրդով: Ես չեմ կարող նույն բառով կոչել տարբեր զգացումները, ինչպես չեմ կարող միշտ նույն զգացումներն ունենալ: Աբսուրդ մարդը այս դեպքում մասնատում է այն, ինչը չի կարողանում միավորել: Այդպե՛ս նա գոյության նոր ձև է հայտնագործում, որն իրեն ազատություն է տալիս նույնքան, որքան ինքն է տալիս իրեն առընչվող մարդկանց: Մեծահոգի է այն սերը միայն, որը գիտի իր անցողիկ ու անկրկնելի լինելը: Այս բոլոր մահերն ու հարություններն ի վերջո կազմում են Դո՞ն Ժուանի կյանքի ծաղկեփունջը: Այդպես է նա ապրում, կյանքի գրգիռ ստանում: Ինքներդ դատեցեք, կարո՞ղ է այստեղ եսասիրության մասին խոսք լինել:

Այժմ ես մտածում եմ նրանց մասին, ովքեր ուզում են, որ Դո՞ն Ժուանն անպայման պատժվի: Ոչ միայն հանդերձյալ, այլև այս կյանքում: Ես հիշում եմ բոլոր հեքիաթները, առասպելները, անեկդոտները, որ տարածում էին արդեն ծերացած Դո՞ն Ժուանի մասին: Բայց ինքը վաղուց պատրաստ էր դրան: Հայեցող մարդու համար ծերությունն իր բոլոր հետևանքներով անակնկալ չի կարող լինել: Համենայնդեպս նա այնքան գիտակցություն ունի, որ իրենից չթաքցնի մոտեցող սարսափը: Աթենքում ծերությանը նվիրված տաճար կար, ուր հաճախ էին երեխաներին տանում: Ինչ վերաբերում է Դո՞ն Ժուանին, որքան շատ են ծիծաղում վրան, այնքան որոշակիորեն է ի հայտ գալիս նրա էությանը: Ու հենց դրանով ժխտվում է այն ամենը, ինչ ռոմանտիկներն էին վերագրում նրան: Նման խեղճ ու տանջված Դո՞ն Ժուանի վրա ու՞մ ծիծաղը կգա: Բայց եթե մարդիկ խղճում են, գուցե երկինքը մեղքերի թողություն ո՞ւն տա: Բանն այդ չէ: Դո՞ն Ժուանի հայացքի առջև բացվող տիեզերքում ծիծաղելին նույնպես հասկացությամբ է ընդունվում: Նա պատրաստ է կրել իր պատիժը, գիտի, որ դա են պահանջում խաղի կանոնները: Հենց մեծահոգությունն է նրան դրդում անվերապահորեն ընդունել խաղի բոլոր կանոնները: Դո՞ն Ժուանը համոզված է, որ ինքն իրավացի է և չի կարող պատժից խույս տալ: Ճակատագիրը դատապարտություն չէ:

Ահա սա՞ է նրա հանցանքը և զարմանալի չէ, որ հավերժության ջատագովներն ուզում են անպայման դատափետուման ենթարկել: Բայց նա հասել է պատրանքներով գունազարդված իմացության, նա ժխտում է այն ամենը, ինչ նրանք քարոզում են: Նրա իմացության կերպը հիմնված է սիրելու և տիրելու, ձեռք բերելու և սպառելու վրա (Մուրբ Գրքում հաճախ գործածվող «իմացություն» բառը արտահայտում է նաև սեռական մերձեցման իմաստ):

Դոն Ժուանը պատրանքների ոխերիմ թշնամի է համարվում, որովհետև արհամարհանքը չի թաքցնում: Մի ժամանակագիր արձանագրել է, որ իբր իսկական «Գայթակղողին» սպանել են ֆրանցիսկյանները, որոնք ուզում էին վերջ տալ «իր ազնվականական ծագման պատճառով անպատիժ մնացող Դոն Ժուանի սանձարձակություններին ու անաստվածությանը»: Ավելի ուշ հայտարարեցին, որ իբր երկինքն է շանթահարել նրան: Ոչ ոք չի հաստատում դաժան պատժի իրողությունը, չնայած հակառակն էլ ոչ ոք չի պնդում:

Չքննելով հանդերձ նման վախճանի հավաստիությունը, նշեմ, որ այն խիստ տրամաբանական է: ուզում եմ պարզապես կանգ առնել ժամանակագրի գործածած «ծնունդ» («naissance») արտահայտության վրա և բառախաղ անել՝ կյանքը հաստատեց Դոն Ժուանի «անմեղությունը» («innocence»). այժմ արդեն առասպելական դարձած մեղավորության պիտակը նրան շնորհվեց մահից հետո:

Այլապես իրենից ի՞նչ է ներկայացնում այս պաղ արձանը՝ քարե Կոմանդորը, որին ասպարեզ են հանել, որպեսզի հնազանդեցնի մտածելու համարձակության ստացած արյունն ու արիությունը: Այն խորհրդանշում է հավերժական Բանականության, կարգուկանոնի, համընդհանուր բարոյականության ուժը, մարդուն այդքան խորթ աստվածայինը մեծության ցասումը: Այս ահռելի, անհոգի քարը խորհրդանշում է նաև իշխող ուժերը, որ Դոն Ժուանը միշտ ժխտեց է՝ ահա՛ Կոմանդորի առաքելության ողջ խորհուրդը: Շանթն ու ամպրոպը կարող են վերադառնալ այն մտացածին երկինքը, որտեղից նրանց կանչել էին: Բուն ողբերգականը նրանք չեն մասնակցելու: Ոչ, Դոն Ժուանը քարե ձեռքով չի մահանում: Ես հաճույքով հավատում եմ առասպելական հոխորտանքին՝ ողջամիտ մարդու խելագար ծիծաղին, որով նա ձեռնոց է նետում գոյության չունեցող Աստծուն: Հավատում եմ մանավանդ, որ երբ Դոն Ժուանը սպասում էր Աննայի մոտ և Կոմանդորը չեկավ, կեսգիշերից հետո մեղսագործն զգաց նրանց ահավոր դառնությունը, ովքեր, համոզվեց՝ արդար էին: Ավելի մեծ հավատով ես ընդունում եմ վարքագրության այն պնդումը, որ իբր Դոն Ժուանը քաշվել ու կյանքն ավարտել է վանքում: Ո՛չ այն պատճառով, որ փաստի բարոյախոսական կողմը ճշմարտանման չի

թվում՝ ինչպե՞ս կարող էր նա Աստուծոց ապաստան խնդրել: Պարզապես նման ավարտը ներկայացնում է արսուրդով պայմանավորված այն գոյության տրամաբանական վախճանը, դաժան հանգուցալուծումը, որն ամբողջովին տրված էր այս կյանքի վայելքներին ու վաղվա օրվա մասին չէր մտածում: Այս դեպքում հաճույքներն ավարտվում են մեղանշման հառաչանքով: Պետք է ընդունել սակայն, որ դրանք նույն հանգուցալուծման երկու տարբեր կողմերն են: Ավելի ահաբեկող կերպար դժվար է պատկերացնել: Մարդը, որին դավաճանել է սեփական մարմինը, ժամանակին չմեռնելու պատճառով ստիպված է մինչև վախճանի վրա հասնելը կատակերգություն խաղալ այն Աստծո դեմդիմաց, ում չի պաշտում, բայց ծառայում է, ինչպես ժամանակին կյանքին է ծառայել: Ահա, նա ծնկի է իջել պարապության առջև, իսկ ձեռքերը մեկնել դեպի համր երկինքը, որի խորքերում, ինքը լավ գիտի, ոչինչ չկա:

Ես տեսնում եմ Դոն ժուանին սարերում կորած իսպանական վանքի խցերից մեկում: Ոչ, անցած սերերի տեսիլքները չեն սահում նրա աչքի առջևով: Վանքի՝ արևից շիկացած նեղ պատուհանից նա տեսնում է միայն Իսպանիայի լուռ դաշտերը, Իսպանիայի այն հոյակապ ու անհոգի հողը, որն իրեն, իր էությանը շատ նման է թվում: Հենց այս թախճոտ ու պայծառ տեսարանով էլ ավարտենք: Վերջերի վերջը, որն անխուսափելի է, բայց ոչ ցանկալի, արհամարհել է պետք:

ԹՄՏՐՈՆԸ

«Ներկայացումն է այն որոգայթը,— ասում է Համլետը,— որով կբռնեմ արքայի խիղճը»: Բռնելը լավ է ասված, որովհետև խիղճը միշտ անսպասելի է հայտնվում կամ անհետանում: Հարկավոր է նրան ցատկի՝ այն բացառիկ պահին որսալ, երբ ինքն իր վրա մի հապճեպ հայացք է նետում: Առօրյա մարդը չի սիրում հապաղել, միշտ վազքի մեջ է: Բայց, իհարկե, սեփական անձից բացի նրան ոչինչ չի հետաքրքրում, մասնավորապես այն, թե ինչ է լինելու վերջը: Այստեղից էլ նրա սերը թատրոնի, ներկայացման նկատմամբ, ուր տեսնում է բազմաթիվ ճակատագրեր, վայելում, բայց չի ապրում հերոսների տառապանքը: Նման իրադրության մեջ պետք է հետևել անխորհուրդ մարդուն, որն շտապում է, հայտնի չէ որ հույսի ետևից: Արսուրդ մարդն ի հայտ է գալիս այնտեղ, որտեղ ավարտվում է հույսը, երբ միտքն այլևս չի հիանում խաղով, մտնում է խաղի մեջ: Խաղալ հենց նշանակում է ներթափանցել բոլոր կյանքերի խորքը, ապրել ողջ բազմազանությամբ: Ես չեմ ուզում ասել, որ դերասանները անսում են այս կոչին, որ նրանք արսուրդ մարդիկ են, ուղղակի նրանց ճակատագիրն է արսուրդ ի իր բազմաթիվ գայթակղություններով կարող է գրավել պարզմիտ մարդկանց: Այս անհրաժեշտ է նշել, որպեսզի շարունակությունը հասկանալի լինի:

Դերասանը թագավորում է անցավոր աշխարհում: Հայտնի է, որ բոլոր փառքերից նրանը թերևս ամենավաղանցիկն է: Այդպես գոնե ասում են, չնայած ի վերջո բոլոր փառքերն են վաղանցիկ: Շնաստղի բնակչի կարծիքով, տասը հազար տարի հետո Գյոթեի երկերը փոշու կվերածվեն, անունն էլ չի հիշվի: Թերևս մի քանի հնագետ միայն փորձեն փնտրել մեր ժամանակի «վկայությունները»: Այս միտքը միշտ էլ ինչ-որ ուսուցողական նպատակ ունեցել է: Եթե մտմտանք նրա բոլոր հետևանքների մասին, մեր առօրյա հոգսերը կվերանան՝ իրենց տեղը զիջելով անտարբեր վեհանձնությանը: Այդ անտարբերությունը միաժամանակ մեր մտահոգությունները կուղղի դեպի ամենաճիշտ ճանապարհը՝ մոտակա նպատակները: Թերևս միայն հանապազօրյա փառքն է, որ խաբուսիկ չէ:

Դերասանն, ուրեմն, ընտրում է այն բացառիկ փառքը, որին նվիրվում է, որով ինքն իրեն հաստատում է: «Բոլորս մի օր մեռնելու ենք» տեսությունից լավագույն եզրահանգումը կատարում է նա: Դերասանն ունենում կամ չի ունենում հաջողություն: Այնինչ, նույնիսկ անհայտ գրողը հույսը չի կորցնում, հավատում է, որ թողած գործերը մի օր վկայելու են իր մասին: Դերասանից լավագույն դեպքում մնում են լուսանկարներ, իսկ թե ինչպիսին է եղել ինքը՝ շարժումներն ու լռությունը, շնչարգելությունն ու հառաչանքը սեր խոստովանելիս՝ այդ ամենից ոչինչ չի հասնում մեզ: Չճանաչված մնալ, նշանակում է չխաղալ, այսինքն հարյուր անգամ չմեռնել այն էակների հետ, որոնց ոգեկոչել էր, կյանք տվել:

Ջարմանալի՝ է, որ անցողիկ փառքը հիմնված է մարդկային ստեղծագործություններից ամենակարճատևի վրա: Դերասանը միայն երկու ժամ ունի Յագո կամ Ալցեստ, Ֆեդրա կամ Գլոստեր լինելու համար: Այդ կարճատև ժամանակամիջոցում հիսուն քառակուսի մետրի վրա նա ոգեկոչում է իր հերոսներին, ստիպում մեռնել: Երբեք արքայություն այսքան լավ ու սպառիչ արտահայտություն չի գտել: Այն զարմանալի կյանքերը, բացառիկ ու կատարյալ ճակատագրերը, որոնք մի քանի ժամվա ընթացքում ծավալվում ու ավարտվում են թատրոնի չորս պատերի մեջ, մի թե արքայության ամենախոսուն արտահայտությունը չեն: Բեմից իջնելուց հետո Միգիզմունդը ոչինչ է: Երկու ժամ հետո նրան քաղաքում կարելի է տեսնել ճաշելիս: Ահա, այդ դեպքում է երևի կյանքը երազ: Սակայն, Միգիզմունդին հաջորդում է ուրիշ դեր՝ անվճռականությունից տառապող հերոսին փոխարինում է մոլագար վրիժառուն: Այսպես դարից դար, կերպարից կերպար անցնելով, մարդուն ներկայացնելով այնպիսին, ինչպիսին պետք է լինի կամ է, դերասանը նմանվում է արքայության մի այլ հերոսի՝ ճանապարհորդի: Ճանապարհորդի նման ավարտում է հերթական գործը, առաջ նետվում: Դերասանը ժամանակի ճանապարհորդ է, լավագույնները՝ հոգիներ

հետախուզող ճանապարհորդներ: Քանակի բարոյականությունը եթե երբևէ հագուրդ ստանում է՝ ապա միայն ու միայն այս յուրահատուկ բեմում: Դժվար է ասել, դերասանն ինչ օգուտ է ստանում իր խաղացած դերերից: Դա թերևս կարևոր էլ չէ: Կարևորն իմա-նալն է, թե ինչ չափով է ինքն իր սեփական կյանքը միախառնում այդ անկրկնելի ճակատագրերին: Իրոք, պատահում է, որ ինքն իր մեջ կրում է դերը, որը շատ հեշտ հաղթահարում է ժամանակն ու միջավայրը, ուր ծնվել է: Կերպարները միշտ ուղեկցում են դերասանին, որոնց մարմնավորելուց հետո, նա չի կարողանում հեշտությամբ բաժանվել: Խմելու պահին, օրինակ, հաճախ կրկնում է Համլետի՝ բաժակը շուրթերին տանելու ձևերը: Ոչ, իր կերտած կերպարներն իրենից մեծ անջրպետով չեն բաժանվում: Դերասանը բազմաթիվ օրեր ու ամիսներ անընդհատ հաստատում է այն բացարձակ ճշմարտությունը, որ էական սահման չկա մարդու և այն հերոսի միջև, որ ինքն ուզում է լինել: Անընդհատ ջանալով ավելի լավ պատկերել ուրիշներին, նա ակնբախ ցույց է տալիս, թե ինչ չափով է թվացյալը վերածվում իրականության: Նրա արվեստի բնույթն է լիովին վերակերպավորվելը, հնարավորին չափ ամբողջովին ուրիշ կյանքերի մեջ ներթափանցելը: Այդպես, վերջիվերջո բացահայտվում է նրա կոչումը՝ ողջ էությամբ ջանալ որոշակի որևէ մեկը չլինել, այսինքն դառնալ բազմադեմ: Որքան սահմանափակ են այս կամ այն կերպարը մարմնավորելու հնարավորությունները, այնքան տաղանդն անհրաժեշտ է: Երեք ժամ անց նա մեռնելու է այն հերոսի դիմակով, որն այդ օրն իր դեմքն էր դարձել: Երեք ժամում անհրաժեշտ է վերապրել ու ներկայացնել մի բացառիկ ճակատագիր: Սա հենց այն է, ինչ կոչվում է իրեն կորցնել՝ գտնելու համար: Երեք ժամվա ընթացքում նա հասնելու է այն անելանելի ճանապարհի վերջը, որ դահլիճում նստած հանդիսատեսն անցնում է ողջ կյանքում:

Ներկայացնելով անցողակին, դերասանն արտաքուստ է միայն փորձ, վարպետություն ձեռք բերում: Թատրոնի պայմանականությունն այնպիսին է, որ սիրտն արտահայտվում, բացահայտվում է մարմնով ու շարժումներով կամ էլ ձայնով, որը հավասարապես պատկանում է թե՛ հոգուն, թե՛ մարմնին: Այս արվեստի օրենքը պահանջում է ամեն ինչ խտացնել, միս ու արյուն դարձնել: Եթե բեմում սիրեին այնպես, ինչպես կյանքում, բացատրվեին իր տեսակի մեջ բացառիկ սրտի ձայնով, նայեին՝ վայելելու նման, թատրոնի լեզուն ծածկագիր կդառնար: Այնտեղ լռությունը պիտի լսվի, սերը ձայնի տոնայնությամբ արտահայտվի, անշարժությունն անգամ դիտարժան դառնա: Թատրոնում տիրողը մարմինն է: «Թատերային» արտահայտությունը, որ երբեմն սխալ է ընկալվում և վերագրվում երևույթների, որոնց հետ կապ չունի, իր մեջ ներառնում է բեմի ողջ գեղագիտությունն ու բարոյականությունը: Կյանքի կեսը մարդն անցկացնում է ենթագիտակցաբար, ինչ-որ

բանից երես թեքելով, ինչ-որ բանի համար լռելով: Դերասանը ներխուժում է այդ հոգու գաղտնարանները, ձերբագատում կապանքները, և զգացմունքները ողողում են բեմահարթակը: Զգացմունքներն իրենց արտահայտությունն են գտնում յուրաքանչյուր շարժման մեջ, ավելին՝ ճշում են իրենց մասին: Այդպես է կերտում դերասանն իր հերոսին ու ի ցույց դնում հանրությանը: Նա նկարում է կամ քանդակում՝ իրեն լցնում երևակայական կաղապարի մեջ, ուրվականներին արյուն տալիս: Պարզ է, խոսքը իսկական՝ այն թատրոնի մասին է, ուր դերասանը հնարավորություն ունի ֆիզիկապես մարմնավորել տվյալ ճակատագիրը: Վերցնենք Շեքսպիրին: Անմիջական ապրումների այս թատրոնում մարմինների հախուռն շարժումներն են ի ցույց գնում, բացատրում ամեն ինչ: Այլապես ներկայացումը փուլ կգար: Արքա Լիրը խելացնոր ճանապարհորդությունն սկսելուց առաջ կոպիտ շարժումով վռնդում է Կորդելիային, դատապարտում էրգարին: Այլ կերպ ասած՝ ողբերգության զարգացնող ուժ դառնում է խենթությունը: հոգիները հանձնված են դիվային խրախճանքի: Ներկայացման մեջ առնվազն չորս այսպիսի խելագար կա՝ մեկն իր ծաղրածուի մասնագիտությամբ, Երկրորդը՝ սեփական ցանկությամբ, վերջին երկուսն իրենց կրած տառապանքների հետևանքով: Չորս անզուսպ մարմին, նույն ճակատագրի չորս տարբեր արտահայտությունները...

Երբեմն մարդկային մարմինն անգամ չի բավականացնում: Դիմակն ու բեմակոշիկները, դիմաներկը, որն ընդգծում է կամ արտահայտիչ է դարձնում դիմագծերը, մարմինը մեծացնող կամ փոքրացնող հանդերձները՝ ամեն, ամեն ինչ այս աշխարհում արվում է արտաքին տեսքի, աչքի ընկալման համար: Աբսուրդի հրաշքի շնորհիվ մարմինը ծանոթության միջոց է դառնում: Մինչև չխաղամ, ես ինչպես հարկն է չեմ հասկանա Յագոյին: Լսելը քիչ է, ընկալելու համար տեսնել է պետք: Աբսուրդ կերպարից դերասանն ստեղծում է մի միօրինակ՝ օտարոտի ու ծանոթ կերպարանք, որն ի հայտ է գալիս իր բոլոր մարմնավորումներով ու համառորեն հիշեցնում իր մասին: Թատերական ակնառու ստեղծագործությունները այս պատճառով տոնային ընդհանրության ունենժԶ: Նաև ա՞յս պատճառով է դերասանն ինքն իրեն հակասում: Լինելով նույնը, նա միաժամանակ խիստ տարբեր է, որովհետև շատ հոգիներ են ապրում մարմնի մեջ: Այս անհատի՝ ամեն ինչի հասնելու ու ամեն ինչ ապրելու ցանկությունը, զուր ջանքերն ու անօգուտ համառությունը հենց ստեղծում են արսուրդ հակասություն: Այնուամենայնիվ, այն ամենը, որ հակասում են իրար, նրա էության մեջ միավորվում են: Դա այն տեղն է, ուր մարմինն ու միտքը հանդիպում են, փարվում, ար անհաջողություններից հոգնած միտքը վերադառնում է իր ամենահավատարիմ դաշնակցին:

«Օրհնյալ են նրանք,— ասում է Համլետը,— որոնց արյունն ու դատողությունն այնչափ համաչափ գուգախառնված են, որ լոկ շվի չեն բախտի մատներին, որ ինչպես ուզե վրան նվագե»:

Ինչպե՞ս եկեղեցին չի դատապարտել դերասանի նման վարքը: Կրոնը միշտ էլ մերժել է այս արվեստը, հոգիների հերետիկոսական բազմացումը, զգացմունքների խրախճանքը, մտքի վտանգավոր հավակնոտությունը, որը հրաժարվում է մեկ ճակատագրով ապրելուց, տրվում սանձարձակության: Դարձյալ եկեղեցին ժխտում է ներկայով ապրելն ու Պրոտեստի հաղթանակը, որն ինքնին կրոնական քարոզների ժխտումն է: Հավերժությունը խաղ չէ: Միտքը, եթե այնքան բանականություն չունի, որ հավերժությունը նախընտրի թատրոնից, կորցնում է փրկության ամեն հույս: «Ամենուր»-ի և «մշտական»-ի միջև փոխզիջում չի կարող լինել: Ահա թե ինչու այդքան արհամարհված մասնագիտությունը հոգեկան մեծ բախումների պատճառ է դառնում: «Կարևորը,— ասում է Նիցշեն,— հավերժական կյանքը չէ, այլ հավերժական կենսունակությունը»: Ողջ դրաման, իրոք, այս երկուսի միջև ընտրություն կատարելն է:

Ադրիեն Լեքուվրեորը մահվան մահճում ցանկացավ խոստովանել ու հաղորդության ընդունել, բայց չհրաժարվեց իր բեմական անցյալից: Հենց այդ պատճառով էլ մեղքերի թողություն չստացավ: Ի՞նչ էր դա, եթե ոչ Աստծո առջև իր հոգեկան նախասիրությանն առավելություն տալու մղում: Մահամերձ այդ կինը, որ արցունքների մեջ հրաժարվում էր ժխտել այն ամենը, ինչ իր արվեստն էր կոչում, հասել էր այնպիսի մեծության, որին երբեք, ոչ մի բեմահարթակում չէր հասել: Դա նրա լավագույն և դժվարագույն դերն էր: Երկնքի և անցավոր, ծիծաղելի հավատարմության միջև ընտրություն կատարելը, նախապատվությունը հավերժությանը կամ Աստծո ողորմությանը տալը դարավոր ողբերգություն է, ուր ամեն ոք պիտի գրավի իր տեղը:

Այն ժամանակվա դերասանները գիտեին, որ եկեղեցին բանադրել է իրենց: Դերասան լինել նշանակում էր ընտրել դժոխքը: Կրոնականները նրանց համարում էին իրենց ոխերիմ թշնամիները: Դրական շրջանակներում նույնիսկ տարակուսում էին. «Ինչպես, Մոլիերի՛ն զրկել հոգեհանգստի ծեսից»: Բայց նման վերաբերմունքն արդարացի էր, մանավանդ որ նա մեռել էր բեմի վրա, կյանքն ավարտել դիմահարդարված և ամբողջովին տարրալուծվել իր խաղացած կերպարների մեջ: Մոլիերի կապակցությամբ հիշատակում են նաև նրա հանճարեղությունը, որին իբր ամեն ինչ ներվում է: Բայց հանճարը ոչինչ չի ներում հենց այն պատճառով, որ ինքը հրաժարվում է ներում հայցելուց:

Դերասանը գիտեր նաև, որ ինքը չարչարանքի է դատապարտված: Բայց նման անորոշ սպառնալիքներն ի՛նչ արժեք ունեին այն վերջին հատուցման հետ համեմատած, որ հենց կյանքն էր պահել իր համար: Նա նախօրոք հաշտվել էր դրա հետ, համակերպվել: Դերասանի՝ ինչպես ընդհանրապես արտուրդ մարդու համար, կանխահաս մահն անուղղելի ավարտ է: Ոչինչ չի կարող փոխհատուցել այն անթիվ դերերն ու դեմքերը, որ նա չի հասցնի մարմնավորել: Այսպես թե այնպես մահն անխուսափելի է: Որտեղ էլ որ խաղա դերասանը, ժամանակը գտնում է նրան, իր դրոշմը թողնում:

Չնչին երևակայությունն անգամ բավական է պատկերացնելու համար, թե ինչ է նշանակում դերասանի ճակատագիր: Նա ստեղծում է իր կերպարներն ու տեղավորում ժամանակի մեջ: Ժամանակի հետ էլ սովորում է տիրել նրանց: Որքան շատ է տարբեր կյանքեր ապրում, այնքան հեշտ է առանձնացնում իր սեփական կյանքը: Հետո գալիս է ժամանակը և հարկ է լինում մեռնել բեմի վրա ու կյանքում: Այն, ինչ ապրել է, իր աչքի առջև է, տեսնում է պարզ: Զգում է, թե ինչքան տանջալից ու անկրկնելի էր իր կյանքը: Նա գիտե այդ ու պատրաստ է մեռնել: Ծեր դերասանների համար զառամյալների տներ կան:

ՆՎԱՃՈՒՄԸ

—Ո՛չ,— ասում է նվաճողը,— մի կարծեք,— թե իմ գործերով տարված, այլևս չեմ մտածում: Ես կարող եմ ճշգրիտ ասել, ինչին եմ հավատում: Իմ հավատն աներեր է, տեսադաշտը պարզ ու որոշակի: Մի՛ լսեք նրանց, ովքեր պնդում են. «Մենք այսինչ բանը շատ լավ գիտենք, դրա համար չենք կարողանում արտահայտվել»: Եթե չեն կարողանում, ուրեմն չգիտեն, կամ ծուլությունից չեն ուզում թափանցել երևույթների խորքը:

Ես շատ համոզմունքներ չունեմ: Կյանքի վերջում է մարդը գլխի ընկնում, որ ինքը տարիներն սպառել է մեն-մի հատիկ ճշմարտության մեջ համոզվելու համար: Այսինքն, նույնիսկ մեկ ճշմարտությունը, եթե հավաստի է, բավական է, որ կյանքը իմաստավորվի: Գալով ինձ, ինչ խոսք, ես իմ որոշակի համոզումներն ունեմ մարդ-անհատի մասին, որոնք պետք է արտահայտել անաչառ, եթե անհրաժեշտ է, անգամ համապատասխան արհամարհանքով:

Մարդն ավելի մարդ է իր լռությամբ, քան այն ամենով, ինչ ասում է: Ես շատ դեպքերում եմ լռում: Բայց հաստատ համոզված եմ, որ որևէ անհատի մասին կարծիք հայտնողները շատ ավելի քիչ փորձ ունեն, քան ես իմ այս դատողությունների ժամանակ: Միտքը՝ նրբանկատ միտքը, ըստ երևույթին կանխազգամ է, թե ինչի վրա

կարելի է ուշադրություն դարձնել: Մեր՝ ավերածություններով ու արյունահեղությամբ աչքի ընկնող դարաշրջանը օրինակներ շատ անի: Հնագույն ազգերը մինչև վերջերս՝ մինչև մեր մեքենայացված ժամանակները հնարավորություն ունեին հավասարակշռել հասարակության ու անհատի բարոյականությունը, ճշտել, թե որը ում պիտի ծառայի: Դա հնարավոր էր մարդկային հոգում արմատացած այն թյուր մտայնության պատճառով, ըստ որի մարդիկ աշխարհ են գալիս ծառայելու կամ ուրիշներին իրենց ծառայեցնելու համար: Դա հնարավոր էր նաև այն պատճառով, որ թե՛ հասարակությունը և թե՛ անհատը չէին բացահայտել իրենց բոլոր կարողությունները:

Ես տեսել եմ պարզհոգի մարդկանց, ովքեր հիացնել են ֆլամանդական արյունահեղ մարտերի ժամանակ հոլանդական նկարիչների ստեղծած գլուխգործոցներով կամ Երեսնամյա պատերազմի օրերին հուզումով են լսել սիլեզյան կրոնականների աղոթքը: Նրանք ակնածանքով են նայել, թե ինչպես են հավերժական արժեքները դիմանում ժամանակների փորձությանը: Բայց կյանքը շարունակվում է, ժամանակակից նկարիչները գուրկ են այդ անհուսությունից: Արվեստագետի, ուզում եմ ասել՝ ամենաաննկուն սիրտն անգամ չի կարող ոչնչի հասնել, որովհետև այժմ բոլորը, սրբերը նույնիսկ գորակոչի են ենթարկված: Ահա՛, ամենից խորը թերևս այս զգացողությունն է համակել ինձ: Խրամատներում ծնունդ առած ու անավարտ մնացած յուրաքանչյուր գեղարվեստական կերտվածքի, արկի պայթյունից աղավաղված վրձնահարվածի, փոխաբերության կամ աղոթքի մեջ՝ կորած հավիտենականության մի մասնիկը կա: Զգալով, որ չեմ կարող տարանջատվել իմ ժամանակից, ես որոշել եմ միաձուլվել նրան: Դրա համար եմ այդքան կարևորություն տալիս անհատականությանը, որն ինձ թվում է նսեմացած ու չնչին: Քանի որ գոյության չունեն հաղթանակած մարտեր, ես տարվում եմ կորցրած մարտերով, սրանք հոգեկան մեծ կամք են պահանջում, որը թե պարտությունների և թե վաղանցիկ հաղթանակների ժամանակ նույնն է մնամ: Աշխարհի ճակատագրով ապրողը պետք է մտահոգվի քաղաքակրթությունների բախման պահերին: Ես ապրում եմ այդ տագնապն ու չեմ ուզում մեկուսանալ: Պատմության և հավերժության միջև ես ընտրել եմ պատմությունը, որովհետև սիրում եմ որոշակիություն: Այն ինձ գոնե վստահություն է ներշնչում: Դրանից բացի, ինչպե՞ս կարող եմ ժխտել իմ վրա բռնացող ուժը:

Միշտ էլ գալիս է ժամանակը, երբ հարկ է լինում ընտրություն կատարել հայեցողության ու գործունեության միջև: Հենց դա էլ կոչվում է առնականանալ: Անշուշտ հոգեկան տառապանքներն ահավոր են դառնում, բայց հպարտ մարդու

համար միջին ճանապարհ գոյության չունի: Կամ Աստվածը, կամ ժամանակը, կամ խաչը, կամ սուրբ: Կամ աշխարհն ունի առօրյա եռուզեռից շատ բարձր իմաստ, կամ այո եռուզեռից բացի գոյության չունի ոչ մի ճշմարտություն: Կամ չպետք է ապրել իր ժամանակն ու ժամանակի հետ մեռնել, կամ խուսանավել հանուն մի բարձրագույն գոյության: Գիտեմ, հնարավոր են գործարքներ՝ կարելի է ապրել իր ժամանակն ու հավատալ հավիտենականությանը: Սա նշանակում է հաշտվել իրավիճակի հետ: Բայց ես խորշում եմ գործարքներից, ուզում եմ ունենալ կամ ամեն ինչ, կամ ոչինչ: Եվ եթե ընտրում եմ գործունեությունը, մի կարծեք, որ ընդհանրապես հրաժարվում եմ հայեցողությունից: Ուղղակի քանի որ վերջինս չի կարող ինձ ամեն ինչ տալ ու գուրկ է հավիտենականությունից, ես կապի մեջ եմ մտնում ժամանակի հետ: Ես չեմ ուզում ինձ կաշկանդել ոչ թախիծով, ոչ էլ ցավով՝ ինձ հստակություն է անհրաժեշտ: Ես ձեզ ասում եմ՝ վաղը գորակոչ է լինելու, թե՛ ձեր և թե՛ ինձ համար դա ազատագրություն է: Անհատը ոչինչ չի կարող, միաժամանակ կարող է ամեն բան: Այս հիանալի հատկանիշը նկատի ունենալով, դուք կհասկանաք, թե ինչու՞ եմ միաժամանակ գնահատում ու ժխտում: Աշխարհը ճնշում է, ես ազատագրում եմ: Ես իրեն վերադարձնում եմ իր բոլոր իրավունքները:

Նվաճողները գիտեն՝ գործունեությունն ինքնին անիմաստ է: Օգտակար է միայն այն գործունեությունը, որը կվերափոխի մարդուն և աշխարհը: Ես մարդկանց երբեք չեի վերափոխի, բայց մի պահ ինքներս մեզ խոկանք՝ «Իսկ եթե...», մանավանդ որ պայքարի ճանապարհին կենդանի մարմնի հետ հանդիպումն անխուսափելի է: Նույնիսկ ճնշված մարմինն ինձ համար միակ հավասարությունն է: Միայն նրանով ես կարող եմ գոյություն ունենալ: Մարմնեղեն կյանքն իմ էությունն է: Ահա թե ինչու ես նախապատվությունը տալիս եմ աբսուրդ ջանքերին, ահա թե ինչու ես կողմնակից եմ պայքարին: Ինչպես արդեն ասացի, ժամանակը նույնիսկ տրամադրում է դրան: Մինչև այժմ նվաճողի մեծությունը աշխարհագրական բնույթ ուներ և չափվում էր բռնազավթված տարածքներով: Զուր չէ, որ բառը փոխել է նշանակությունն ու այլևս հաղթանակած գորավարի իմաստ չի արտահայտում: Մեծությունը հեռացել է իր նախնական բովանդակությունից և ստացել ընդլվգման ու անհեռանկար զոհողության իմաստ: Խոսքը Ազատության նախասիրության մասին չէ, հաղթանակը միշտ էլ ցանկալի կլիներ: Բայց միայն մի՛ հավերժական հաղթանակ գոյություն ունի, որը երբեք չեմ կարող նվաճել: Այս տեղ ես ինչ-որ բանի եմ դեմ առնում, ինչ-որ բան ինձ խոչընդոտում է: Հեղափոխությունները, մեր ժամանակների առաջին նվաճողից՝ Պրոմեթևսից սկսած, միշտ ուղղված են եղել Աստծո դեմ: Հեղափոխությունը մարդու ընդլվգումն է իր ճակատագրի դեմ, աղքատությունը լոկ պատրվակ է: Բայց պայքարի ոգին մարմնավորվում է միայն պատմական իրադրություն ներում, որտեղ և ես

միանում եմ նրան: Մի կարծեք, սակայն, որ դա ինձ բացառիկ հաճույք է պատճառում՝ իմ մարդկային հակասությունը երևույթների հակասության հանդեպ մնում է: Իմ ողջախոհությունը ուղղված է մի նպատակակետի, որն այն ժխտում է: Ի հեճուկս ամեն նվաստացման, ես մարդուն բարձրացնում եմ, և այդ լարվածությանը, հստակատեսությանը, անվերջանալի ինքնակրկնումին միաձուլվում եմ իմ ազատությունը, ընդվզումն ու եռանդը:

Այո՛, մարդն ինքնին նպատակ է, իր միակ նպատակը: Եթե նա ինչ-որ բանի էլ ձգտում է, ապա միայն այս կյանքում: Հիմա ինքս դա արդեն հաստատ գիտեմ: Նվաճողները երբեմն խոսում են հաղթանակի՝ գերիշխանության մասին, որի մեջ դնում են իրենք իրենց «գերազանցելու» իմաստ: Բայց դուք լավ գիտեք, թե իրականում դա ինչ է նշանակում: Ամեն մարդ էլ, որոշ իրադրություններում իրեն Աստծուն հավասար է համարում: Գոնե այդպես ասում են: Դրա պատճառն այն է, որ մտավոր փայլատակման ինչ-ինչ պահի մարդն զգում է սեփական ոգու զարմանալի մեծությունը: Նվաճող է կոչվում հենց այն մարդը, որն իր մեջ միշտ գտնում է այդ բարձունքներին մնալու ուժ և լիովին գիտակցում է իր մեծությունը: Այս կամ այն չափով ավել-պակասը լոկ մաթեմատիկական խնդիր է: Նվաճողները ցանկության դեպքում ավելին և են կարող: Ահա թե ինչու նրանք երբեք չեն լքում իրենց մարդկային էությունը, անգամ երբ նետվում են հեղափոխության ամենաթեժ բոցերի մեջ:

Նրանք այնտեղ գտնում են խեղված էություններ, բայց նաև իրենց սիրուն ու հիացմունքին արժանի բացառիկ արժեքներ՝ մարդուն և նրա լռությանը: Սա միաժամանակ նրանց աղքատությունն է ու հարստությունը: Միակ շքեղությունը դառնում է մարդկային փոխհարաբերությունը: Մի՞թե հասկանալի չէ, որ այս անկատար աշխարհում մարդկայինը միայն մարդկային ամեն ինչն է ստանում առաջնային իմաստ: Իսկական հարստությունները՝ լարված դեմքերը, վտանգված եղբայրությունները, ամուր ու նպատակամղված բարեկամություններն են, քանի որ դատապարտված են կործանման: Միայն այս շրջանակում է միտքն ըստ էության զգում իր կարողություններն ու սահմանները՝ այսինքն ներգործության ուժը: Ոմանք խոսում են հանճարի մասին: Անմիջապես ասեմ, որ ես նախընտրում եմ խելքը, այն նույնպես կարող է հիացմունք հարուցել: Այն լուսավորում է շրջապատի ամայությունն ու տեր-տնօրեն դառնալ: Գիտի իր ստրուկ լինելու մասին ու չի թաքցնում: Մեռնում է մարմնի հետ միաժամանակ: Իր ազատությունը հենց այդ իմացությունն է:

Մեզ համար գաղտնիք չէ, որ բոլոր եկեղեցիները մեր դեմ են: Նման լարված վիճակում գտնվող սիրտը խուսափում է հավերժությունից, մինչդեռ կրոնական ու

քաղաքական բոլոր ուսմունքները ձգտում են հավերժության: Նրանց համար երջանկությունն ու արիությունը, աշխատավարձը կամ ճշմարտությունը երկրորդական են: Սա եկեղեցիների այն ուսմունքն է, որ բոլորը պարտավոր են ընդունել, բայց ինքս անձամբ գաղափարների ու հավերժության հետ ոչ մի գործ չունեն: Իմ ճշմարտությունները, որոնցից ես չեմ կարող բաժանվել, այնքան մոտ են, որ կարելի է ձեռքով շոշափել: Թերևս այդ պատճառով դուք չեք կարող հենվել ինձ վրա՝ նվաճողներից ոչինչ, առավել ես ինչ-ինչ ուսմունքներ չեն մնում:

Այս ամենի վերջում, անկախ ամեն ինչից, մեզ մահն է սպասում: Մենք դա գիտենք: Դիտենք նաև, որ մահով ամեն բան ավարտվում է: Ահա թե ինչու Եվրոպայով մեկ սփռված, մեզնից ոմանց հետամտող տապանաքարերն այդքան տձև են: Մենք գեղեցկացնում ենք լույս այն, ինչը սիրում ենք, իսկ մահը մեզ վանում, հոգնեցնում է: Այն նույնպես հարկ է լինում նվաճել: Կարարայի տոհմի վերջին ներկայացուցիչը, որ մենակ էր մնացել ժանտախտից դատարկված ու վենետիկցիներով շրջապատված Պադուայում, խելագար գորգոռոցներով նետվում էր պալատի մի սրահից մյուսն ու սատանայից մահ խնդրում: Սա մահը հաղթելու ձևերից մեկն է: Արևմուտքին բնորոշ խիզախության ձևերից մեկն էլ հենց այն տեղերը սոսկալի դարձնելն է, ուր մահը կարծես թե պիտի պատվեր: Անհնազանդության աշխարհում մահը խորացնում է անարդարությունը, դառնում վատթարագույն չարագործությունը:

Ուրիշները, նույնպիսի համոզվածությամբ, նախընտրում են հավերժությունն ու բացահայտում այս աշխարհի պատրանքայնությունը: Նրանց գերեզմանները ծաղիկների ու թռչունների առատության մեջ ուղղակի ժպիտ են շողարձակում: Այս ամենը դուր է գալիս նվաճողին, որոշակի դարձնում, թե ինչից է ինքը հրաժարվել: Չէ՞ որ նա, ընդհակառակը, ընտրել էր սև մետաղե գերեզմանապարհապը կամ անհայտ շիրիմը: Հավերժության երդվյալ նվիրյալներից ոմանք երբեմն հարգանքով ու խղճահարությամբ լցված՝ սարսափ են գգում այն մարդկանց նկատմամբ, որոնք ի վիճակի են ապրել մահվան՝ նման պատկերացումներով: Մինչդեռ այդ մարդիկ հենց դրանց մեջ են ուժ ու արդարացում գտնում: Մեր ճակատագիրը մեր առջև է, մենք ընդվզում ենք նրա դեմ ոչ այնքան հպարտությունից, որքան մեր վիճակի անելանելիության գիտակցությունից: Երբեմն ինքներս էլ ենք մեզ խղճամ: Սա միակ կարեկցանքն է, որ մեզ ընդունելի է թվում, մի զգացողության, որը դուք ըստ երևույթին չեք հասկանա, ձեզ թուլամորթություն կթվա: Մինչդեռ դրան ենթարկվում են մեր միջի ամենախիզախները: Այսինքն մենք խիզախ ենք կոչում միայն ողջամիտներին: Մեզ պետք չէ այնպիսի ուժը, որը զրկում է ողջամտությունից:

Մի անգամ էլ կրկնենք՝ այս ամենը բարոյական ուսմունքներ չեն, որևէ եզրահանգում չեն թելադրում: Սրանք ուրվանկարներ են, որ որոշակի կենսաձև են պատկերում: Միրահարը, դերասանը, արկածախնդիրը արտուրդ են խաղամ: Նույնը, ցանկության դեպքում, կարող են անել խոնարհ մարդը, ծառայողը, հանրապետության նախագահը: Կարևորն իմանալն ու ոչինչ չթաքցնելն է: Իտալական թանգարաններում երբեմն հանդիպում են գեղանկարված ծածկոցներ, որոնցով քահանան փակում էր մահապարտի դեմքը, որպեսզի կառափնարանը չտեսնի: Ամեն ձևի թռիչքը՝ աստվածայինի կամ հավերժականի ձգտումը, առօրյա պատրանքների կամ գաղափարների մեջ սուզվելը մեզնից արտուրդը թաքցնող յուրօրինակ ծածկոցներ են: Բայց կ ու և նաև ծածկոց չունեցող անձինք, որոնց մասին հենց ուզում եմ խոսել:

Ես ընտրել եմ ծայրահեղ իրադրություններ, երբ արտուրդը արքայական իշխանություն է շնորհում: Չնայած իշխաններն այս դեպքում թագավորություն չունեն: Բայց նրանք ուրիշների հետ համեմատած ունեն մի առավելություն, գիտեն, որ բոլոր թագավորությունները պատրանքային երևույթ են: Հենց այդ իմացությունն է արժեքավոր, նրանց առնչությամբ գուր է թաքցված դժբախտության կամ հուսահատության մոխիրների մասին խոսելը: Հույսից զրկվելը դեռևս չի նշանակում հուսահատվել: Երկրային կրակի բոցերը երկնային բույրերից պակաս չեն: Ոչ ես, ոչ էլ մեկ ուրիշը չենք կարող նրանց մասին դատել: Նրանք ձգտում են ոչ թե ավելի լավ, այլ ուղղակի հետևողական լինել: Եթե խելացի կարելի է կոչել այն մարդուն, որն ապրում է ունեցածով և չի մտածում չունեցածի մասին, ուրեմն այդ մարդիկ խելացի են: Նրանցից մեկը, որ նվաճող է, սակայն ոգու, Դոն Ժուան՝ իմացության, դերասան՝ մտավոր ասպարեզում, բոլորից լավ գիտի. «Նա, կատարելության է հասցնում իր ոչխարային հեզությունը, ոչ երկրում, ոչ էլ երկնքում շնորհի չի արժանանում: Որովհետև, եթե անգամ ընդունենք, որ նա չի պայթում սնափառությունից և դատավորի կեցվածք ընդունելով խուճապ չի հարուցում, շարունակում է մնալ նույն սիրելի, ծիծաղելի գառնուկը, որը կոտորներից բացի ոչինչ չունի»:

Ամեն դեպքում արտուրդի մասին դատելիս պետք է նկատի ունենալ ամենաշատ ջերմություն ճառագող դեմքերը: Երևակայությունը կարող է ավելացնել նաև իրենց ժամանակին ու արտոբավայրին գամված ուրիշների, որոնք նույնպես ի վիճակի են ապրել առանց ապագայի ու առանց վիատության՝ աշխարհին համընթաց:

Ուրեմն այս արտուրդ, առանց Աստծո աշխարհը բնակեցված է նաև մարդկանցով, որոնք ողջամիտ են և ոչ մի բանի հետ այլևս հույս չեն կապում: Բայց ես դեռևս չեմ խոսել ամենաարտուրդ մարդկանց՝ ստեղծագործողների մասին:

ԱԲՍՈՒՐԴ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՊԸ

Աբսուրդի նոսր օդով ապրող այս բոլոր կյանքերը չէին կարող հարատևել, եթե որևէ խոր ու հաստատուն միտք խթան չհանդիսանար: Տվյալ դեպքում խոսքը հավատարմության յուրօրինակ զգացողության մասին է: Եղել են ողջամիտ մարդիկ, որոնք ամեն ու անհեթեթ պատերազմների ժամանակ կատարել են իրենց պարտքը և չեն էլ մտածել, որ իրենք իրենց հակասում են: Կարևորը նրանց համար եղել է պարտականություններից չխուսափելը: Ճիշտ այդպես աշխարհի աբսուրդության հավաստումը դառնում է յուրօրինակ մետաֆիզիկական երջանկություն: Նվաճումն ու խաղը, անթիվ-անհամար սերերը, աբսուրդ ընդվզումը այն մարտերի ընթացքում դրսևորված մարդկային արժանապատվության արտահայտություններն են, ուր տվյալ անձը նախօրոք դատապարտված է պարտության:

Պարզապես պետք է չխախտել մարտի կանոնները: Այս միտքը ներքին ինքնավստահության ներշնչելու համար բավական է՝ դրա վրա են հենվել ու հենվում բազմաթիվ քաղաքակրթություններ: Պատերազմն անհնար է ժխտել: Պատերազմի ժամանակ կամ մեռնում են, կամ կենդանի մնում: Այդպես էլ աբսուրդը՝ պետք է շնչել նրանով, յուրացնել դասերը, միս ու արյուն դարձնել: Այս իմաստով ստեղծագործությունն ամենամեծ աբսուրդ երջանկությունն է:

«Արվեստը, միայն արվեստը,— ասում է Նիցշեն,— արվեստը մեզ տրված է ճշմարտությունից չմեռնելու համար»:

Փորձառությունը, որ ես ուզում եմ նկարագրել, ներկայացնել տարբեր տեսանկյուններից, անառարկելիորեն վկայում է, որ հենց ավարտվում է հերթական տառապանքը, սկսվում է նորը: Մոռացության միամիտ փնտրտուքները, եղածով բավարարվելու կոչերն անարձագանք են մնում: Աշխարհին հակադրվելու մշտական լարվածությունը, ամեն ինչ ընդունելու օրինականացված անհեթեթությունը մարդուն նետում են մի այլ տենդի մեջ: Նման մթնոլորտում ստեղծագործելը դառնում է

սեփական գիտակցությունը հիմնավորելու, արկածախնդրությունը արդարացնելու միակ միջոցը: Ստեղծագործել նշանակում է երկու անգամ ապրել: Պրուստյան անվստահ ու տագնապալի պրպտումները, ծաղիկների, գարդակարերի մանրակրկիտ հավաքածուները, տագնապները հենց դա են նշանակում: Ամեն դեպքում նման որոնումներն ավելի մեծ իմաստ չունեն, քան այն անվերջանալի երկունքը, որին իրենց ողջ կյանքում տրվում են դերասանը, նվաճողն ու բոլոր աբսուրդ մարդիկ: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում է նմանակել, պատկերել, վերստեղծել իր ապրած իրականությունը: Ի վերջո մենք ընդունում ենք մեր ճշմարտությունների կերպարանքը: Հավերժությունից երես թեքած մարդու համար գոյությունը՝ աբսուրդի դիմակով կատարվող անվերջանալի մնջախաղ է: Ստեղծագործելը ինքնին մնջախաղի հոյակապ ներկայացում է:

Աբսուրդ մարդիկ նախօրոք գիտեն դա, այդ պատճառով ամեն ջանք թափում են ուսումնասիրելու, յուրացնելու, գարդարելու համար անապագա կղզին, ուր հենց նոր ասի են ելել: Այո՛, նախ իմացություն է պետք, որովհետև աբսուրդի բացահայտումը համընկնում է ժամանակի այն դադարին, ուր գալիք կրքերը բորբոքվում և արդարացում են ստանում: Նույնիսկ Ավետարանը չընդունող անձինք ունեն իրենց Ձիթենյաց լեռը, որի վրա սակայն նույնպես չի կարելի անվրդով ննջել: Աբսուրդ մարդու խնդիրը ոչ թե բացատրություն և վճիռ գտնելն է, այլ զգալն ու զգացածը նկարագրելը: Ամեն ինչ սկսվում է հեռատես անտարբերությունից:

Աբսուրդ մտածողության ամենամեծ հնարավորությանը նկարագրելն է: Նույնիսկ գիտությունը բախվելով իր իսկ հակասությունների շղթային, դադարում է ինչ-որ բան առաջադրելուց և գոհանում է երևույթների նախաստեղծ բնույթը ներկայացնելով ու հիանալով: Այդ ժամանակ է սիր-տը զգում, որ աշխարհի հարուցած զանազան ապրումները ոչ թե աշխարհի ենթադրվող խորության, այլ բազմազանության արդյունք են: Մեկնաբանությունն անիմաստ է դառնում, զգացողությունը մնում է, հետը՝ աշխարհի անսպառ, անթիվ կանչերը: Այսպես է հասկանալի դառնում արվեստի ստեղծագործության տեղը:

Յուրաքանչյուր երկ իրենից ներկայացնում է որոշակի փորձառության մահն ու բազմապատկումը: Այն ասես աշխարհի գործիքավորած թեմաների միապաղաղ ու զգացմունքային կրկնությունը լինի: Օրինակ՝ տաճարների վերնամասերում անընդհատ հանդիպող մարմնի, ձևերի ու գույների, թվերի ու տառապանքի թեմաները: Վերջապես անհետաքրքիր չէ այս էսսեի հիմնական թեմաներին հանդիպել ստեղծագործողի գրավիչ ու պարզունակ աշխարհում: Սխալ է, իհարկե, արվեստի գործը խորհրդանիշ համարելն ու կարծելը, որ այնտեղ կարելի է աբսուրդից

ապաստան գտնել: Այն ինքնին աբսուրդի արգասիք, է խնդիրը լուր նկարագրությունն է: Ստեղծագործականը մեր մտավոր տառապանքին ելք չի կարող առաջադրել: Ընդհակառակը, այն մարդկային մտածողության վրա իր կնիքը թողնող տառապանքի արտահայտություններից մեկն է:

Բայց արվեստի երկն առաջին անգամ մտածողությանն ստիպում է դուրս գալ իր սահմաններից, դնում ուրիշ մարդկանց առաջ ոչ թե շփոթ ստեղծելու, այլ ճշգրիտ ցույց տալու համար անելանելի ճանապարհը, որով մենք բոլորս ընթանում ենք: Աբսուրդ տրամաբանության դեպքում ստեղծագործական երկունքը դառնում է անկողմնակալ և ի ցույց դնում դա, նշում կետը, որտեղից սկիզբ են առնում աբսուրդ զգացմունքներն ու դադարում խորհրդածությունները: Դրանով է արդարանում աբսուրդ ստեղծագործության տեղն այս էստեում:

Բավական է ստեղծագործողի և մտածողի համար մի քանի ընդհանուր թեմաներ բացահայտել, որպեսզի արվեստի ստեղծագործության մեջ գտնենք աբսուրդ մտածողության բոլոր հակասությունները: Իրոք, նրանց մերձեցնում է ոչ այնքան եզրահանգումների նմանությունը, որքան հակասությունների ընդհանրությունը: Մա վերաբերում է մտածողությանը, և թե ստեղծագործությանը: Հազիվ թե հարկ լինի նշելու, որ այս երկուսին էլ մարդուն մղում են միևնույն նախնական տվյալանքները: Ահա թե ինչու խմորման շրջանում խոհական ու ստեղծագործական երևույթները համընկնում են: Բայց աբսուրդից սերվող մտածողություններից շատ քչերն են մինչև վերջ իրենց սահմանների մեջ մնում, և հենց այդ շեղումներից ու անհետևողականությունից էլ ես եզրակացնում եմ, թե ինչն է, իրոք, միայն աբսուրդին առնչվում: Միաժամանակ հարց է ծագում՝ աբսուրդ ստեղծագործություն կարո՞ղ է լինել:

Հարկ է նշել, որ արվեստի ու փիլիսոփայության հին հակասությունը բավական կամայական է: Ճշգրիտ իմաստով՝ նույնիսկ սխալ: Եթե դրանով ուզում են շեշտել, որ մարդկային մտավոր գործունեության այս երկու ձևերից յուրաքանչյուրն իր յուրահատկություններն ունի, թերևս, ճիշտ է, բայց անորոշ: Միակ ընդունելի փաստարկը իր ուսմունքի մեջ ներամփոփված փիլիսոփայի և իր ստեղծագործության դիմաց կանգնած արվեստագետի հակասությունը գտնելն է: Բայց սա վերաբերում է արվեստի ու փիլիսոփայության որոշ տարատեսակներին, որ մենք երկրորդական ենք համարում: Արվեստն արվեստագետից տարանջատելու գաղափարը ոչ միայն հին է, այլև՝ սխալ: Սովորաբար նշում են, որ ի տարբերության արվեստագետի, փիլիսոփան համակարգ չի ստեղծում: Բայց դա ճիշտ է այն չափով միայն, ինչ չափով ճիշտ է, որ ամեն արվեստագետ տարբեր ձևերով միշտ նույնն է պատկերում: Արվեստի

անդադար կատարելագործումը, մշտական նորացման անհրաժեշտությունը ճիշտ են լով որպես նախապաշարում: Չէ՞ որ արվեստի գործը նույնպես յուրօրինակ կառուցվածք է, և յուրաքանչյուրին հայտնի է, թե մեծ ստեղծագործողները որքան միանման են: Մտածողի պես արվեստագետն էլ իրեն դնում է իր ստեղծագործության մեջ, վերամարմնավորվում: Այս փոխներգործությունից է առաջանում գեղագիտության էական դրույթներից մեկը: Բացի այդ, բոլորն էլ գիտեն, թե մտածողության միասնականության ձգտման տեսակետից որքան անիմաստ է մեթոդների ու օբյեկտների տարանջատումը: Ոչ մի սահման չկա այն հասկացությունների ընկալման միջև, որ մարդն ստեղծում է իմացության ու սիրո համար: Դրանք փոխներթափանցված են, համակված նույն տազնապով:

Սա անհրաժեշտ է հենց սկզբից ասել: Որպեսզի հնարավոր լինի արտուրդ գործ ստեղծել, անհրաժեշտ է կիրառել մտածողության ամենապարզ տեսակը: Բայց միաժամանակ անհրաժեշտ է, որ այն հանդես գա բացառապես մտքի թելադրած սկզբունքով: Նման միտումը հենց արտուրդով է բացատրվում: Արվեստի երկը ծնվում է մտածողության՝ կոնկրետից վերանալու հատկությունից: Յուրաքանչյուր երկ հանդիսանում է մարմնականի հաղթանակը: Մտածողության պարզությունն է արվեստի գործ հղանում ու հենց դրանով ինքն իրեն ժխտում: Նման մտածողությունը չի տարվում նկարագրությանը որևէ խոր միտք հաղորդելու գայթակղությամբ, այն համարում է անիմաստ: Արվեստի երկը մարմնավորում է մտածողության դրաման, բայց դա անուղղակի է արտահայտվում: Անհրաժեշտ է, որ արտուրդ երկի հեղինակը ճշգրիտ իմանա իր և այն արվեստի սահմանները, ուր կոնկրետն իրենից բացի ոչ մի այլ բովանդակություն չունի: Արվեստի գործը չի կարող կյանքի նպատակ, իմաստ ու միախառնություն լինել: Ստեղծագործելը կամ չստեղծագործելը ոչինչ չի փոխում: Արտուրդ հեղինակն առանձնապես չի դողում իր ստեղծածի վրա, կարող է հեշտությամբ հրաժարվել, հաճախ այդպես էլ անում է: Նա ունի իր Հաբեշտանը :

Հենց սա կարելի է համարել գեղագիտության կանոններից մեկը: Արվեստի իսկական ստեղծագործությունը միշտ էլ մատչելի է մարդուն, չնայած ավելի քիչ ասում, քան ենթադրվում է: Որոշակի կապ գոյություն ունի արվեստագետի ընդհանուր փորձառության և այդ փորձի արտահայտությունը հանդիսացող ստեղծագործության, օրինակ, Գյոթեի հասունության և «Վիլիելմ Մեյստեր»-ի միջև: Այդ կապը կեղծ է, երբ արտահայտվում է ձևավորված անձեռոցիկի՝ այսինքն բացատրական գրականության միջոցով: Եվ, ընդհակառակը, եթե ստեղծագործությունը անձնական կենսափորձի մի հավաստի բեկորն է, ուր ադամանդի նման անվերջ շողարձակվում են ներքին փայլատակումները, կապը

դառնում է ճշմարիտ: Առաջին դեպքում ստեղծագործությունը գերձանրաբեռնված է և ունի հավերժության հավակնություն, երկրորդ դեպքում՝ արգասավոր, որովհետև կենսափորձը, որի հարստության մասին մենք գլխի ենք ընկնում լուր, ենթատեքստային է: Աբսուրդ ստեղծագործողի խնդիրն ապրելու կարողությամբ գրելու կարողությունը գերազանցելն է: Այս առումով մեծ արվեստագետը միշտ մեծ կյանքով ապրող անձնավորություն է, եթե նկատի ունենանք, որ ապրել տվյալ դեպքում նշանակում է ոչ միայն խորհրդածել, այլև զգալ: Հետևաբար յուրաքանչյուր ստեղծագործության մարմնավորում է մտավոր դրամա: Աբսուրդ ստեղծագործությունը հավաստումն է այն բանի, որ մտածողությունը հրաժարվում է իր առաջնայնությունից, մնում սուսկ բնական ուժ, որը ներկայացնում է միայն երևույթների արտաքին կողմն ու կերպավորում անիմաստությունները: Եթե աշխարհում ամեն ինչ պարզ լիներ, արվեստը կարող էր գոյություն չունենալ:

Էլ չեմ խոսում պլաստիկ ձևերի կամ գույների արվեստի մասին, ուր գերիշխողն իր չափավորությամբ հիացմունք պատճառող նկարագրողականությունն էԺԷ: Արտահայտչականությունն սկսում է այնտեղ, որտեղ ավարտվում է մտածողությունը: Տաճարներն ու թանգարանները լցրած պարապ աչքերով դեռահասների դիմանկարներն ու դիմաքանդակներն իրենց ողջ փիլիսոփայությունն արտահայտում են կեցվածքով: Աբսուրդ մարդու համար այն ավելի ուսուցողական է, քան լեփլեցուն գրադարանները: Յուրովի, բայց գրեթե նույնությամբ սա վերաբերում է նաև երաժշտությանը: Երաժշտությունն արվեստի հենց այն տեսակն է, որը բացարձակապես զերծ է ուսուցանելու միտումից: Եվ այնքան մոտ է մաթեմատիկային, որ չի կարող փոխ չառնել նրա պայմանականությունները: Պայմանական ու կարգավորված կանոններով ոգու այդ խաղն ինքն իր հետ տեղի է ունենում մեր լսողության սահմաններում, որից այն կողմ թրթիռները բախվում են տիեզերական պարապությանը: Ավելի պարզ զգացողություն չի կարող լինել: Օրինակները շատ են: Աբսուրդ մարդն իրենն է համարում այս ներդաշնակությունն ու ձևերը:

Սակայն ես կուզեի խոսել այն ստեղծագործությունների մասին, ուր բացատրելու գայթակղությունը չափազանց մեծ է, պատրանքայնությունն ինքնին հասկանալի, ուր եզրահանգումները գրեթե անխուսափելի են: Ես նկատի ունեմ վիպասանությունը: Տեսնենք կարո՞ղ է աբսուրդն այնտեղ իր համար հուսալի անկյուն գտնել:

Մտածել, ամենից առաջ նշանակում է ցանկանալ ինչ-որ աշխարհ ստեղծել (կամ որ նույնն է՝ սահմանազատել սեփական աշխարհը): Այլ կերպ ասած, էլնել

մարդուն իր կենսափորձի անջրպետող հիմնարար հակասությունից՝ գտնելու համար սեփական ձգտումներին համապատասխանող նրանց համատեղության հենարանը՝ բանական պատճառներով սահմանափակված կամ համանմանությամբ մատչելի դարձած մի աշխարհ, ուր հնարավոր լինի հաղթահարել այդ անհանդուրժելի երկպառակությունը: Փիլիսոփան, եթե անգամ Կանտ է, հանդես է գալիս որպես ստեղծագործող, ունի իր կերպարները, խորհրդանշանները, հնարանքները: Նույնիսկ լուծումները: Դրան հակառակ, չնայած արտաքին երևույթներին, վեպը պոեզիայի և էսսեի համեմատությամբ ներկայացնում է արվեստի ինտելեկտուալացման ամենաբարձր աստիճանը: Իհարկե, խոսքը միայն ու միայն նշանակալից վեպերի մասին է: Ժանրի կարևորության ու բեղունության մասին հաճախ են դատում երկրորդական գործերով: Վատ վեպերը առկայության պատճառով չի կարելի մոռանալ լավագույնների արժանիքները: Իրոք, սրանցից յուրաքանչյուրը մի աշխարհ է պարփակում: Վեպն ունի իր տրամաբանությունը դատողության ձևը, ներըմբռնումն ու կանխադրյալները՝ Նան պարզության միտումըԺԸ:

Դասական հակադրությունը, որի մասին հիշատակվեց վերևում, այս դեպքում ավելի քիչ է արդարանում և արժեք ուներ միայն այն ժամանակ, երբ շատ հեշտ էր փիլիսոփայական ուսմունքն իր հեղինակից գատելը: Իսկ այժմ, երբ մտածողությունը համապարփակության հավակնություն չունի, երբ նրա լավագույն պատմությունը մեղանշումների պատմությունը կլիներ, մեզ հայտնի է, որ ցանկացած լուրջ ուսմունք իր հեղինակից անբաժանելի է: Ինչ-որ տեղ «էթիկան» նույնիսկ երկար ու հետևողական խոստովանություն է: Վերացական մտածողությունը վերջապես միավորվել է իր մարմնական հենարանին: Ճիշտ այդպես էլ մարմնի և զգացմունքի վիպական խաղերը ավելի ու ավելի են ենթարկվում ընկալման այս կամ այն պահանջին: Հիմա գրողներն այլևս «պատմություններ» չեն պատմում, ստեղծում են իրենց մոլորակը: Ի հակադրություն այս կամ այն գաղափարը միտումնավոր շարադրանքով պաշտպանողների, ամենամեծ վիպասանները փիլիսոփավիպասաններն են, ինչպես Բալզակը, Սադը, Մելվիլը, Ստենդալը, Դոստոևսկին, Պրոստը, Մալրոն, Կաֆկան, էլի մի քանիսը:

Ու հենց դատողականի փոխարեն նկարագրական գրելաձևին նախապատվություն տալը ընդհանուր է դարձնում նրանցից յուրաքանչյուրի այն համոզմունքը, որ բացատրական սկզբունքներով առաջնորդվելն անիմաստ է, հետևություն, որ բխում է երևույթների արտաքին զգացական գրգիռներից: Նրանք բոլորը ստեղծագործությանը դիտում են որպես ամեն ինչի ավարտ և սկիզբը: Այն դառնում է ուղղակի չարտահայտված փիլիսոփայության արդյունքը, շոշափելի

լուսաբանությանն ու ընդհանրացումը, չնայած երկը կատարյալ է թվում հենց ենթատեքստային փիլիսոփայության շնորհիվ: Այսպես հաստատվում է այն հին ճշմարտությունը, ըստ որի, եթե ստերջ միտքը հեռանում է իրականությունից, բեղունն, ընդհակառակը, մոտենում է: Ի վիճակի չլինելով կյանքը իմաստավորել, մտածողությունը բավարարվում է նկարագրելով: Վեպը, որի մասին խոսվում է, միաժամանակ հարաբերականի ու անսպառելիի իմացության միջոց է և այս առումով նման է սիրուն: Միրո նման վիպական երկունքն օժտված է նախնական հիացմունքով ու խորհրդածությունների բեղուն հորձանքով:

Մի խոսքով, հենց սկզբից ես ընդունում եմ վեպի այս առավելությունները, ընդունում նաև հանձին ճնշված մտածողության այն տիրակալների, որոնց փիլիսոփայական ինքնասպանությունը վայելելու եմ ավելի ուշ: Ինձ հետաքրքրում են միայն այն ուժերի բացահայտումն ու նկարագրությունը, որոնք նրանց տանում են պատրանքների ընդհանուր ճանապարհը: Այդ նույն մեթոդն ինձ այս դեպքում էլ կօգնի: Ու քանի որ ես այն արդեն կիրառել եմ, կարող եմ խորհրդածություններս սահմանափակել և միայն մեկ ճշգրիտ օրինակը բավարար համարելով, գոհանալ համառոտ շարադրանքով: Կուզեի իմանալ՝ եթե մարդը համաձայնվում է ապրել առանց վերին միջամտության, կարո՞ղ է առանց վերին միջամտության էլ աշխատել ու ստեղծագործել և ի՞նչ ճանապարհով է հնարավոր հասնել այդ ազատությանը: Ես ուզում եմ իմ տիեզերքն ազատել ուրվականներից և բնակեցնել այնպիսի հավաստի ճշմարտություններով, որոնց գոյությունն անհնար է ժխտել: Ես կարող եմ աբսուրդ գործ գրել, նախապատվությունը ստեղծագործական այդ մեթոդին տալ: Բայց որպեսզի աբսուրդ մեթոդը չխեղաթյուրվի, պետք է հավատարիմ մնա իր աննպատակայնության գաղափարին: Նույնը և արվեստի բնագավառում: Եթե աբսուրդի սկզբունքները չեն պահպանվում, եթե արվեստի գործը պառակտում ու ընդվզում չի արտահայտում, եթե գոհ է դնում պատրանքների ու հույս առաջացնում, ուրեմն՝ աննպատակ չէ: Ես այլևս չեմ կարող այս ամենից ձերբազատվել, իմ կյանքն այս ամենի մեջ իմաստ է գտնում, իսկ դա խաբկանք է: Ստեղծագործությունը դադարում է օտարացման և զգացմունքների արտահայտությունը լինելուց, որոնցով մարդկային կյանքի իմաստն ու անօգտակարությունը հանգում են իրենց ավարտին:

Ինչպե՞ս հաղթահարել այն ստեղծագործությունների բացատրելու գայթակղությունը, որոնց մեջ նման միտումն առանձնապես զգալի է: Մտացածին աշխարհում, ուր իրականության զգացողությանը շատ ուժեղ է, առանց վերջնական եզրահանգումներ կատարելու ցանկությամբ տարվելու, կարո՞ղ եմ ես հավատարիմ մնալ աբսուրդին: Մի վերջին ճիգ կատարենք գտնելու համար այս հարցերի

պատասխանը, որոնց իմաստը, թվում է, հասկանալի է: Այդպես է արտահայտվում ուղեղի վերջին տվյալանքը, որը հանուն պատրանքի չի ուզում հրաժարվել դժվարությամբ ձեռք բերած նախնական պատվիրաններից: Այն, ինչ ընդունելի է արքայի համոզմունք դարձրած մարդու բազմաթիվ դրսևորումներից մեկը հանդիսացող ստեղծագործության կապակցությամբ, ընդունելի է մարդուն մատչելի բոլոր կենսաձևերում: Բռնակալն ու դերասանը, ստեղծագործողն ու Դոն ժուանը կարող են մոռանալ, որ առանց կյանքի անհեթեթությունը գիտակցելու, անհնար է ապրել: Ամեն ինչի շատ շուտ են վարժվում: Ինչ-որ մեկը երջանիկ ապրելու համար որոշում է շատ փող աշխատել է ողջ ջանքերը, կյանքի լավագույն մասը գոհում է այդ նպատակի համար: Այդպես մոռացվում է երջանկությունը, միջոցը դառնում է նպատակ: Նույնը կարելի է ասել բռնակալի մասին, որը դառնում է սեփական փառամոլության գերին, փառամոլություն, որն սկզբում լոկ դեպի ավելի համապարփակ նպատակ տանող միջոց էր: Դոն ժուանն էլ իր հերթին հաշտվում է ճակատագրի հետ, գոհանում այն գոյությամբ, որն իմաստավորվում էր լոկ ընդվզմամբ: Առաջին դեպքում մենք գործ ունենք իմացականության, երկրորդ դեպքում ըմբոստության հետ, բայց երկու դեպքում էլ արքայի վերանում է: Մարդկային հոգիներում այնքա՛ն համառող հույս կա: Նույնիսկ ամենապատրանագուրկ մարդիկ երբեմն վերջիվերջո տարվում են ցնորքներով: Հոգեկան խաղաղասիրությունից առաջացած նման հաշտվողականությունն էկզիստենցիալիստական աշխարհընկալման ներքին կրկնորդն է: Մի խոսքով, գոյություն ունեն լույսի աստվածներ ու ցեխի կուռքեր, չնայած մեր որոնած մարդկային կերպարանքներին մեզ տանում է միջին ճանապարհը:

Մինչ այժմ մենք արքայի դրսևորումներին ծանոթացանք հիմնականում շեղումների միջոցով: Ճիշտ այդպես էլ վիպական ստեղծագործությունը ընկալելու համար բավական է հիշել, որ վեպը որոշ փիլիսոփայական ուսմունքների նման կարող է երկակի իմաստ ունենալ: Հետևաբար, որպես օրինակ, ես կարող եմ ընտրել այնպիսի երկ, ուր ի մի բերված լինեն արքայի մտածողության բոլոր հատկանիշները՝ սկսած նախնական պարզությունից և ողջ իրադրության մատչելիությունից: Հետևությունները ուսուցողական նշանակություն ունեն և ցույց են տալիս, որ եթե արքայի պահանջները չեն պահպանվում, ինչ կողմնակի ճանապարհով են պատրանքները ներթափանցում: Բավական է պարզել միայն, թե որքանով են ճիշտ ընտրված օրինակն ու թեման, և ընդհանրապես վիպասանը հավատարի՞մ է ինքն իրեն: Խոսքը այն նույն վերլուծության մասին է, որ մի անգամ մենք արել ենք ավելի հանգամանորեն:

Կուզեի դիտարկել Դոստոևսկու նախասիրած թեմաներից մեկը, չնայած նույն հաջողությամբ կարելի էր այլ երկեր ընտրել^{ԺԹ}: Բայց Դոստոևսկին խնդիրը քննում է ուղղակի, լայն ընդգրկումով ու զգացմունքով, ինչպես հատուկ էկզիստենցիալիստական մտածողությանը, որի մասին վերևում խոսք եղավ: Այդ գուզահեռն էլ հենց կդառնա իմ նոր քննարկման օբյեկտը:

ԿԻՐԻԼՈՎ

Դոստոևսկու բոլոր հերոսներին հետաքրքրում է կյանքի իմաստը: Հենց սրանով են նրանք արդիական և ծիծաղելի թվալուց չեն վախենում: Ժամանակակից զգացողականությունը դասականից տարբերվում է նրանով, որ առաջինը սնվում է մետաֆիզիկական, երկրորդը՝ բարոյական սկզբունքներով: Դոստոևսկու վեպերում հարցերն այնպիսի սրությամբ են դրվում, որ ենթադրում են միայն ծայրահեղ լուծումներ: Գոյությունը սուտ է կամ հավերժական: Եթե Դոստոևսկին բավարարվեր այս հարցի քննությամբ, փիլիսոփա կլիներ, բայց քանի որ նկարագրում է, թե մտքի նման խազերը մարդկային կյանքում ինչ հետևանքներ կարող են ունենալ, գեղագետ է: Հետևանքներից նրան առանձնապես հետաքրքրում է այն, որին ինքը «Գրողի օրագրում» կոչում է տրամաբանության ինքնասպանության: 1876 թվականի դեկտեմբերյան գրառումներում նա ներկայացնում է նույնիսկ «տրամաբանության ինքնասպանի» դատողությունները: Համոզված, որ մարդկային գոյությունը կատարյալ աբսուրդ է նրա համար, ով չի հավատում հոգու անմահությանը, ինքնասպանը հանգում է հետևյալ եզրակացություններին.

«Քանի որ երջանկության վերաբերյալ իմ հարցերին ես իմ գիտակցության միջոցով պատասխան եմ ստանում, որ երջանիկ կարող եմ լինել միայն ընդհանուրի հետ ներդաշնակվելով, որը չեմ հասկանում և ինձ համար ակնհայտ է, որ երբեք ի վիճակի չեմ լինի հասկանալու...

Վերջապես քանի որ նման պայմաններում ես ինձ վրա եմ վերցնում միաժամանակ հայցվորի ու պատասխանողի, դատվողի ու դատավորի դերերը և բնության նման խաղը համարում եմ անհեթեթ, իսկ իմ մասնակցությունը անգամ նվաստացուցիչ...

Որպես հայցվոր ու պատասխանող, դատվող ու դատավոր բնությանը, որը նման անպատկառությամբ ու անամոթությամբ ինձ աշխարհ է բերել տանջվելու համար, ինձ հետ միասին դատապարտում եմ ոչնչացման» :

Այս կեցվածքի մեջ, իհարկե, ծիծաղաշարժ ինչ-որ բան կա: Տվյալ անձնավորությունն ինքնասպան է լինում, որովհետև մետաֆիզիկական առումով վիրավորված է: Որոշակի իմաստով նա վրեժ է լուծում, ապացուցում, որ «հետը կատակ անել չի կարելի»: Հայտնի է՝ այս նույն գաղափարն ավելի խոր ընդգրկումով արծարծում է Կիրիլովը՝ «Դևերի» հերոսներից մեկը, որ նույնպես տրամաբանության ինքնասպանության ջատագով է: Ճարտարագետ Կիրիլովը մի առիթով հայտարարում է, որ ուզում է վերջ տալ կյանքին՝ «մտքով այդպիսի գաղափար է անցել»: Այս արտահայտությունը պետք է ուղղակի հասկանալ՝ նա հանուն գաղափարի է պատրաստվում մեռնել: Դա ինքնասավանության բարձրագույն ձևն է: Աստիճանաբար, տեսարանից տեսարան, ճարտարագետի կերպարը որոշակիանում է ու բացահայտվում նրան խանդավառած մահվան գաղափարը: Կիրիլովը, իրոք, կրկնում է «Օրագրի» խորհրդածությունները: Նա զգում է, որ Աստված անհրաժեշտություն է և պետք է որ գոյություն ունենա: Բայց Կիրիլովը գիտի, որ Աստված չկա ու չի կարող լինել: «Ինչպե՞ս չես հասկանում,— բացականչում է նա,— հենց միայն դրա համար կարելի է ինքնասպան լինել»: Այս մտայնությունը նրան հանգեցնում է մի քանի արքայադուր հետևությունների: Նա անտարբերությամբ թույլ է տալիս իր ինքնասպանությունն օգտագործել այնպիսի նպատակի համար, որ ինքն արհամարհում է: «Այս գիշեր զգացի՝ ինձ համար միևնույն է»: Վերջին հաշվով նա վճռական քայլի դիմում է ընդվզման և ազատության միախառնված զգացումով: «Ես անձնասպան եմ լինում, որպեսզի ցույց տամ իմ անհնազանդությունն ու նոր, սարսափելի ազատությունը»: Սա արդեն ոչ թե վրեժխնդրություն է, այլ ընդվզում, հետևաբար Կիրիլովն արքայադուր կերպար է, այն էական տարբերությամբ միայն, որ ինքնասպանության է գործում: Բայց հենց ինքն էլ բացատրում է հակասությունը, այն էլ այնպես, որ լիովին բացահայտվում է արքայադուրի գաղտնիքը: Կիրիլովն իր մահվան տրամաբանությանը այնպիսի անսովոր հավակնոտություն է հաղորդում, որ նպատակը միանգամից պարզվում է՝ նա ուզում է անձնասպան լինել, որ Աստված դառնա:

Եզրահանգումը դասական պարզություն ունի: Եթե Աստված չկա, Կիրիլովն աստված է: Եթե Աստված չկա, Կիրիլովը պետք է ինքնասպան լինի: Ուրեմն, Կիրիլովը պետք է ինքնասպան լինի, որ Աստված դառնա: Սա արքայադուր, բայց տվյալ դեպքում անհրաժեշտ դատողություն է: հետաքրքիր է, սակայն, երկիր իջեցված այս աստվածության իմաստը գտնելը, այսինքն՝ դեռևս բավական մութ մնացած «Եթե Աստված չկա, ուրեմն աստված եմ» նախադրույթը լուսաբանելը: Անհրաժեշտ է նշել, որ նման անհեթեթ հավակնություններ ունեցող մարդը ավելի աշխարհից է: Նա առողջությունը պահպանելու համար առավոտները լիցքային վարժություն է անում,

կիսում է կնոջը գտած Շատովի ուրախությունը: Թղթի կտորի վրա, որ հայտնաբերվելու է իր մահից հետո, ուզում է նկարել «նրանց» լեզու ցույց տվող մուր: Կիրիլովը երեխայի նման միամիտ է ու բարկացկոտ, հախուռն, հետևողական ու զգայուն: Նա միայն իր տրամաբանությամբ ու սևեռուն գաղափարով է գերմարդ, մնացած բոլոր դեպքերում շատ սովորական է: Այնուամենայնիվ հանգիստ է խոսում իր աստվածության մասին: Կիրիլովը խենթ չէ, հակառակ դեպքում պետք է, որ Դոստոևսկին խենթ լիներ, ոչ էլ տառապում է մեծամտության մարմաջով: Եվ տվյալ դեպքում ծիծաղելի է նրա խոսքերն ուղղակի հասկանալը:

Կիրիլովն ինքն է մեզ օգնում իրեն ընկալել: Ստավրոգիինի հարցին պատասխանելով, ճշտում է, որ ինքը մարդ-աստծո նկատի չունի: Կարելի է կարծել նույնիսկ, որ այդպես ասում է Քրիստոսից տարբերվելու համար, այնինչ իրականում ձգտում է նույնանալ նրա հետ: Կիրիլովը մի պահ պատկերացնում է նույնիսկ, թե ինչպես մահից հետո Հիսուսը դրախտ չի ընկել ու հասկանում՝ բոլոր տանջանքներն ավելորդ են եղել: «Բնության օրենքները,— ասում է ճարտարագետը,— Քրիստոսին ստիպեցին ապրել ստի մեջ, մեռնել ստի համար»: Միայն այս իմաստով է Հիսուսը մարմնավորում մարդկային ողջ դրաման: Նա մարդ-կատարելություն է, որին բաժին է ընկել ամենաաբսուրդ ճակատագիրը: Քրիստոսը ոչ թե Աստված-մարդ է, այլ մարդ-աստված: Նրա նման ամեն ոք կարող է խաչվել ու խաբվել, ինչ-որ տեղ նույն բախտին արժանանալ:

Ուրեմն, աստվածությունը, որի մասին խոսվում է այստեղ, ամբողջությամբ երկրային է: «Երեք տարի անընդհատ, ասում է Կիրիլովը, ես փնտրում էի իմ աստվածության վկայությունը և գտա: Իմ աստվածության վկայությունը անկախությունն է»: Հիմա արդեն հասկանալի է դառնում կիրիլովյան կանխադրույթը. «Եթե Աստված չկա, ես աստված եմ»: Աստված դառնալ նշանակում է ազատ լինել այս աշխարհում, չճառայել ոչ մի անմահ էակի և մանավանդ այդ տանջալից անկախությունից կատարել բոլոր հետևությունները: Եթե Աստված կա, ամեն ինչ կախված է նրանից, մենք նրա կամքին հակառակ ոչինչ չենք կարող անել, իսկ եթե չկա, ամեն ինչ մեզնից է կախված: Կիրիլովի, ինչպես նաև Նիցշեի համար Աստծուն սպանել, նշանակում է աստված դառնալ, այս աշխարհում իրականություն դարձնել Ավետարանի հավիտենական կյանքը:

Բայց եթե այս մետաֆիզիկական ոճիրը բավական է ինքնահաստատման համար, անձնասպանությունն ի՞նչ դեր է խաղում: Ազատությունը ձեռք բերելուց հետո ի՞նչ միտք ունի կյանքին վերջ տալը, այս աշխարհից հեռանալը: Սա, ինչ խոսք, հակասություն է: Կիրիլովը շատ լավ գիտե այդ, դրա համար ավելացնում է. «Եթե դա

գիտակցես, ուրեմն ցար ես և ոչ թե քեզ կսպանես, այլ կապրես փառքի գագաթին»։ Բայց մարդիկ չգիտեն, «դա» չեն զգում՝ Պրոմեթևսի ժամանակների նման իրենք իրենց կույր հույսեր են փայփայումԻԱ։ Նրանք ուզում են, որ իրենց ցույց տան ճանապարհը, առանց քարոզի չեն կարողանում ապրել։ Հետևաբար, Կիրիլովը մարդկության հանդեպ ունեցած սիրուց պիտի ինքնասպանություն գործի։ Նա իր եղբայրներին ցույց է տալու այն արքայական ու դժվարին ճանապարհը, որի առաջին ուղևորն է լինելու։ Սա ուսուցողական ինքնասպանություն է, Կիրիլովն ինքնագոհություն է կատարում։ Բայց եթե նա անգամ խաչվում է, չի խաբվում, մնում է մարդ-աստված և համոզվելով, որ մահից հետո ոչ մի հեռանկար չկա, խորասուզվում է ավետարանական թախծի մեջ։ «Ես դժբախտ եմ,— ասում է նա,— որովհետև պարտավոր եմ ինձ անկախ հռչակել»։ Բայց նրա մահից հետո մարդիկ ի վերջո գիտակցության կգան, աշխարհը կբնակեցվի ցարերով ու մարդկային փառքով կպսակվի։ Կիրիլովի ատրճանակի կրակոցը ամենավերջին հեղափոխության ազդանշանը կդառնա։ Այսպիսով, նրան մահվան է մղում ոչ թե հուսահատությունը, այլ անշահախնդիր սերը մերձավորի նկատմամբ։

Այս աննախադեպ մտավոր արկածը արյան մեջ ավարտելուց առաջ Կիրիլովը մի բան է ասում միայն, որը հին է, որքան մարդկային տառապանքն է հին. «Ամեն ինչ լավ է»։

Հետևաբար ինքնասպանությունը Դոստոևսկու երկերում դառնում է աբսուրդ թեմա։ Շարունակելուց առաջ նկատենք միայն, որ Կիրիլովը վերամարմնավորվում է այլ կերպարների մեջ, որոնք այլ աբսուրդ թեմաներ են արծարծում։ Ստավրոգինը և Իվան Կարամազովը առօրյա կյանքում դիմում են աբսուրդ ճշմարտությունների։ Կիրիլովի մահը հենց նրանց է ազատագրում։ Նրանք վարձում են ցար դառնալ։ Ստավրոգինը բոլորին հայտնի է, թե ինչպիսի՝ «անլուրջ» կյանք է վարում։ Բոլորը նրան ասում են։ Այնուամենայնիվ կերպարի բանալին գտնվում է հրաժեշտի նամակում. «Ես ոչինչ չկարողացա ատել»։ Նա անտարբերության ցար է։ Նույնն է Իվանը, որն իր հերթին չի ուզում հրաժարվել բանականության արքայական իշխանությունից։ Բոլոր նրանց, ովքեր իր եղբոր նման սեփական կյանքով ապացուցում են, որ հավատալու համար պետք է հնազանդ լինել, Իվանը կարող է պատասխանել՝ դա ամոթալի պայման է։ Իր բառ-բանալին՝ «Ամեն ինչ կարելի է»-ն, ունի տխրության որոշակի երանգ։ Հասկանալի է, ինչպես Նիցշեն՝ Աստծո ամենահռչակավոր ահաբեկիչը, նա էլ ի վերջո խելագարվում է։ Բայց նման ճանապարհ անցնելը մեծ համարձակության հետ է կապված, ողբերգական ավարտից

առաջ արքայադ ամաճողության գլխավոր մտահոգությունը հետևյալն է. «Ի՞նչ է հաստատում այս ամենը»:

Ուրեմն, ինչպես վեպերը, այնպես էլ «Օրագիրը», առաջ են քաշում արքայադի հարցը: Նրանք հաստատում են մինչև մահ տանող տրամաբանությունը, հիացմունքը, «սարսափելի ազատությունը», ցարերի՝ մարդկանցը դարձած փառքը: Ամեն ինչ լավ է, ամեն ինչ կարելի է, չարժե որևէ բան ատել՝ սրանք արքայադ դատողություններ են: Ուրեմն ինչ ահռելի ուժ ունի գրողի ստեղծագործությունը, որ մեզ հարազատ է դարձնում կրակե ու սառցե այս էակներին: Նրանց սրտերում փոթորկվող անտարբերությամբ պարտրված աշխարհը մեզ արտառոց չի թվում: Մենք այդ աշխարհում գտնում ենք մեր առօրյա տագնապները: Անշուշտ, ոչ ոք Դոստոևսկու նման չի կարողացել հաղորդել արքայադ աշխարհի ծանոթ ու տանջալից հմայքը:

Այնուամենայնիվ, ո՞րն է նրա եզրահանգումը: Երկու մեջբերում ցույց կտան մետաֆիզիկական ողջ շրջադարձը, որը գրողին հանգեցրել է այլ հայտնությունների: Քանի որ տրամաբանության ինքնասպանի մտայնությունն առաջացրել էր քննադատների դժգոհությունը, «Օրագիր» հաջորդ պրակներում Դոստոևսկին զարգացնում է իր միտքն ու եզրակացնում. «Եթե անմահության հավատը այնքան անհրաժեշտ է մարդուն, որ առանց դրա նա ինքնասպանություն է գործում, ուրեմն այդ հավատը մարդկության բնականոն վիճակն է: Եթե այդպես է, հոգու անմահությունն անկասկած գոյության ունի»: Մյուս կողմից էլ Դոստոևսկու վերջին վեպի վերջին էջերում, որպես Աստծո հետ մղած տիտանական պայքարի ավարտ, երեխաներն Ալյոշային հարցնում են. «Կարամազով, իսկապե՞ս ճիշտ է ասում կրոնը, որ մենք բոլորս հարություն կառնենք մեռյալներից ու կվերակենդանանանք, նորից կտեսնենք իրար»: Ալյոշան պատասխանում է. «Անպայման կտեսնենք և ուրախությամբ, ցնծությամբ կպատմենք իրար ամեն ինչ, որ եղել է.»:

Այսպիսով, Կիրիլովը, Ստավրոգինը և Իվանը պարտվում են: «Կարամազովները» պատասխանում է «Դներին»: Խոսքն, իհարկե, վերջնական եզրահանգման մասին է: Ալյոշայի պարագան այնքան երկդիմի չէ, ինչպես իշխան Միշկինին: Այս վերջինը, որ հիվանդ է, ապրում է ժպիտներով ու անտարբերությամբ պարտրված մշտնջենական ներկայով: Նման երանելի վիճակը կարող է հենց այն հավիտենական կյանքը լինել, որի մասին խոսում է իշխանը: Ալյոշան, ընդհակառակը, որոշակի ասում է. «Անպայման կտեսնենք իրար»: Ինքնասպանության կամ խելագարության մասին այլևս խոսք չկա: Պե՞տք են դրանք այն մարդուն, ով վստահ է անմահությանն ու նրա պատճառած ուրախություններին: Մարդն իր աստվածությունը փոխում է երջանկությամբ: «Եվ ուրախությամբ,

ցնծությամբ կպատմենք իրար ամեն ինչ, որ եղել է»: Այսպիսով, չնայած Կիրիլովի ատրճանակը ճայթել է ինչ-որ տեղ Ռուսաստանում, աշխարհը շարունակել է ապրել սին հույսերով: Մարդիկ չեն հասկացել «դա»:

Ուրեմն, մենք գործ ունենք ոչ թե արքունի, այլ էկզիստենցիալիստ վիպասանի հետ: Այստեղ էլ ցատկը տպավորիչ է, գրողին ոգեշնչված արվեստին վեհություն է հաղորդում: Սա հուզիչ, կասկածներով ու անորոշությամբ հագեցած հախոտն հնազանդությունն է: «Կարամազովների» մասին Դոստոևսկին գրել է. «Գլխավոր հարցը, որին հետամուտ պիտի լինենք այս գրքի բոլոր գլուխներում, որը գիտակցաբար կամ անգիտակցաբար ինձ տանջել է ողջ կյանքում՝ Աստծո գոյությունն է»: Իհարկե, դժվար է հավատալ, որ մի վեպը կկարողանար երջանիկ ինքնավստահության փոխել կյանքի ողջ տառապանքը: Մեկնաբաններից մեկը ԻԲ իրավացիորեն նկատել է, որ Դոստոևսկին հաճախ նույնանում է Իվանի հետ, որ եթե «Կարամազով եղբայրների»՝ Աստծո գոյությունը հաստատող գլուխները երեք ամսվա համառ ջանքեր են խլել, այն, ինչ ինքը կոչում է «աստվածանարգություն», գրել է երեք շաբաթում՝ մի շնչում: Չկա այնպիսի կերպար, որի մարմնի մեջ խրված չլինի այս փուշը, որը հիվանդացած չլինի ու բուժում չփնտրի զգացմունքների կամ անբարոյականության մեջ ԻԳ:

Բոլոր դեպքերում այս կասկածների կողքից անտարբեր չի կարելի անցնել: Սա մի ստեղծագործություն է, որի կիսաստվերում մարդու պայքարը սեփական հույսերի հետ ավելի ցայտուն է երևում, քան օրվա լույսով: Ի վերջո գրողն

իր կերպարներին հակառակ դիրք է գրավում: Այս հակասությունը մեզ հնարավորության է տալիս մի անգամ ևս ճշտելու, որ տվյալ դեպքում մենք ոչ թե արքունի, այլ արքունի խնդիրներ քննարկող երկի հետ գործ ունենք:

Դոստոևսկու պատասխանը նվաստացումն է, ըստ Ստավրոգինի՝ «ամոթը»: Աբսուրդ ստեղծագործությունն, ընդհակառակը, պատասխան չի պարունակում: Ահա՞ տարբերությունը: Վերջում նշենք, որ գրողի երկերում արքունիին հակադրվում է ոչ թե քրիստոնեությունը, այլ ապագա կյանքի հավատը: Կարելի է լինել քրիստոնյա և արքունի մարդ: Կան քրիստոնյաներ, որոնք չեն հավատում հանդերձյալ կյանքին: Արվեստի գործի վերաբերյալ ուրեմն կարելի է կիրառել արքունի վերլուծության ուղղություններից մեկը, որին անդրադարձանք արդեն նախորդ էջերում: Այդ ուղղությունը մեզ կհասցնի մինչև «Ավետարանի արքունիության» հարցադրումը և լույս կսփռի իր հետևություններով բեղուն այն մտքի վրա, ըստ որի համոզմունքների կայունությունը անհավատությանը չի խանգարում: Ընդհակառակը, մենք տեսանք, որ

«Դների» հեղինակը, որին լավ ծանոթ են այդ ուղիներն, ի վերջո բոլորովին այլ ճանապարհ է ընտրում: Գրողի զարմանալի պատասխանը իր կերպարներին, Դոստոևսկունը՝ Կիրիլովին, ըստ էության կարելի է ձևակերպել այսպես՝ Գոյությունը սուտ է և հավերժական:

ԱՆՀԵՌԱՆԿԱՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ուրեմն, ես զգում եմ, որ անհնար է մեկընդմիջտ բացառել հույսը, որը կարող է համակել նույնիսկ այնպիսի մարդկանց, ովքեր ձգտում են ձերբազատվել նրանից:

Դրանով են հետաքրքիր այն երկերը, որոնց մասին խոսք եղավ մինչ այժմ: Իհարկե, գեղարվեստական գրականության մասին խոսելիս, ես կարող էի թվարկել ոչ քիչ իրոք աբսուրդ ստեղծագործություններԻԴ: Բայց ամեն ինչ պետք է իր սկզբունքն ունենա: Իմ այս ուսումնասիրության նյութը յուրօրինակ հավատարմությունն է: Եկեղեցին այդքան դաժան էր հերետիկոսների նկատմամբ, որովհետև համոզված էր, որ մոլորված զավակից վատ թշնամի չկա: Բայց գնոստիկական խիզախումների ու մանիքեական հոսանքների հետևողականությունն ավելի նպաստեց ուղղափառ դրույթների ստեղծմանը, քան ամեն տեսակ աղոթքները: Ընդունելով հանդերձ բոլոր տարբերությունները, նույնը կարելի է պնդել աբսուրդի վերաբերյալ: Աբսուրդի ուղին գտնելու համար պետք է այն ճանապարհներն հետազոտել, որոնք նրանից հեռացնում են: Հասնելով աբսուրդ մտահանգման, գտնվելով աբսուրդ մտայնության ոլորտում, մենք անտարբերությամբ չէ, որ դիմավորում ենք իր ամենախանդավառ դեմքերից մեկով մեզ ընդառաջ եկող հույսը: Սա ցույց է տալիս աբսուրդ մտածելաձևի բարդությունը և մանավանդ այն, որ այս էսսեի տրամաբանությանը հետևող մտածողությանը որքան անհրաժեշտ է ինքնատիրապետումը:

Բայց եթե առայժմ աբսուրդ երկերը թվարկելու հարկ չկա, կարելի է գոնե աբսուրդ կեցությունը ընդհանրացնող մտածողության դրույթներից մեկի մասին եզրակացություններ անել: Նման բարի ծառայություն մշակույթին կարող է մատուցել միայն բացասական մտածողությունը, որի նպատակամղված ու չափավոր ընթացքը նշանավոր երկերի ընկալման համար նույնքան անհրաժեշտ է, որքան սև գույնը՝ սպիտակի: Աբսուրդ մտածողությունն է միայն ի վիճակի «հանուն ոչ մի բանի» տքնել և ստեղծագործել, իմանալով հանդերձ, որ արվեստի գործն ապագա չունի՝ մի օր փոշիանալու է, կավով քանդակ անել, անկախ այն ներքին համոզմունքից, որ դարերով ապրող ու մի ակնթարթում ոչնչացող արձանի միջև ոչ մի տարբերություն չկա: Աբսուրդ ստեղծագործողը պայքարում է երկու ճակատով՝ մի կողմից ժխտում է, մյուս կողմից՝ հաստատում: Նա պարտավոր է զանտզարդել դատարկությունը:

Մա հանգեցնում է արվեստի ստեղծագործության յուրօրինակ ըմբռնման: Շատ հաճախ արվեստագետի գործը դիտվում է մեկը մյուսից անջատ, որպես մեկուսացած վկայություններ՝ այսինքն նկարչին շփոթում են գրողի հետ: Խորագգա միտքը միանալով կենսափորձին, որոշակիանալով նրա ոլորտներում, անընդհատ խմորվում է: Այդպես էլ անհատի ամբողջական ստեղծագործությունը ձևավորվում է բազմազան ու իրար հաջորդող այն տարրերով, որոնք առանձին երկեր են: Սրանք լրացնում են իրար, ուղղում, ճշգրտում, հակասում նույնիսկ: Եվ եթե ինչ-որ բան ավարտում է այս ստեղծագործական ընթացքը, ոչ թե պատրանքներից կուրացած արվեստագետի՝ «Ես ամեն ինչ ասացի» հաղթական ճիչն է, այլ մահը, որը վերջակետում է թե՛ նրա փորձառությունը և թե՛ հանճարը:

Պարտադիր չէ, որ ընթերցողը նկատի հեղինակի տքնանքը, գերմարդկային խորաթափանցությունը: Ստեղծագործությունն իրականում գաղտնիք չունի: Հրաշքը տեղի է ունենում կամքի շնորհիվ, չնայած իսկական ստեղծագործությունը չի կարող առեղծված չունենալ: Ինչ խոսք, մի շարք ստեղծագործություններ հնարավոր է, որ նույն մտածողության մոտավոր տարբերակումները լինեն: Բայց կարելի է պատկերացնել նաև այլ բնույթի ստեղծագործողներ, որոնք ավելի հակված են դեպի գուգորդումը: Առաջին հայացքից կարող է թվալ նույնիսկ, որ նման ստեղծագործություններն իրար հետ կապ չունեն, ինչ-որ տեղ անգամ հակասում են: Բայց եթե հաջորդականությունը ճշտենք, ներքին կապը կվերականգնվի: Ստեղծագործություններն այսպիսով իրենց վերջնական իմաստը ստանում են հեղինակի մահից հետո միայն: Փաստորեն հեղինակի կյանքն է լույս սփռում նրանց վրա: Մահվան պահին բոլոր Երկերը միասին ձախողումների հավաքածու են թվում: Բայց եթե այդ ձախողումները ունեն միևնույն արձագանքը, նշանակում է հեղինակը կարողացել է անընդհատ կրկնել սեփական ճակատագրի բանաձևը, շեփորել, տարածել այն ամուլ գաղտնիքը, որի միակ պահապանն էր:

Այստեղ ակնբախ է իշխելու ձգտումը: Բայց մարդկային միտքն ավելիին է ընդունակ: Սովորաբար այն ներկայացնում է ստեղծագործության միայն կամային սկզբունքը: Մի այլ տեղ էս արդեն ասել եմ, որ մարդկային կամքի միակ խնդիրը գիտակցությանը սատար լինելն է, որը, սակայն, առանց որոշակի կարգուկանոնի անհնար է: Համբերատարության և ողջախոհության բոլոր դպրոցներից ամենաարդյունավետը ստեղծագործելն է: Այն միաժամանակ մարդկային առաքինության ցնցող վկայությունն է, որն արտահայտվում է ճակատագրին չհամակերպվելու համառ ընդվզմամբ, ջանքերի ամուլ հետևողականությամբ: Ստեղծագործությունը պահանջում է ամենօրյա տքնանք, ինքնատիրապետում,

հնարավորությունների ճշգրտում, կարողություններ և ուժ: Այն յուրօրինակ մտածելակերպ է: Եվ այս ամենը «հանուն ոչ մի բանի»՝ անընդհատ նույնը կրկնելու, տեղում դռփելու համար: Բայց գուցե արվեստի վավերական ստեղծագործությունը արժեքավոր է ոչ թե ինքնին, այլ մարդուն փորձելու կարողությամբ և տեսիլքները հաղթահարել տալու, չգունագարդած իրականությանը մի քիչ ավելի մոտեցնելու հնարավորությամբ:

Գեղագիտության հարցում չսխալվենք: Խոսքն այստեղ ամեննին էլ համբերատար հաղորդվող տեղեկությունների, ինչ-որ տեսակետների, անընդհատ ու անարդյունք նկարագրության մասին չէ: Եթե կարողացա հասկանալի լինել՝ ճիշտ հակառակը: Վեպ-տեսակետը, ինչ-որ բան ապացուցող երկը՝ ստեղծագործություններից ամենատհաճը, շատ հաճախ հանդիսանում է ինքնագոհ մտածողության արդյունք: Հենց որ հեղինակներին թվում է, թե որևէ ճշմարտության են հասնում եղել, իսկույն իրենց գրածը հրապարակում են: Բայց այդ ժամանակ ի հայտ են գալիս գաղափարներ, որոնք դատողության հետ որոշակի հակասության մեջ են մտնում: Նրանց հեղինակները անամոթ փիլիսոփաներն են, իսկ նրանք, որոնց մասին խոսում կամ ստեղծում եմ իմ երևակայությամբ, ճիշտ հակառակը՝ պայծառամիտ մտածողներ: Այն պահին, երբ միտքը վերադառնում է իր սկիզբը, նրանք ստեղծում են իրենց երկերի կերպարները, որպես սահմանափակ, մահկանացու, ընդվզող մտքի որո-շակի խորհրդանիշներ:

Թերևս այդ կերպարներն ինչ-որ բան հաստատում են: Բայց վիպասանները նման հաստատումներով ոչ այնքան ընթերցողին են ինչ-որ բան ապացուցում, որքան իրենք իրենց: Կարևորը, և դա՛ է նրանց մեծությունը, իրենք հաղթանակում են կոնկրետությամբ: Այս խորապես մարմնական հաղթանակը նախապատրաստում է մտածողությունը, որի վերացարկող կարողությունները ուշադրության չեն էլ արժանանում: Նման անտեսումից հետո մարմնականն իսկույն կեթ ձգտում է, որ ստեղծագործությանը լուսավորվի իր ողջ աբսուրդ փայլով: Ամենահախուռն ստեղծագործությունների հեղինակները կատակասեր փիլիսոփաներն են:

Միասնականությունը ժխտող ամեն միտք, բնական է, փառաբանում է բազմազանությանը, որն ինքնին արվեստի խթան է: Միտքն ազատագրող միակ մտածողությունն այն է, որը նրան մենակ է թողնում սեփական սահմանների և առաջիկա մահվան անխուսափելիության գիտակցության հետ: Այլևս ոչ մի ուսմունք չի կարող գայթակղել նրան: Միտքն սպասում է ստեղծագործության ու կյանքի հասունացմանը: Անջատվելով նրանից, ստեղծագործությունը մի անգամ էս լսելի է դարձնում ընդմիջտ հույսից ձերբազատված հոգու փոքր-ինչ խլացած ձայնը: Կամ

թերևս ոչինչ էլ լսելի չդարձնի, եթե ստեղծագործողը, հոգնած այս ամենից, որոշի այլ զբաղմունք գտնել: Այսինքն սա նույն բանն է:

Այսպիսով, ես արտուրդ ստեղծագործությունից սպասում եմ այն, ինչ պահանջել եմ մտածողությունից՝ ընդվզում, ազատագրություն և բազմազանություն: Դրանից հետո միայն ի հայտ կգա նրա բովանդակ անօգտակարությունը: Ամենօրյա այս ջանքերով, որոնց շնորհիվ միտքն ու զգացմունքը միախառնվում են, միմյանց նեցուկ լինում, արտուրդ մարդը հայտնագործում է մի ուսմունք, որը դառնում է իր գլխավոր ուժը: Դրա համար անհրաժեշտ ջանքերը, համառությունն ու հեռատեսությունը համազոր են նվաճողի դրույթներին: Ստեղծագործել նշանակում է սեփական ճակատագրին ձև տալ: Գեղարվեստական երկն իր հերոսներին բնորոշում է գոնե այնքան, որքան նրանք են իրեն բնորոշում: Դերասանը մեզ սովորեցրել է, որ ձևացնելու և լինելու միջև սահման գոյություն չունի:

Ուրեմն, կրկնենք: Այս ամենից ոչ մեկը իրական իմաստ չունի: Ազատության այս ճանապարհով դեռ կարելի է առաջ ընթանալ: Ստեղծագործողի և նվաճողի՝ երկու շատ նման ուղեղների վերջին ջանքերն ուղղված են բոլոր գործերից ձերբազատվելուն, ընդունելուն, որ իրենց ձեռք բերածը՝ բռնազավթած տարածք լինի, սեր, թե ստեղծագործություն կարող էր և չլինել: Այսպիսով, նրանք հասնում են անհատի գոյության բացարձակ անօգտակարության գաղափարին: Բայց հենց այս եզրահանգումը նպաստում է, որ նրանք ավելի հեշտ իրականացնեն իրենց հղացումները, ինչպես կյանքի արտուրդության բացահայտումը հնարավորություն է տալիս ողջ էությանը մխրճվել նրա խորքերը:

Մնում է լուկ ճակատագիրը, որի ավարտը կանխորոշված է: Բացի այս միակ անխուսափելիությունից՝ մահից, մնացած ամեն ինչը՝ ուրախություն լինի, թե երջանկություն-ազատագրում է: Աշխարհը, որի միակ տերը մարդն է, մնում է: Մի ժամանակ մարդուն կաշկանդում էր այլ աշխարհի պատրանքը: Մտածողության խնդիրը այլևս ոչ թե ինքնահրաժարումն է, այլ խորհրդանիշերով փոխհագնալը: Մտածողությունը գործում է, ստեղծում առասպելներ, բայց այնպիսի առասպելներ, որոնք ոչ մի խորություն չունեն, բացի իր՝ մտածողության նման անկանգ մարդկային տառապանքից: Ո՛չ, դա զվարճացնող, շլացնող աստվածային առակը չէ, այլ երկրային դեմքերը, շարժումներն ու դրաման, ուր ի մի են բերվում անհեռանկար տվայտանքներ ու մի դժվարին իմաստնություն:

Աստվածները դատապարտել էին Սիզիփոսին անընդհատ լեռան գագաթը բարձրացնել մի ժայռաբեկոր, որտեղից այն ետ էր գլորվում սեփական ծանրության պատճառով: Աստվածները հիմք ունեին կարծելու, որ անօգուտ և անհույս աշխատանքից ծանր պատիժ չի կարող լինել:

Եթե հավատալու լինենք Հոմերոսին, Սիզիփոսը մահկանացուների մեջ ամենախմաստունն ու հեռատեսն էր: Ըստ մի այլ ավանդության, ընդհակառակը, ավազակային կյանքի հակում ուներ: Ես այստեղ հակասություն չեմ տեսնում: Պարզապես տարբեր կարծիքներ կան այն պատճառների շուրջը, որոնք նրան դժոխքի անօգտակար աշխատավոր դարձրին: Սկզբում նրան մեղադրում էին աստվածների նկատմամբ թեթևամիտ վերաբերմունք ունենալու համար: Իբր տարածել էր նրանց գաղտնիքը: Յուպիտերը փախցրել էր Էզինային՝ Աստպոսի դստերը: Հայրն անակնկալի եկավ այդ անհայտացումից, բողոքեց Սիզիփոսին: Վերջինս, որ գիտեր առևանգման մասին, խոստացավ Աստպոսին ամեն կերպ օգնել այն պայմանով, որ նա ջուր տա Կորնոթոսի ամրոցին: Սիզիփոսը ջրի օրհնությունը նախընտրեց երկնային շանթերից, դրա համար էլ դատապարտվեց դժոխային տանջանքների: Հոմերոսը պատմում է նաև, թե ինչպես էր Սիզիփոսը շղթայել Մահը: Պլուտոնը չկարողացավ հանդուրժել իր տիրակալության ամայությունն ու լռությունը, ուղարկեց պատերազմի աստծուն, որը Մահվանը խլեց հաղթողի ձեռքից:

Պատմում են մինչև անգամ, որ մոտալուտ մահն զգալով, Սիզիփոսը անխոհեմաբար ուզեց փորձել կնոջ սերը և հրամայեց մահից հետո իր մարմինը առանց թաղման արարողության շարտել քաղաքային հրապարակը: Շուտով նա հայտնվեց դժոխքում: Եվ այնտեղ, վրդովված կնոջ՝ մարդասիրությանն այնքան խորթ հնազանդությունից, կողակցին պատժելու համար՝ Պլուտոնից երկիր վերադառնալու թույլտվություն ստացավ: Բայց երբ նորից տեսավ այս աշխարհը, վայելեց ջուրն ու արևը, քարերի տաքությունն ու ծովը, չուզեց մտնել ստորգետնյա խավարի դժոխքը: Աստվածների հիշեցումները, գայրույթը, նախազգուշացումները, ոչինչ չօգնեց: Դեռ երկար տարիներ նա ապրեց ծովածոցի ափին՝ ալիքների խշշոցի, հողի ժպիտների մեջ: Աստվածներն ստիպված էին վճռական միջոցների դիմել: Հերմեսը եկավ, բռնեց այդ անհնազանդի օձիքից ու երջանկության գրկից խլելով, քարշ տվեց դժոխք, ուր քարն արդեն պատրաստ էր:

Այսքանը բավական է, որպեսզի հասկանալի դառնա՝ Սիզիփոսը արսուրդ հերոս է: Այդպիսին է նա թե՛ իր ուրախությունների և թե՛ տառապանքների մեջ: Աստվածներին արհամարհելու, մահը ատելու, կյանքը կրքոտ սիրով սիրելու համար նա դատապարտվեց ահավոր տանջանքների՝ ստիպված եղավ զբաղվել մի գործով,

որը վերջ չունի: Ահա՛ երկրային վայելքները սիրելու գինը: Մեզ հայտնի չեն Սիզիփոսի՝ դժոխային կյանքի մանրամասները: Առասպելները ստեղծվում են, որպեսզի բորբոքվեն մեր երևակայությամբ: Ինչ վերաբերում է կոնկրետ Սիզիփոսին, մենք կարող ենք պատկերացնել միայն, թե ինչպես էր մինչև վերջ պրկում մարմինը, որպեսզի բարձրացնի ահռելի քարը, գլորի լեռն ի վեր և հարյուրերորդ անգամ հաղթահարի նույն վերելքը: Մենք անգամ տեսնում ենք նրա ջղաձգված դեմքը, ժայռին հաված այտը, ցեխոտ ծանրությունը պահող ուսը, սայթաքող ոտքը, փոշոտ ափերն ու երկու թևերի խիստ մարդկային ինքնավստահությունը: Այս երկար տառա-պանքը, որ կարող է չափվել միայն աներկյինք անսահմանությամբ ու անսկիզբ-անվերջ ժամանակով, պսակվում է հաջողությամբ: Նա հասնում է իր նպատակին ու տեսնում, թե ինչպես է քարը հաշվված վայրկյաններում գլորվում խորխորատ, որտեղից նորից գագաթ պետք է բարձրացնել: Սիզիփոսը հովիտ է իջնում:

Հենց այս վերադարձի, դադարի պահին է Սիզիփոսը հետաքրքրում ինձ: Քար հրելուց պրկված դեմքը քարացել է արդեն: Ես տեսնում եմ, թե ինչպես է այդ մարդը ծանր, հավասար քայլերով վերադառնում դեպի իր տառապանքը, որը վերջ չունի: Ահա այդ՝ թեթևացած շունչ քաշելու պահը, որը կրկնվելու է, ինչպես իր տառապանքը, ինքնագիտակցության պահն է: Լեռան գագաթից աստվածների բնակատեղին իջնելու յուրաքանչյուր ակնթարթին նա վեր է բարձրանում իր ճակատագրից: Նա իր ժայռից ավելի կարծր է:

Եթե այս առասպելը ողբերգական է, ապա միայն այն պատճառով, որ հերոսը խելամիտ է: Իրոք, ինչ իմաստ կունենար նրա պատիժը, եթե հաջողության հույսից ամեն քայլին գոտեպնդվեր: Մեր օրերի բանվորը ողջ կյանքում աշխատում է նման լարվածությամբ, և նրա ճակատագիրը նվազ աբսուրդ չէ: Բայց ողբերգական է դառնում միայն այն պահերին, երբ ինքը գիտակցում է դա: Սիզիփոսը՝ անգոր ու ըմբոստ, աստվածների պրոլետարը, գիտի իր ծանր վիճակի անելանելիությունը. այդ մասին է նա մտածում ցած իջնելիս: Ողջամտությունը, որ նրան պիտի տառապանք պատճառեր, հաղթանակի է վերափոխվում: Չկա այնպիսի ճակատագիր, որը հնարավոր չլինի հաղթահարել արհամարհանքով:

Եվ այսպես, եթե հովիտ իջնելիս որոշ օրեր նա տխրում է, որոշ օրեր էլ կարող է ուրախ լինել: Սա չափազանցություն չէ: Ես նորից պատկերացնում եմ, թե ինչպես է մոտենում ժայռաբեկորին Սիզիփոսը և ինչ մեծ վիշտ է ապրում: Սակայն երբ երկրային հիշատակները պարուրում են նրան, երբ երջանկության պահանջը անհաղթահարելի է դառնում, պատահում է, որ թախիծը չքանում է մարդու հոգուց, իսկ դա արդեն ժայռի հաղթանակն է, մարդը՝ ինքը ժայռ է: Խորունկ վիշտը դժվար է

տանել: Դրանք մեր Գեթսեմանիի գիշերներն են: Բայց մեզ ճնշող ճշմարտությունները հայտնի դառնալուն պես տարբալուծվում են: Այդպես Էդիպը ինքն էլ չիմանալով սկզբում, համակերպվում էր ճակատագրին: Դժբախտությունն սկսվում է այն պահից, երբ նա հասկանում է դա: Բայց այդ նույն պահին կուրացած ու հուսահատ Էդիպը իմանում է նաև, որ իրեն աշխարհին կապող միակ կապը աղջկա նուրբ ձեռքն է: Հնչում են նրա պաթետիկ բառերը. «Չնայած այդքան փորձություններին, իմ առաջացած տարիքն ու մեծահոգությունն ինձ ստիպում են խոստովանել, որ ամեն ինչ լավ է»: Սոֆոկլեսի Էդիպը, ինչպես նաև Դոստոևսկու Կիրիլովը այսպիսով ստեղծում են աբսուրդ հաղթանակի բանաձևը: Անտիկ իմաստությունը միանում է ժամանակակից հերոսականությանը:

Աբսուրդի բացահայտումը միշտ զուգակցվում է երջանկության ձեռնարկ գրելու գայթակղությանը: «Ի՞նչ, այդքան նեղ արահետ ընտրել...»: Բայց չէ՞ որ միայն մի աշխարհ կա: Երջանկությունն ու աբսուրդը նույն մայր հողի երկու զավակներն են: Նրանք անբաժանելի են իրարից: Մխալ կլիներ, իհարկե, պնդել, թե երջանկությունն առաջանում է աբսուրդի հայտնությունից: Պատահում է, որ աբսուրդի զգացողությունն է երջանկությունից ծնվում: «Ինձ թվում է՝ ամեն ինչ լավ է»,— ասում է Էդիպը: Իրոք սուրբ բառեր են, արձագանքում են մարդկային դաժան ու ինքնամփոփ տիեզերքում: Նրանք մեզ սովորեցնում են, որ ամեն ինչ վերջացած չէ, վերջացած չէր: Նրանք այս աշխարհից վրնդում են Աստծուն, որն իր հետ բերել էր անբավարարվածության և անիմաստ տառապանքի զգացում: Այդ բառերը ճակատագրի ղեկը հանձնում են մարդուն, նրան ստիպում տնօրինել:

Միզիփոսի լուռ երջանկության պատճառը հենց դա է: Իր ճակատագիրն իրեն է պատկանում: Իր գործն իր քարն է: Ճիշտ այդպես աբսուրդ մարդը մտասնեռվելով իր տառապանքների վրա, բոլոր կուռքերին ստիպում է սկզբել: Եվ ահա, տիեզերքում, ուր անսպասելիորեն լուրջություն էր հաստատվել, լսվում են հազարավոր նուրբ, հիասքանչ երկրային ձայներ: Այս տարերային և խորհրդավոր կանչերը, բոլոր հրահրող դեմքերը հակառակ իմաստ ունեն և հաղթանակի արժեք են ստանում: Առանց սովերի արև չկա, գիշերվա գոյությունն էլ պետք է ընդունել: Աբսուրդ մարդն ասում է՝ այո՛, և նրա եռանդն անսպառ է դառնում: Գոյություն ունի անձնական և ոչ թե ի վերուստ կառավարվող ճակատագիր, կամ ծայրահեղ դեպքում կա միայն մի ճակատագիր, որը աբսուրդ մարդը համարում է անհուսալի ու արհամարհելի: Մնացած բոլոր դեպքերում նա զգում է, որ ինքն է իր օրերի տերը: Ահա այդ ակնթարթային պահերին, երբ մարդը հետադարձ հայացք է նետում ապրած կյանքի վրա, Միզիփոսը վերադառնալով դեպի իր քարը՝ տարվում է ճակատագիր դարձած

անկապ դեպքերի հաջորդականությամբ, որ ինքն է ստեղծել, ի մի բերել հիշողությամբ, ամրապնդել մոտակա մահով: Եվ այսպես, ընդունելով այն ամենի մարդկային լինելը, ինչը մարդկային ծագում ունի, տեսնել ուզող և գիշերվա անվերջ լինելն իմացող կույրը՝ Սիզիփոսը, շարունակում է քայլել: Ժայռը դեռ գլորվում է:

Ես թողնում եմ Սիզիփոսին լեռան ստորոտում: Ամեն մարդ ունի իր ժայռը: Բայց Սիզիփոսը սովորեցնում է գերագույն հավատարմություն, որը ժխտում է աստվածներին ու ժայռեր է բարձրացնում: Նրան նույնպես թվում է, թե ամեն ինչ լավ է: Այս, առանց գերագույն տիրոջ մնացած տիեզերքը նրան չի թվում ո՛չ ամուլ, ո՛չ էլ ճղճիմ: Քարի յուրաքանչյուր փշուրը, կեսգիշերային լեռան վրա փայլատակող յուրաքանչյուր հանքաբեկորը ինքնին աշխարհներ են ստեղծում: Հենց միայն գագաթներ նվաճելու համար թափված ջանքերը բավական են, որ լցնեն մարդու սիրտը: Սիզիփոսին պետք է պատկերացնել երջանիկ: